


316

80

8-82
U-65

1996

201



0227-13 | 12 38
~~886 - 8 / 5 78~~
0%88 — 9/11 3812.

2011

2003

ԽՍ
1103

8-82
Ա-65

Այ

№ 9203.

ԱՅՆԱՐՀԻ

ԱՄԵՆԱԳԵՂԵՑԻԿ

ԳԻՐՔԸ



Տպարան „ՃԻՐԱԿԻ“ Ալեքսանդրապոլ

1906

(49)

19

Հ Ա Յ Ա Վ Ա Ր Ա Ր Ա Ր Ա Ր

Եղիսաբէտ ՍՄԵՆՎԳԵՊԵՑԻԿ ԴԻՐՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆՈՅ ԵԽՐՈՊԱՑԻ ԵՒ ԱՍԻԱՑԻ ԱՄԵ-
ՆԱՑԱՑՑՆԻ ՄԱՏԵՆԱԳԻՐՆԵՐԻ ԱՄԵՆԱԼԱՄ
ԴՈՐԺԵՐԻ



ՀԵՏՈՒԹՅՈՒՆ 26 ԶԵՆԵՋՈՆ ԸՆԴԵՐԻ ԳՐԵԿԵ-
ՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Կ Ո Զ Մ Ե Ց
ԱՐՄԵՆՈՒ ԱՐԱՄԵՆՈՒ

Ց Ո Ւ Ց Ա Կ

«Ազիւլըզի ԱՄԵՆԱԳԵՂԵՑԻԿ ԳՐՔՈՒՄ»

ԲՈՎԵՆԴԱԿՈՒՅԹ ՀԵՏՈՒԾԻՆԵՐԻ

| ՀԵՂԻՆԱԿ | ԱԶԳՈՒԹԻՒՆՆ | ԴՐՈՒՅՃԱՔ |
|--------------|-------------|--------------------|
| ԴԱՆՏԵ | ԽՏԱԼԻԱԳԻ | ԳՃՈՒՔԸ |
| ՕՍՈՒԱՆ | ՍԿՈՎՏԻԱԳԻ | ՄԻԱՅՆՈՄԺԻՆ |
| ՃԵՅՔՄՊԻՐ | Ա.ՆԳԻԻԱԳԻ | ՎՀԱԼԿՆԵՐԻ ԹԵՍԱՐԱՆ |
| ԳԵՕՏԵ | ԳԵՐՄԱՆԱԳԻ | ԵՆԹԱՆԻ ԹՎԱԳԱւԱՐԸ |
| ՎԻԿՏՈՐ ՀԻՒԳՈ | ՖԻՐԱՆԱԳԻ | ՆԱՊՈՒՅՆ Բ. |
| ՄԻՅՔԻԵՎԻՀ | ԼԻՒԱԳԻ | ՓԱՐԵԽՍ |
| ՓԱՄՈՒԵՆ | ՊՈՐՏՈՎԱԼՈՂԻ | ՄՐՐԻԿՆԵՐԻ ԱՊԻՆ |
| ԼԵՐՄՈՒՆՑՈՎ | ՌՈՒՍ | ԳԻ |
| ՄՈՒՐ | ԻՌԱՆՏԱԳԻ | ԵՐԵԿՈՋԵԱՆ ՊԱՆԿԵՐ |
| ՎԵՐԱՎՐԱՆ | ԲԵԼՋԻԱԳԻ | ՍԵՐ |
| ՀԵԼԴԻԲՈՒՆԴ | ՀՈԼԱՆԴԱԳԻ | ՕՐԱԳՐԻ ՃՈՎ |
| ՍԻԿՓՈՒԶՈՆ | ՆՎԵՏԱԳԻ | ԵՀՄԱՐՀԻ ԱՄԵԴՈՒՄ |
| Լ.ՕՏԲՐՈՔ | ԳՎԵՒՄԱՐՔԱԳԻ | ԶԻՆՈՒՐԻ ՄԱՀԸ |
| — | ԲՈՒԵՄԻԱԳԻ | ՊԱՏԵՐԱՂՃԻ ՔԱյլերգ |
| ԱԿԲՈՒՆԹԵՍ | ՍԱՊԱՆԻԱԳԻ | ԴՈՆ ՔԻՉԱԹ |
| ՀԱՄԵՐՈՍ | ՅՈՒՆ | ՀԵԼՄՈՐԻ հըաժեշտը |
| ՎԻԲԴԻԼԻՈՍ | ՀՈՎԱՅԵԳԻ | ՏՐՈՂԻԱՅԻ Կողծանում |

6752-57
4

Մ Ա Ս Ն Բ.

Ա Ս Ի Ա Կ Ա Ն Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն

| | | |
|-----------|-----------|-------------------------------|
| ՅՈՒ | ԵՐԵՎԱՆԵցի | ԱՆԷԺՔ |
| ՔԱԼԻԴՐԱԾԱ | ՀԵղիկ | Պատգամարել ամպը |
| ԷՔՐԵՄ—ՊԵՅ | ԹՈՒՐԵ | ՑԻՇԻՐ ինձ |
| ԷՐԻՍԹԱԼ | ՎՐԱՋԻ | ՄԱՅԻՍԻ գիշեր |
| ԹԱՆՔՖԵՐՈ | ԵՎԱՊՈԽԱՋԻ | Պէքասները |
| ԵՓՐԵՄ | ԱՍՈՐԻ | Պարահանդէսը |
| — | ԱՐԱԲԱՋԻ | ԳԻՇԵՐ |
| ՎՅՐՈՒԺԱՆ | ՀԱՅ | ԿԱՌԻ երթ |
| ՖԻՐԴՈՒՍԻ | ՊԱՐԱԺԻ | ՀՕՐ մենամարտը իր Որդու հետ |

Յ Ա Թ Ա Զ Ա Բ Ա Ն

Ահա ծագում է, կաւկասի համար մի նոր Արշա-
լոյս, մի նոր Դարագլուխ...:

Իմ բոլոր հայրենակիցների հետ՝ ևս սարսապով
ևմ ողջունում նրան:

Ամէն հայ պէտք է զգայ իր խղճմտանքի վերայ
մի նոր ծանր պարտականութիւն, վերածնութեան սուրբ
գործին մասնակցելու:

Պարտազանց չինելու համար՝ ձեռնարկեցի այս
աշխատանքին, ուր հաւաքուած են մարդկային մտքի
լաւագոյն արտադրութիւնները, սրանից գուրս էլ կամ
ամբաւ գանձեր, բայց անհատական ոյժը որքան էլ մհծ
լինի, չի կարող մարդկային հաւաքական գործունէու-
թեան հետ մրցել:

Այս գիրքը օկտակար եմ համարում, և հայ ըն-
տանիքներին, և հայ գալրոցներին, և մանուկ և զարգա-
ցած անհատներին:

Զարդացած անհատը կ'ունենայ իր սենեկում՝

1º Մի սիրական գիրք, աշխարհի լաւագոյն հեղինակ-
ներից խմբագրուած, և լի հոգեկան բարձր վայելքնե-
րով. աշխատանքի ժամերից յետոյ այնտեղ զրօսանք
պիտի գտնի, վշտերից յետոյ՝ սփոփանք, և կարող է իր

տրամագրութիւնների համեմատ մի ընթերցմունք զլտանել այսանդ:

2^o Գեղեցիկը ազնուացնում է սիրոն և պացմունքը. ընթերցողի սենեակը մի կերպ զպրոց պիտի լինի հոգեկան բարութեան և քնքութեան:

3^o Ներկայ պայմաններում ամէն ոք պատեհութիւնը կ'ունենայ համորդութիւն, զրուցելու, ապրելու հեռաւոր երկրների որդիներին հետ:

Նիւթական կեանքի հանգամանքները պահանջում են գաղափարների հաղորդակցութիւն, իսկ գաղափարների հաղորդակցութիւնն էլ պահանջում է լայն գառտիարակութիւն:

Աշխարհի ամենագեղեցիկ գրքի ընթերցողը կարող կը լինի այլազգիների հետ խօսել քիչ թէ շատ գրականութեան վերայ, զլուխ գործոցներ յիշատակել և գտնել մի նոր առիթ ընդարձակելու իր ծանօթութիւններին:

4^o Ամենագեղեցիկ իրերի հետ ծանօթանալով, հայ անհատ ոք բարոյական դաս կը ստանայ ստեղծելու մի ինչ որ վեհ, կատարեալ բան, ոչ եթէ ներողամիտ լինել դեպի իր մաքի չնչին ծնունդներ:

Այս գործից յուսացել ենք մենք և հասարակական օգուտներ: Ազգը բաղադրուած է անհատներից, կամհնում էք մեր ժողովուրդը մի բարոյական բարձրութեան վերայ կանգնեցնել. ազնուացը էք անհատներին: Հէնց այն պատճառով որ այս գիրքը օգտակար է անհատներին, օգտակար է և ամբողջ ժողովրդին:

Բացի այս, հայ զպրոցների համար մանաւանդ նա մի բարերար կը լինի, որովհետեւ

1^o Հայ մահուկները հայերէնում դահնելով սքանչելի գեղեցկութիւններ, չեն բռնագատուի օտար գրքերի դիմերու, և հայ լեզուի սէրը կարծարծուի նրանց վառվուն սրտերում:

2^o Փուչ զրուածքների փոխարէն, որ, իրանց նորութեան պատճառովը մենակ մի հետաքրքիր բնաւորութիւն են ստանում, կընտանենան նրանք առաջնակարգ զրուածքների հետ:

3^o Նրանք կը ծանօթանան օտար ազգերի գրական արտագրութիւնների ոչ եթէ անունների հետ միայն, այլ ուղղակի նրանց հրաշալիքների հետ:

4^o Ամէն մի հայ աշակերտ կունենայ իր մօտ մի գիրք, որը կարող պիտի լինի գտնել զործնական գառներ ձաշակի, ոճի և զանազանել ազգերի, հեղինակների հատուածքները:

5^o Այս գործը ինքնին հետաքրքիր լինելով, կը լինի հայ մանուկների համար ընթերցասիրութեան մի գըրգիու: Նրանք ըթունքները մեզը բաժակի վերայ զնելուց յետոյ, պիտի ցանկանան մինչև յատակը նրան դատարկել:

*

Էպօպէա, լեյթիք, պօեզիա, և այլ օտար բառերի փոխարէն, որ մեզ կաւկասահայերիս սովորական են դառել, զործածում ենք ուղիղ հայերէն բառեր (դիւցազներգութիւն, քնարական, բանաստեղծութիւն, և այլն):

Հատուածները թարգմանել ենք մեծաւ մասամբ ֆրանսերէնից և գերմաներէնից, և արձակ ձեռվ, երուակական մի որ և է լեզուով գոյութիւն չունի մի հատա-

քածոյ ճիշտ այն ձևով, որով մենք կաղմել ենք սրան.
Հետևապէս քիչ աշխատանք չէր հարկաւոր դլոյխ—զորւ
ծոց հատուածներին գտնելու, ընտրելու և արեմտեան
բարբառի փոխադրելու համար:

Ո՞րքան կը ցանկանայի ունենալ մի աներեւյթ
գեր, հայ սրտերի ազնուացման, գրական ճաշտկի նըր-
բացման, ազգային յառաջադիմութեան լուսաւոր և
սուրբ գործում:

X
— 16 — 1906 ԺԸՆԿՎ:

ԱՐՄԵՆԱԿ ԱՐԱՄԵԱՆ



Դ Ժ Ո Խ Փ Ի Դ Ո Ւ Ա Լ

ԴԺՈՒԽՔԻ ԴՈՒՌԸ

Դանտէ Ալիգիէրի, իստալացի բանաստեղծներից ամենամեծը, և համազգային գրականութեան հսկաներից մէկը, ծնուել է 1265-ին իստալիայի Ֆլորէնցա քաղաքում, և վախճանուել 1321-ին:

Նա գրել է Աստուածային կատակերգութիւնը, ուր պատմում է իր ուղևորութիւնը երկրագնուից դէպի Դժոխք, Դժոխքից Քաւարան, Քաւարանից Արքայութիւն, ուր տեսնում է իր նշանած աղջկան, Պետրիչին, որ մեռել էր ծաղիկ հասակում: Վիրագիլիոն, հռոմայեցի բանաստեղծը, երեսում է Դանտէի և նրան առաջնորդում դէպի Դժոխք, որի դուռը այսպէս նկարագրում է Դանտէն:



«Ինձանից մտնում էք ցաւատանջ քաղաքը,
Ինձանից մտնում էք յաւիտենական ցաւի մէջ.
Ինձանից գնում էք գէպի կորած մարդկութիւնը:

Արդարութիւնը գրգեց իմ բարձր ստեղծողը,
Ինձ հիմնեց աստուածային զօրութիւնը.
Գերագոյն իմաստութիւնը և յաւիտենական սէրը:

Ինձանից առաջ սչինչ չէ ստեղծուել,
Որ չինի յաւիտենական, ես ինքս էլ կը տեեմ յաւիտեանս.

Թողէք ամէն յոյս, ով Դիոք, որ մտնում էք:

Այս բառերին, մութ գոյնով:
Նկատեցի գրուած մի գրան վերե.
Ասացի. «Վարպետ, սարսափում իմ նրանց իմաստից:

Եւ նա, որպէս խոհեմ անձ.

«Այստեղ պէտք է թողնել ամէն կասկած.

Ամէն ինչ որ անարգ է՝ պէտք է այստեղ մեռնի:»

Այժմ հասել ենք այստեղ, ուր ինչպէս քեզ ասել եմ,
Պիտի տեսնես ցաւատանջ մարտիկներ,
Որ կորցրել են բանականութեան բարիքը»:

Եւ յետոյ երբ նա իր ձեռքը միացրեց իո՞ւ ձեռքերիս,
Մի այնպիսի գուարթ դէմքով, որ քաջակերուեցի,
Մացրեց ինձ գաղտնիքների խորը,

Այստեղ հառաջներ, բարձրաձայն ողբեր, վայեր,
Հնչում էին անաստղ եթերում.
Այնպէս որ՝ սկզբում ես լացի:

Զանազան բարբառներ, սարսափելի բառեր,
Յաւի խօսքեր, զայրոյթի շեշտեր,
Բարձր և նուազ ձայներ, ձեռքերի ձայն՝ նրանց հետ—

Կազմում էին մի ազմուկ, որ միշտ պտտում է
—Այդ երկնքում, առանց ժամանակի ներկուած—
Որպէս աւազներ՝ փոթորկից յուղուած:

Եւ խոր զգում էի իմ զրոխը սարսափից պատուած.
Ասացի. «Վարպետ, ի՞նչ է այդ՝ որ լսում եմ.
Ովքի՞ր են դրանք, որ թւում են ցաւից այնքան
պարտուած:

Եւ նա ինձ. «Այս թշուառ վիճակն ունեն
Տիուր հոգիները նրանց՝
Որ ապրեցան առանց վաս համբաւի և առանց գու-
գեստի:

Խառնուել են չար խմբին—
Այն հրեշտակներին, որ ապստամբ չեն եղել,
Աչ էլ հաւատաբիմ Աստղծուն, բայց իրանց կարծի-
քով եղան:

Նրանց հալածեց երկինքը, որպէսողի մի գուցէ նուազ
գեղեցիկ լինի.
Ասր դժոխքն էլ նբանց չի լնդունաւմ,
Որպէսողի մի գուցէ եղենագործները նրանցից մի
քիչ փառք ունենան:

Եւ էլ «Վարպետ, ի՞նչ կայ էղբան ծանր
Նրանց վերայ, որ էղպէս լացուկու են անում.
Պատասխանեց. «Բեզ կ'ասեմ չատ համառօտ:

Դրանք մահւան յոյս չունեն.
Եւ իրանց կոյք կեանքը այնքան ցածը է,
Որ հասիստնձում են մի այլ ու է վիճակի:

Նրանց համբաւը՝ զեռ տեռում է աշխարհում.
Ողորմութիւնն և արդարութիւնը՝ արհամարհում են
նրանց.
Զիօսենք զրանց մասին, այլ մենակ նայիր և անց
կաց:

Եւ երբ նայեցի, նկատեցի մի զրոշակ,
Որ պտոյտ գործելով շրջը ջւում էր այնքան արագ,
Որ ինձ անարժան էր թւում՝ ու է դադարման:

Եւ նրա ետևից շարք շարք գալիս էին
Մարդիկներ, այնքան շատ՝ որ ևս չեմ կարծում
թէ մահը տարած կը լինի երբէք այդքան բազմու-
թին:

Յետոյ ևս ճանաչեցի նրանցից մին.
Տեսայ և ճանաչեցի ստուերը նրան՝
Որ վատութեամբ մեծ մերժումն արաւ:

Իսկոյն և եթ իմացայ և հաւաստեցի
թէ դա այն չարերի ազանդն էր,
Որ անհաճոյ եղան և Աստուծոյ և նրա թշնամի-
ներին:

Այս ողորմելիները որ կենդանի չեղան,
Մերկ էին, և խայթուած
Պիծակներից և շանաձաններից որ լցուած էին
այնտեղ:



ԳՐԱԴԱՐԱՆ ՆԵՐԱՎԱՐԸ

Եւ երբ սկսեցի նայել գէպի հեռուն,
Տեսայ մարդիկների բազմութիւն՝ մի մեծ գետի
ափունքին վերայ.
Հետեապէս ասացի. «Վարպետ, չնորհք արա ինձ
ասել,

Ովքէր են զրանք, և ի՞նչ պատճառի համար
Այնքան պատրաստ են թւում միւս ափը անցնելու.
Որպէս ազօտ լոյսը ցոյց է տալիս ինձ»:

Եւ նա ինձ. «Բեղ պիտի պատմեմ իրազութիւնը,
Երբ մեր քայլերը կանգ տանեն
Ախելոնի գետափին վերայ»:

Այն ժամանակ ամօթահար և խնարհած աչքերով,
Վախելով որ մի գուցէ իմ խօսքը՝ նրան ծանր
թռացած լինի,
Զգոյշ կացի խօսելուց՝ մինչև գետափ:

Եւ ահա գալիս էր գէպի մեղ նաւի վերայ կանդնած,
Մի ծերունի ալեզարդ
Գոչելով. «Վայ ձեզ, ով չար ոգիներ:

625 2-57

Մի յուսացէք այսուհետ տեսնել երկինքը,
Գալիս եմ ձեզ միւս ափը տանելու,
Դէպի յաւիտենական խաւարը՝ ջերմը, և սառոյցը:

Եւ դու որ կանգնած ես այդտեղ, կենդանի հոգի,
Բաժանուիր սրանցից որ մեռել են»¹
Բայց երբ նա նկատեց որ ես չէի մեկնում.

Ասաց. «Ուրիշ ճանապարհով, ուրիշ նաւահանգիստ-
ներով
Պէտք է դաս ծովափը, եթէ ոչ այստեղ անց կենա-
լու համար,
Պէտք է, որ քեզ կրի մի աւելի թեթև նաւ:

Եւ առաջնորդը նրան, «Քարոն, մի զայրանայ,
Այսպէս է կամենում նա, որ կարող է անել
Այն՝ ինչ որ կամենում է, աւելի բան մի հարցանի:

Տժգոյն ճախճախուտի նաւավարին,
Որի աչերի չուրջ բոցեղին անիներ վառվում էին,
Աւելարդ կերպարանքը խաղաղուեց:

Բայց այդ հոգիները, որ մերկ էին և խոնջած,
Այլագունուեցին և կրծտեցին իրանց ատամներին,
Այն ինչ լսեցին նրա անգութ խօսքերը:

Հայնոյում էին Աստծուն և իրանց ծնողներին,
Մարդկային սեռին, տեղին, ժամանակին և սերմին,
Որով յղացուել ու ծնուել էին:

Յետոյ բոլորեքեան միասին տարուեցին
Բարձրաձայն լացուկոծով դէպի այն ափը,
Որ սպանում է ամէն մարդու, որ երկիւղ չունի
Աստծուց:

Քարոն գեր հրեղէն բիբերով
Ակնարկելով, հաւաքում է նրանց,
Եւ իր թիակովը հարուածում դանդաղողներին:

Որպէս աշնան եղանակին, թափթփում են տերեները
Մինը միւսի ետեկից, մինչեւ որ ճիւղը
Իր բոլոր զարդերին տեսնում է գետնի վերայ:

Այսպէս և Աղամայ չար սերմը,
Նետուում են այդ ծովափից մի առ մի
Նրա ակնարկի վերայ, որպէս թոշունը՝ երբ յետ է
կանչուում:

Այսպէս գնում են նրանք՝ կտրելով թխակոյն կոհակ-
ներ,
Եւ նաւից վայր իջնելոց առաջ,
Այստեղ էլ նրանց մի նոր գունդ է միանում

«Որդեակ իմ, ասաց իմ աղնիւ ուսուցիչը,
Նրանք որ Աստծու բարկութեան մէջն են մեռնում,
Բոլորեքեան էլ, ամէն երկրից, հաւաքում են այս-
տեղ:

Նրանք պատրաստ են գետից անց կենալու,
Որովհետեւ աստուածային արդարութիւնը այնպէս
խարազանում է նրանց,
Որ երկիւղը փոխում է փափագի:

Այստեղից անց չէ կենում մի բարի հոգի.
Սակայն, եթէ Քարոնը տրանջում է քո մասին,
Կարող ես գուշակել՝ որ նա կը կնում է իր սովորա-
կան խօսքերը»:

Երբ այս վերջացաւ, մութ գաշտը
Այնքան ուժգին ցնցուեց, որ սարսափից՝
Իմ միտքը դեռ թրջում է ինձ քրտինքով:

Արտասուզ հողը՝ մի հողմ արձակեց.
Սա փայլակեց մի կարմիր լոյս՝
Որ յաղթեց իմ մէջ ամէն զգացման:

Եւ ես վայր ընկայ՝ որպէս մի մարդ, որ յաղթում
է քնից:

Դըեց ԴԱՆՑԸ Խառլիացի

ՄԻԱՅՆԱՌԻԹԻՒՆԸ

Բ.

Սկովտիացիների փոքրիկ ժողովուրդը՝ մի մեծ
բանաստեղծ է ընծայել աշխարհի:

Նա կոչում էր Օսմիան, ապրում էր Քրիստոսից
300 տարի յետոյ. Դիւցազն է եղել և երգիչ, քաջու-
թիւններ է արել, և նրանց իր քնարովը անմահացրել:
Նա, որպէս Հոմերոսը, կոյր է եղել իր կեանքին վեր-
ջին տարիներում:

Նա իր դիւցազներգութիւնը գրի չէ առել բայց
Սկովտիացի ժողովուրդը բերանացի գիտէր նրան և
Մակրէրսն անզլիացուն յաջողուեց հաւաքել ժողովըր-
դական երգերին և աւերակներից հրաշակերտը վերա-
կանգնել:

Միայնուքի նր առնուած է Սելմայի գրուագից, և
Օսմիանի ամենալաւ երգերիցն է:

ՄԻԱՅՆՈՒԹԻՒՆԸ

Ո՞վ սպիտակ աստղ, պայծառ աչք գիշերուայ,
փայլվլուն աղամանդ՝ վերջալոյսի կապոյտ ճակատին
վերայ, ի՞նչ ես դիտում հովտին մէջ:

Դագարուել են օրուայ աղմուկները, հողմերը լոել
են, թւում է մեղմանալ և հեղեղին արձագանգը. կո-
հակները հարթուած, սողալով սահում են ժայռերի
սարրոտից. ճանձերը թոշտում են իրիկուայ անոյշ լոյ-
րերի մէջ, և օդի լոռութիւնը լցուում է ըզզիւննելով:
Պլպլան աստղ, ի՞նչ ես դիտում գիշերուայ մէջ...



Բայց քո անուշակ լոյսը հակւում է դեպի հորիզոնը... ծովի կոհակները ձեղբւում են, չըեղ ընդունելու և թրջելու համար, ովք երկնքի աղջիկ, քո արծաթեայ ծամերին...

Բարով մնաս, ով լուռ աստղ, քո տեղ թող իմ հանձարը վասի...

Գիշեր է...

Մենակ եմ ես բլրան վերայ: Դիզւում են փոթորկի ամպերը. լուռմ եմ, լերան կողերում, հողմերի մոնչիւնը: Հեղեղը անձրեսվ ուռած, գոռում գահավիժւում է քարածայուց դէպի անդունդ:

Զկայ ինձ ապաւէն:

Աւաղ, միայնակ եմ, լքուած ամէնքից:

Ե՛ւ լուսնեակ, ջան գիշերների, Ե՛ւ սարերի ծուցից: Սպիտակ աստղեր, պէճնեցէք երկնքի քօղը: Մի բարերար լոյս պիտի չառաջնորդէ ինձ դէպի այնտեղ, ուր գտնւում է իմ սիրելին:

Ո՛ գիտէ, թերես նա, որսից խոնջած, հանգչում է ամայութեան մէջ. իր կողքին կանգնած է թուլացած ուղեղը, և նրան շրջապատել են չնչասպառ հացող չները:

Ստիպուել իմ ուրեմն, տւաղ, գիշերը այստեղ անցկացնել, այն բլրան վերայ, անտէր ու լքուած:

Շարունակւում է հեղեղների գոռումը, հողմերի մոնչիւնը. խափանում են նրանք իմ սիրելուս ձայնը:

Ինչի՞ իմ հաւատարիմ՝ Սալգարը այսքան յապացում է և գրժում իր խոստման: Ահա ժայռը, ահա այն ծառն և վտակը, որոնց մօտ գու խոստացար ձին վերադառնալ գիշերուայ գալուց առաջ:

Ո՞ւր ես մնացել, իմ գիղեցիկ Սալգար:

Յո պատճառով թողի ես իմ եղրօրը, քո պատճառով փախայ ես հօրս տնից:

Վաղուց մեր ընտանիքները դիւշման են միմեանց, բայց մենք, սիրելի, մենք դիւշման չենք միմեանց:

Հողմեր, գաղրեցրէք ձեր մոնչիւններին: Հեղեղները, լուռ կացէք, մի խափանէք սիրելուս ձայնը:

Սալգար, Սալգար, ես եմ կանչում քեզ։ Սալգար,
այստեղ է ծառը, այստեղ է ժայռը, Կոլմա սպասում է
քեզ, ինչու չես գալիս,

Ա՛հ, լուսնեակը երեսում է վերջապէս. ահա ձորի
մէջ կարկաջում է վտակիկը, երեսում են ժայռերի գոր-
շագոյն կատարները, բայց ես նրանց վերայ չեմ տես-
նում իմ սիրելուն։

Չեմ տեսնում իր չները, որ նրանից առաջ ար-
շաւում էին։ Աւաղ պէտք է ինձ այստեղ մնալ, միայ-
նակ……

Բայց ովքեր են դրանք որոնց տեսնում եմ զա-
լար խոտին վերայ ընկողմանած։ Մի գուցէ իմ եղբայ-
րը և իմ սիրականը լինին։
Խօսեցէք սիրելիներ։

Նրանք չեն պատասխանում։ Հոգիս ալեկոծւում է
սարսափով։ Ա՛հ, մեռած են նրանք։ Նրանց դաշոյննե-
րը՝ արիւնով են ներկուած։

Ա՛հ, եղբայրս, եղբայրս, ինչի՞ իմ սիրելուն սպա-
նեցիր։ Սալգար, ինչի՞ սպանեցիր իմ եղբօրը։ Այն-
քան սիրում էի երկուսիդ էլ։

Ի՞նչ գովք ասեմ ձեր վերայ։
Սալգար, զու ամենից գեղեցիկն էիր բլրան վրայ
բնակողների մէջ։
Եղբայր, զու մահուան բազուկն էիր պատերազմ-
ների մէջ։

Ա՛հ, սիրելիներ, խօսեցէք ինձ, լսեցէք իմ ձայ-
նը… բայց, աւաղ, լուս են նրանք, լսել են ընդմիշտ…
նրանց սրտերը սառել են, և էլ չեն բարախում ձեռ-
քերիս ներքոյ։

Ո՞վ սիրելի ստուերներ, պատասխան տուէք ինձ,
ձեր քարաժայուրի բարձունքից, ձեր սարերի բարձուն-
քից։ մի վախեցէք ինձ սարսափեցնելուց։ Ո՞ւր գնա-
ցիք հանգչելու։ Ո՞ր քարանձաւում կարելի պիտի լինի
ինձ՝ ձեզ գտնել։

Չեմ լսում նրանց ձայնը հոգմերի մէջ. արձա-
գանքը և եթ կրկնում է իմ ողբը՝ փոթորիկների թողած-
լուութեանը մէջ։

Նստել եմ, բոլորովին միայնակ, իմ ցաւիս հետ,
և սպասում արտասուող առաւօտին։

Բարձրացրէք նրանց շիրիմը, ով գուք, որ մե-
ռելների բարեկամներն էք, բայց մի փակէք այդ շիրի-
մին՝ իմ այնտեղ մանելուց առաջ։

Իմ կեանքը ցնդեցաւ որպէս երազ:
Նբանցից յետոյ ևս ինչի՞ ապրիմ: Ցանկանում եմ
հանգչել իմ սիրելիների մօտ՝ ժայռից զլորւող ազրիւ-
րի ափին:

Երբ գիշերը բլուրներին քօղարկէ, հողմերի թե-
ւերով պիտի գամ այստեղ՝ լալու իմ սիրելիների մա-
հուան վերայ. իր խեղճուկ խրճից որսորդը պիտի
լոէ իմ ձայնը, որ տիսուր պիտի թուի նբան. իմ անոյշ-
քնիոյշ ողբը պիտի զարթեցնի նրա գութը, երբ ևս
լամ երկու հերոսներին՝ որոնց սիրում էի:

Դրեց ՕՍՍԻԸՆ, Մկովտիացի

ՎՀՈՒԿՆԵՐԻ ՏԵՍԱՐԱՆ

Գ.

Վիլիամ Շեքսպիր, որ համարւում է աշխարհի
ամենամեծ բանաստեղծը, անդիւցի էր. ծնուել է
1564-ին, վախճանուել 1616-ին:

Նա գրել է 36 թատրերգութիւններ (գնամներ).
Զիւլիեսսա եւ Ռոմեօ, Մակբեր, Համլետ, Լիր, Օքելո,
ևալլի:

Շեքսպիրի գործերում վսեմն և ծալրաշարժը,
տիսուրն և զուարթը խառնւում են միմեանց հետ. նա
չէ ճանաչում այլ կանոն բացի իւր հանճարից: Բացի
վհակների տեսարանից հրաշալիք են Շեքսպիրի գործե-
րում՝ Համլեթի մենախօսութիւնը Լինե՞լ թէ չինել,
Գերեզմանափուերի տեսարանը, ուր երեք մարդ փո-
րում են գերեզմանը, և գանկերի հանդիպելով, նրանց
նետում գէպի վեր, մարդկային ունայնութեանց վերայ
զբացելով հային: Վհուկների տեսարանը վերցրած է
Մակբերից:



ՎՀՈՒԿՆԵՐԻ ՏԵՍԱՐԱՆԸ

(Բարձրանում է թատրոնի վարագոյրը. տեսնուոմ
է խորը՝ մի դաշտ և մի անտառ. անձրե, կայծակ,
փայլակ, որոսում:

Երեք վհուկներ մտնում են, և լուռ յառաջ դա-
լիս):

Յ Ո Յ Տ Կ Ն Վ Հ Ո Ւ Կ

Ե՞րբ երեքս նորից պիտի հանդիպենք միմեանց:
Որոսման, փայլակի, թէ անձրեկի՞ մէջ:

Բ. Վ. Էնկ — Երբ աղմուկը դադարի, պատերազմը
վերջանայ պարտութեամբ կամ յաղթու-
թեամբ:

Գ. Վհուկ. Արեի մայր մտնելուց առաջ՝ բաղդը վճ-
ռուած կը լինի:

Ա. Վիուկ. Եւ հեր:
Բ. Վիուկ. Այս մացաների մօտ:
Գ. Վիուկ. Ես կը գնամ Մակըթին ընդառաջ:

(Հեռուից լսում է մի ձայն որ կանչում է երեք
վհուկներին).

Ա. Վիուկ. Կը գամ, կը գամ, կրիմալքին:
Բ. Վիուկ. Փէտօքը մեղ կանչում է:
Երեք վիուկները. (միաբերան). Գեղեցիկը ահոելի է, և
ահոելին՝ գեղեցիկ: Թուչէնք այս մասախու-
զի կոյտերի վերայ:

(Երեք վհուկները լարձրանում են և անհետ լի-
նում):

ՏԵՍԻԼ ՉԱՐՌՈՐԴ

(Դաշտ, անտառ, ծովեղերքի մօտ. կայծակ, փայ-
լակ, որոսում, լսում են հեռուն թմբուկի և փողերի
ձայներ. երեք վհուկները երեսում են).

Ա. Վիուկ. Թմբուկներ, թմբուկներ: Մակըթը գալիս է:
Երեք վիուկները (ձեռք ձեռքի տալիս են միմեանց եր-
գելով ու պարելով).

Այսպէս սկ քոյլերը, սուբանդակ ցամաքի և ծո-
վերին, ձեռք ձեռքի տուած բոլորածն պարուժ են.
Երեք ըլջան ինձ համար, երեք ըլջան քեզ համար, և
երեք էլ իննը ըլջանակները ամրողացնելու համար:
Բաւական է. կախարդանքը կատարուեց:

ՏԵՍԻԼ ՀԻՆԳԵՐՈՐԴ

(ՄԱԿԲԵԹ և ԲԱՆՔՈՅՑ, սկսվախացի երկու մեծ
զօլավարները մանում են իրանց սպաների և զին-
ւորների հետ):

ՄԱԿԲԵԹ. Երբէք չեմ աեսկ այսպիսի ահոելի և այս-
պիսի գեղեցիկ օր:

ԲԱՆՔՈՅՑ. Ո՞վքան հեռի է այսակղից ֆօրիսլ:—Բայց
ի՞նչ եմ աեսնում:

Ո՞վքեր են այդ տարօրինակ արարածները, թառա-
մած երեսներով, վայրենի հագուստով:

Նըանք չեն նմանում երկրի բնակիչներին, և սա-
կայն մեղ նման ման են գալիս:

(Դառնալով երեք վհուկներին):

Թուի գուք հասկանում էք ինձ. կենդանի էակներ
եք գուք, և կարող էք պատասխանել մի մարդու տուած
հարցերին:

Տեսնում եմ որ դուք ձեր վախտ մատերը դնում
էք ձեր ամպոյն և կնճռոտած ըթունքների վրայ:

Դուք կիներ պիտի երկայիք ինձ, եթէ ձեր ծնօտ-
ների վերայ ցցուած չլինեին այդ մօրուները:

ՄԱԿԲԵԹ. Խօսեցէք, Եթէ կարող էք խօսել: Ուրբեր էք
դուք:

Ա. ՎՃՌԻԿ. Կեցցէ՛ Մակրէթ: Ողջոյն, իշխան կամիսի:
Բ. ՎՃՌԻԿ. Կեցցէ՛ Մակրէթ: Ողջոյն, իշխան կաւորի:
Գ. ՎՃՌԻԿ. Կեցցէ՛ Մակրէթ: Մի օր դու թագաւոր պի-
տի լինիս:

ԲԱՆՔՈՅ. Ո՞վ ազնուական Մակրէթ, ինչի՞ ևս տագնա-
պում: Ինչի՞ թւում ևս վախենալ գեպքերից,
որ աւետում են այնքան վայլուն երկոյթի
ներբոյ:

(Կախարդներին դառնալով)

Յանուն ճշմարտութեան, պատասխանեցէք. դուք
երեակայական ուրուականներ էք, թէ յիրաւի այն ինչ
էք, ինչ որ անմուռմ էք:

Դուք ողջունում էք իմ նշանաւոր ընկերակցին՝
մի պատուաւոր տիտղոսով, և նրան աւետում էք ապա-
գայում՝ մեծ բազգ, և թագի յոյսը. ձեր վայլուն մար-
գարէութիւնները նրան սքանչացման մէջ են դցել. իսկ
ինձ ոչինչ չէք ասում:

Եթէ ձեր հայեացքները թափանցում են ապա-
գայի ծոցին մէջ, և գեպքերի սերմերին մէջ կարող են
որոշել թէ որը նրանցից պիտի ուսմանայ կամ վիճէ,
խօսեցէք ինձ, ինձ էւ որ ձեզանից չնորհք չեմ մու-
րայ, և ձեր ատելութիւնից էլ երկիւղ չունիմ:

Ա. ՎՃՌԻԿ. Ողջոյն.

Բ. ՎՃՌԻԿ. Ողջոյն.

Գ. ՎՃՌԻԿ. Ողջոյն.

Ա. ՎՃՌԻԿ. Դու Մակրէթից աւելի փոքր պիտի լինիս,
և նրանից աւելի մեծ:

Բ. ՎՃՌԻԿ. Դու նրանից նուազ երջանիկ պիտի լինիս,
և նրանից աւելի երջանիկ:

Գ. ՎՃՌԻԿ. Դու թագաւորներ պիտի ծնանիս, թէպէտ
և թագաւոր պիտի չլինիս: Կեցցէն Մակրէթ
և Բանքոյ:

Ա. ՎՃՌԻԿ. Կեցցէն Բանքոյ և Մակրէթ:

ՄԱԿԲԵԹ. Միք գնաւ մթին մարգարէունիներ. աւելի
լացայաց խօսեցէք:

Գիտեմ, որ իմ հօրը՝ Սինէլի մահով՝ ևս կը լինիմ
իշխան Գլամիսի. բայց որպէս կարող եմ ևս լինել և
իշխան կաւորի:

Կաւորի իշխանը գեռ ապրում է և իր յաջողու-
թեան մեծագոյն վայլումն է:

Որ ևս թագաւոր պիտի լինիմ, դա այնպիսի գէպք
է, որին չեն հասնում իմ յոյսերը, ոչ էլ... իշխան կաւ-
որի:

Խօսեցէք, ուստի՞ առել էք դուք այս նորօրինակ

ծանօթութիւնները։ Կամ՝ ի՞նչ պատճառով գուք արշելում էք մեր քայլերին այս ցամաք մացաների վերայ, ձեր ունայն գուշակութիւններովը։

Խօսեցէք, հրամայում եմ ձեզ։

(Վհուկները անհետանում են)

ԲԱՆՔՈՅՑ. — Երկիրը, որպէս ջուրը, յդանում է օդային
պղպջակներ, օդի թեթև աղջիկներ, որոնց
ցրւում է հողմի մի թեթև չոճնչ
Այն՝ ինչ որ տեսանք, ոչ այլ ինչ է, բայց ոչինչ։
Ո՞ւր անհետացան նրանք։

ՄԱԿԲԵԹ. Օդի մէջ։ Այս գարտակ ձևերը, որոնց մենք
մարմիններ կարծեցինք, կորան՝ ինչպէս
չոճնչը՝ հողմի մէջ։
Ո՞ւրքան կը ցանկանայի որ նրանք անհետացած
ինչեն։

ԲԱՆՔՈՅՑ. Այս տեսիլները՝ որոնց վերայ խօսեցանք,
իրական էին, թէ ճաշակեցինք այն արքեց-
նող արմատէն, որ բանականութիւնը՝ վեր-
իւայլ է անում։

ՄԱԿԲԵԹ. Զեր որդիները թագաւոր պիտի լինին։

ԲԱՆՔՈՅՑ. Դուք ինքն՝ թագաւոր պիտի լինիք։

ՄԱԿԲԵԹ. Ու նաև իշխան կաւգորի։ Զէ որ մասպէս
մարդարէացան նրանք։

ԲԱՆՔՈՅՑ. Այն, ոչնց այդ ասացին. — բայց ով է գա-
լիս։...

Գլուց ՇԼՅՈՒԹԻՐ Վեպիացի



ԱՆՏԱԲԻ ԹԵԳՄԱՆՈՅ

Դ.

ԱՆՏԱՌԻ ԹԱԳԱՒՈՐԸ

Այս բանաստեղծութիւնը դրել է գերմանացի մատենագիրներից ամենից մեծն և հռչակաւորը, Վոլֆլանիկ Կենքի. Նա ծնունդը է 1749-ին, վախճանուել 1832-ին:

Նա դրել է բնարական (միջիք) բանաստեղծութիւններից բացի, Ֆանուր որ իր զլուխ գործոց է ողբերգութիւն, (գոամա), Հերմանի և Գորսորիան զիւցազնավէլ (պօէմա), իր վեպերի մէջ աշխարհանչակ են դարձել Վիլիելմ Մայսեր և Վերեր:

Հետեւալ քնարերգութիւնը գերմաներէնի մէջ ունի «Եռլեկօնիկ Լաստենիների թագաւորը» տիտղոսը. Բայց Լաստենի բառը ծանօթ չինելով չատերին կըրցնում է վերնագիրը՝ իր խորհրդաւորութիւնից. այս պատճառով դրել ենք «Անտառի բագաւորը»:



Ո՞վ է գալիս, նժոյդի վերայ, այսքան ուշ, ոինչ շերուան և հողմի մէջ:

Հալրն է իր որդուն հետ. Նա մանուկը իր բազուկների մէջն է տաել. Նա սեղմում է նրան իր գըրկում, Նա նրան պահպանում է ցրտից:

«Որդեակ իմ, ինչի էզակս տագնապով ծածկում ես քո երեսը.—Հայր, չի՞ս տեսնում անտառի թագաւորը... անտառի թագաւորը՝ իր թափովն և աղիովը: Ես ոչինչ չեմ տեսնում, մառախուզից բացի:»

—Եկ, գեղեցիկ տղայ, Եկ ինձի հետ... որպիսի գեղեցիկ խաղեր ողիտի խաղանք միասին:

Շատ գեղեցիկ ծաղիկներ կան վտակի եղերքը և իմ մօր տունը՝ ոսկեթել հագուստներ:

—Հայր իմ, հայր իմ, լսնում ես թէ Անտառի արքայն ինձ ինչե՞ր է խոսանում:—Հանգարտ եղիք, որպեսկ, հանգարտ եղիք. զա հողմն է, որ մրմիջում է չորացած տերեներում:

— Գեղեցիկ փոքրիկ, եկ ինձ հետ, իմ աղջիկները սպասում են քեզ. իմ աղջիկները պարում են զիշեր ժամանակ. նրանք քեզ պիտի փայտային, խաղան և երգեն քեզ հետ:

— Հայր իմ, հայր իմ, չես տեսնում Անտառի Քաղաքարի աղջիկները, այնուզ, ուր մութ է պատել: — Որդեակ իմ, տեսնում եմ այն ինչ որ կամհնում ես ասել... տեսնում եմ հին, գորշագոյն ուսենիները:

— Եիրում եմ քեզ, փոքրիկ երեխայ. քո կերպարանքը՝ հմայում է ինձ. եկ ինձ հետ կամովին, ապա թէ ոչ քեզ կը տանեմ բռնի:

— Հայր իմ, հայր իմ, նա բռնում է ինձ, նա ինձ վիրաւորեց, Անտառի արքայն:

Հայրը սարսառում է. նա երակում է իր ընթացքը, սեղմում է իր կրծքի վերայ երեխային՝ որի շունչը հատնում է, համում է իր տունը...
Երեխայն, իր գրկի մէջ մեռել էր...

Գրեց ՎՈՒՅԻԱՆԿ ԿԵՇԹԻ (Գերմանացի)

ԵՍՊԱԼԵԱՆ Բ.

Ե.

Այս չքեղ բանաստեղծութեան հեղինակն է Թրանսպարեն Վ. Ալեքսանդր Հիլդի, ծնվել է 1802-ին և վախճանուել 1885-ին:

Նա գրել է քնարակոն բաղմաթիւ բանաստեղծութիւններ. Աօնան Տերեւ եր, Երգեւ և Գելունիւր. Արեւ Ելեանիւր, Մտի չորս հոլմեր. Ներքին ձայնիր, Վերջալոյսի երգեր. Պարերի գրոյցը:

Թրել է վէպեր. Պարխսի Նորոր-Տամբ. Աղորմելիները:

Թրել է և ողբերգութիւններ. Կրնանի, Պիւրկաֆ, Հայլն:

Վիկոր Հիլդի բանաստեղծութիւնները կատազի հողմեր են թւում, որ անցնում են հոգիների անտառից, ցնցելով նրանց, լցնելով նրանց մի ինչ որ վայրենի երաժշտութեամբ:

Նապոլեոն Բ. պարունակում է բնագրում մի սքանչելի ճոխութիւն և ներդաշնակութիւն յանգերի: Պահում ենք այսուհեղ տողերի այն բաժանումը, որ կայ բնագրում:

Նապոլեոն Բ. մեծն նապոլէոնի որդին էր, երբ նա յաղթուեց և աքսորուեց Սուրբ Հեղինէ կղզին, Նապոլէոն Բ. ուղարկուեց Աւստրիա, որի կայսրը՝ մօր կողմից իր սպասն էր: Վիեննական արքունիքում փչացրին երիտասարդ կայսերորդուն, ըջապատելով նրան հրապուրներով և հաճոյըներով, և նապոլէոն Բ. այն ինչ քսան և մի տարեկան, ծաղիկ հասակում մեռաւ, ուն կնալու թռախտի:

ՆԱՊՈԼԵՈՆ Բ.

Խոնարհած, որպէս մի երիվար, որ տիրոջ գախն է լուսմ, Նրանք ասում էին միմեանց. Պէտք է ծնուի մի մեծ բան.

Անսահման կայսրութիւնը՝ վազը սպասում է մի թագածառնողի, Որ, աւելի մեծ քան կեսարը, աւելի մեծ՝ քան նոյն իսկ Հոռոմը, Սպասում է իւր ճակատագրում մարդկային ազգի ճակատագիրը:

Մինչդեռ նրանք խօսում էին, փայլակող և խորունկ ամպը ձեղքուեց, և տեսնուեց, աշխարհի վերև կանգնած նաև խասահմանեալ մարդը, Եւ բելանարաց ժողովուրդները՝ ոչ այլ ինչ արին՝ բայց լուել,

Ալունիակ նրա երկու վեր բարձրացած բազուկները ներկայացնում էին աշխարհի:

Մի նորածին մանուկ:

Եւ գոռողութիւնը ուռեցնում է նրա հզօր ոնդունքը.
Որ երկու բաղուկները, խաչաձև կպած իր կրծքին վը-
բացուել էին վերջապէս.

Եւ երեխայն, իւր հօր ձեռքին վերայ կանգնած
Նրա գեղնաշոյն բիբի փայլակներից ողողուած,
Սփոռում էր իր շուրջը՝ ճառագայթներ:

Երբ նաև իր գահերին թագաժառանգը ցոյց տուեց
Հին ազգերին, որպէս և հին թագերին,
Շլացած, և սեսելով իր հայեցքը՝ արքայներին վերայ,
Որպէս բարձր գագաթի վերայ հասած մի արծիւ,
Աղաղակեց նա ուրախութեամբ, մի վեհ կերպով.
«Ապագայ, ապագայ, իմ է ապագայն»:

Ո՞չ ոքի է ապագայն.

Տէր արքայ, ապագայն Աստծու է.

Ամէն անդամ երբ հնչում է ժամացոյցը,
Ամէն ինչ մեղ՝ «Մնաս բարով» է ասում:

Ապագայ, ապագայ, խորհնուրդ,
Երկրի բոլոր առարկայները,
Փառքը, զինուորական բաղզը,
Արքայների փայլուն թագը,

Յաղթութիւնը, բոցեղէն թիերով,
Փառքի տենչեր՝ իրազործուած,
Հանգչում են մեր վրայ այնպէս,
Որպէս թուչնակը՝ մեր տանիքին:

Ո՞չ, որքան էլ հզօր լինի մարդը, ծիծաղի կամ ար-
տասուի,
Ոչինչ չի կարող քեզ խօսեցնել տալ, ոչինչ կարող է
Ժամից առաջ,

Բանալ քո ցուրտ ձեռքը,
Ո՞վ համը ուրուական, ով մեր ասուերը, ով մեր հիւրը,
Ո՞վ ոգի միշտ գիմակաւոր, որ մեր կողքին հետեւմ
ես մնագ,
Եւ որին անուանում ենք վազը:

Ո՞չ, վազը, մեծ բանն է դա.

Ինչով կազմուած պիտի լինի վազը,
Մարդը այսօր սերմանում է պատճառին,
Վազը Աստուած հասունացնում է արդիւնքին:

Վազը՝ փայլակն է քօղին ներքի,
Ամպն է աստղին վրայ,
Մի մատնիչ է՝ որ երեան կը դայ,
Մեքենայն է որ բաղիւում է աշտարակների հետ,
Աստղն է որ փոխում է իր կայանը,
Փարիզն է դա որ հետեւմ է Բարեկոնի,
Վազը՝ զահի փայտն է.
Այսօրը՝ նրա մետաքսն է.

վաղը. — երիվարն է զա որ գլուխում է, փրփուրից
սպիտակացած.

Վաղը, ու աշխարհակալ, Մոռկոււան է, որ հրդեհոււմ է,
Գիշեր ժամանակ՝ որպէս մի գահ.

Բո վաղեմի թիկնապահ գունդն է, զիտապաստ ընկած,
հեռուն, դաշտի վերայ.

Վաղը՝ վաթերլուն է, վաղը՝ սուրբ-Հեղինէն է,
վաղը՝ գերեզմանն է:

Աստուած իրան է պահում աւելութիւնը, միջացը քեզ
թողնում.

Կարող էք երկբի վերայ ունենալ բոլոր տեղը.

Շինել այնքան մեծ՝ որքան մի ճակատ կարող է լինել
երկնքի ներքի.

Տէր արքայ, կարող էք առնել, եթէ կամենաք,
Եւբուտան՝ Շաբլըմայնից, Ասիան՝ Մահմետից,

Բայց չպիտի առնէք վաղը՝ յաւիտենականից:

*

Ու ձախողուածներ, ու դասեր: — Երբ այս մարզու
երեխայն

Հնդունեց, որպէս խաղալիկ, Հոռմայ թաղը,

Երբ զգեցուցին նրան մի մեծահնչիւն անունով,

Երբ ցոյց տուին իր արքունական և գողդոջուն ճակատը
Ժողովրդին, որ զարմանում էր թէ արպէս կարելի է
լինել միանդամայն

Այնքան մեծ և այնքան փոքրիկ:

Երբ իւր հայրը իրեն համար բազմաթիւ յաղթանակ-
ներ տարաւ,

Երբ նա կենդանի թանձրապարիսպ որմերով պատեց
Նորածինը, որ ծիծաղում էր բարձին վերայ.

Երբ այս մեծ գործաւորը, որ գիտէր թէ արպէս պէտք
է ձուլել

Կացինի հարուածներով տուեց աշխարհի այն ձեզ
Որին երազում էր:

Երբ ամէն ինչ հայրենի ձեռներով պատրաստուեց,
Խոնարհ, մանկիկին օժտելու համար յաւիտենական
Փայլերով,

Երբ ապահովեցրին նրա կեանքի հանգոյցներին,
Երբ, մի օր, ընակեցնելու համար այս ժառանգական
աէրը,

Կանխեցին գեանի մէջ արմատի պէս տնկել
Պալատների մարմարեայ ոտները:

Երբ Թրանսայի ծարաւը անցնելու նպատակով
Նրա առաջ դրին՝ յոյսի գինով լցուած բաժակը.

Այս ոսկեզօծ թոյնը ճաշակելուց առաջ,

Իր շրթունքով բաժակին զպելուց առաջ,

Կազաք մը եկաւ, առաւ երեխային թամրի վերայ,

Եւ բոլորովին ափշած, անհետացաւ:

Այն, աբծիւը, մի օր, սաւառնում էր յաւիտենական
կամարների ներքի,
երբ հողմի մի մեծ հարուած խորտակեց նրա երկու
թերք,

Որ անկումը կազմեց օգում մի շանթանման ակօն.

Այն ժամանակ, ամէնքը ուրախութեամբ նրա բոյնին
վրայ յարձակուեցին.

Իւրաքանչիւրը, իր ակռային համեմատ, որսից իր բա-
ժինն առաւ.

Անդիա՞ արծիւն առաւ, և Աւստրիա՞ արծուին ձագը...
Երկուքն էլ այժմ մեռած են:—

Տէր, քու աջը՝ ահաւոր է.

Դուն սկսեցիր անյաղթելի արքայից,

Յաղթական մարդուց.

Յետոյ, վերջապէս, դու ամրողացրիր ոսկերակոյտը.

Տաս տարիներ բաւեցին քեզ՝ հիւսելու համար պատաճքը՝
հօր և որդուն:

Փառք, երիտասարդութիւն, գոռողութիւն, ահ,
Բարիքներ, որոնց տանում է գերեզմանը.

Մարդը կամենում է զրան առաջ մի փոքր բան թողնել.
Բայց մահը ասում է. «Ո՛չ.

Ամէն տարր վերադառնում է այնտեղ՝ ուր պէտք է
զնայ ամէն ինչ,

Օդնա՞ առնում է ծուխը, հողն առնում է մոխիրը.
Մոռացութիւնն առնում է անունը:

Գրեց Վիկտոր Հիւզոյ Թրանսացի

Փ Ա Ր Ւ Յ Ը

Զ.

ՓԱՐԻՍԸ

Այս գեղեցիկ երգը թուել է մի լին բանաստեղծի,
Առամ Միջեվիթիչի աստուածային քնարի թրթոռուն լա-
րերից:

Նա ծնուել է 1798-ին, վարչանեուել 1855-ին:
Նրա գործերի մէջ ամենից հոչակուածներն են Նախա-
հայրերը (տռամա), կրազինա (պօէմա), և այլ բազմա-
թիւ հնարական բանաստեղծութիւններ:



Ուրքան երջանիկ է Արաբացին, երբ մի քարա-
ժայոփի կատարից, իր նժոյգի վերայ՝ խոյանում է ա-
նապատի մէջ, երբ, մի խուլ աղմկով, նրա երիվարի
սմբակները մխռում են աւազի մէջ, որպէս շիկագոյն
պողպատը ջրի մէջ: Ահա լողում է չորացած ովկիա-
նոսին վերայ, ահա իր դրիմնի կրծքովը՝ պատառում
չոր կոհակներին:

Երագ, միշտ աւելի երագ, այժմ հազիւ թէ զըպ-
չում է աւազի մակերեսոյթին:

Յառաջ, միշտ աւելի յառաջ,—այժմ սլանում է
փոշու յորձանքներին ձեղքելով:

Սկ է իմ երիվարը, որպէս մի փոթորկալից ամպ:
Որպէս արշալոյսը, նա կրում է իր ճակատի վերայ մի
պսպղուն աստղ:

Հողմին է տուել իր ջայլամի բաշը, կայծակ, փայ-
լակ է ցայտում՝ նրա սպիտակ սմբակից:

Թոիր, թոիր, իմ սպիտակ սոներով քաջս, ով
անտառներ, ով սարեր, ճամբայ տուեք:

*

Ի գուր մի գալարագեղ արմաւենի ինձ ցոյց է
ապահս իր հովանուն, իր պտուղներին. մերժում և՛
նրա ընծայած ապաւենը:

Ամաչում է արմաւենին, փախչում է, թաքչում է
ավասիսի զիրկը, և թւում է քրքիջ բարձրացնել իմ
յանդզնութեան վերայ՝ իր աերեների շռուկովը:

Ժայռերը, անապատի սահմանապահները, գարձ-
նում են զէպ ինձ իրանց սև ու մոայլ զէմքերին.
Կրկնում են իմ քառաղբոմի ընթացքի արձագանքը, և
թւում են սպառնալիքներ մըմոալ:

«Անմիտ, ուր ես արշաւում: Այնտեղ քու գլուխը
պիտի չգտնի այլես մի ապաւեն արեգակի սլաքներին
գէմ, ոչ գալարածամ արմաւենու ներքե, ոչ էլ մի սպի-
տակ վրանի ներքե: Այնտեղ մի վրան միայն կայ,
երկինքը:»

Այնտեղ ժայռերը միայն ննջում են. այնտեղ
աստղերն են միայն ճամբորդում:

Երշաւում եմ, արշաւում:...

Ետ եմ գարձնում իմ հայեացքները. ի՞նչ եմ
աեսնում: Ժայռերը ամօթից փախչում են ու իրար
ետե թաքչում:

Լսեց մի անգղ նրանց սպառնալիքը, կարծեց, յիշ-
մարը, թէ կարող պիտի լինի բանտել զիս անապա-
տում, և մթնոլորտը պատառելով՝ սլացաւ իմ ետեից:
Երեք սև պասկակ պատեց իմ գլուխը:

Ճչեց. «Դիակի հոս եմ զգում, գիակի: Յիմար
հեծելուր, յիմար նժոյք:

Այստեղ ուր կայ ճանապարհ հեծեալին համար,
ուր կայ կեր՝ նժոյգին համար:

Այստեղ հողմին համար ճանապարհ կայ, օձին հա-
մար կերակուր:

Դիակները միայն ննջում են հոս. անգղերն են
միայն այստեղ ճամբորդում»:

Ճիչ էր արձակում, փայլիլուն ճանկերով՝ ինձ
սպառնում:

Երեք անգամ հայեացքներով չափեցինը միմեանց.
ու վախեցաւ. անգղը:

Սլանում եմ, սլանում...

Ե՛տ զարձրի իմ աշքերը. անգղը հեռացել էր,
հեռացել կախուել երկնքից, մի սև բիծի փոխարկուել,
փոքրկացել՝ որպէս մի ձնձզուկ, ապա որպէս մի թի-
թեռնիկ, և ապա որպէս մի մժեղ, մինչե հալուեց՝ եր-
կնքի կապոյտին մէջ:

Թոփիր, թոփիր, իմ սպիտակ ոտներով քաջն. ու
ժայռեր, ով անգղեր, մէկղին, ճամբայ տուէր:

*

Էսեց մի ամող անգղի սպառնալիքը, պարզեց իր սպիտակ թևերն երկնքի վերայ, և սկսեց ինձ հալածել:

Կամենում է ցոյց տալ՝ թէ ինքն էլ այնքան լաւ է արշաւում երկնքի վերայ, որքան եօն՝ երկրի: Կախում՝ է իմ գլխի վերե, և հողմին հետ շշում՝ է այս սպառնալիքը:

«Յիմար, ուր ևս արշաւում:

Այսուեղ քո կուրծքը պիտի հալուի ջերմութիւնից, ոչ մի ամող չպիտի լուայ անձրևով քո փոշոտ գլուխը, ոչ մի առուակ պիտի չկանչէ քեզ իր արծաթի ձայնովը, ոչ մէկ ցօղ պիտի չկաթէ քո վերայ, որովհետեւ հողմը նրան պիտի տանի, թոյլ չտալով որ նա քեզ մերձենայ»:

||

Իգուր է սպառնում:

Արշաւում եմ, արշաւում: Ամպը, խոնջած, շնչառապառ, սկսում է երկնքում երերուիւ. գլուխը խոնարհեցնում է, հանգչում է մի ժայռի կողքին:

Ե՛տ գարձրի աչքերս: Մի ամբողջ հորիզոն՝ բաժանում էր ինձ նրանից:

Գեռ նշմարում էի նրան, տեսայ նրա դէմքի վերայ՝ ինչ կար նրա սրտում:

Զայրոյթից կարմրեց, ապա նախանձից դեղնեց, և ապա սեացաւ որպէս մի դիակ ու թաղուեց ժայռերի ետեւ:

Թռիր, թռիր, իմ սպիտակ սաներով քաջու. մէկշի, անգղեր, ամպեր, ճամբայ տուէք:

*

Այն ժամանակ աչքերս դարձրի և դիտեցի բռվանդակ հորիզոնը. թւում էր մի արեգակ. ոչ ոքին չտեսայ նրանում:

Այսուեղ ննջող բնութիւնը, երբէք չէ զարթնել մարդու ձեռքով:

Այսուեղ տարբերը այնքան խաղաղ են իմ շուրջը, որպէս առաջին անգամ գտնուած մի կզկեակի մէջ ապրող անսասունները, որ չեն խրտչում մարդու առաջին հայեացքից:

Բայց, ով Ալլահ, ուրեմն ևս առաջինը, ևս միակը չէ՞մ:

Աւագեայ պատնիշում տեսնում եմ մի ինչ որ փայլատակող հրոսակ:

Ուղիորներ են դրանք թէ աւազակներ՝ որ նրանց անցքին են սպասում:

Ուրքան սպիտակ են այդ հեծելորները, նրանց նժոյգներն էլ սալսափելի են՝ իրանց սպիտակութեամբ:

Խոյանում եմ, չեն շարժւում, աղաղակում եմ՝ չեն պատասխանում:

Ո՞վ Ալլահ, զիակներ են զբանք. մի վաղեմի
կարաւան՝ որին հողմը գուրս է հանել հողի տակից:

Արարացու կմախքներ՝ հստել են ուղտերի կը-
մախքների վերայ:

Աւազը հոսում է այն ծակերից, ուր աչքեր կա-
յին, մսաթափ կզակներից, և թռում մի սպառնալիք
ժրմուալ:

«Յիմար, ուր ես արշաւում: Ուրուականների պի-
տի հանդիպես՝ քիչ հեռի»:

Թռչում եմ, թռչում:

Դիակներ, ուրուականներ, ճամբայ տուէք:

Մի մրբիկ, ամենից ահաելին նրանցից՝ որ ալե-
կոծում են Ափրիկէն, շրջում էր միայնակ՝ աւազեայ
ովկիանոսին վերայ:

Նշմարում է ինձ հեռուից, զարմանում է, ան-
շարժ է մնում, և թաւալելով ինքն իր վերայ, ասում
է ինքնիրան.

«Իմ փոքր եղբայրներիցո՞ւ ո՞ր մէկն է այս հող-
մը. ո՞վ է դա որ իր անշուք հասակով և իր ողորմելի
ընթացքով, համարձակուում է մտնել իմ ժառանգու-
թիւններիս, իմ անապատի մէջ»:

Մոնչում է, որպէս անշարժ բուրգ՝ դէղ ինձ յա-
ռաջ է գալիս:

Տեսնում է որ ես մի մահկանացու եմ, բայց չեմ
խոնարհուի. կատաղում է, ոտներով գետինը տրաքում,
ու վերիվայր անում Արարիայի կէսը:

Գրկում է ինձ որպէս անգղը ճնճղուկին: Ծեծում
է ինձ իր պատուղ թեհերովը, այրում է ինձ իր բոցե-
զէն շունչովը, նետում է ինձ նախ օդի մէջ, և ապա
գետնի վերայ:

Վեր եմ թռչում, մենամարտում. վըսում եմ իր
յորձանքների հսկայական կապանքներին: Խածնում եմ,
բղքում, ատամնեխս ներքեւ փշում իր մարմնի պա-
տաներին:

Մըրիկը փոխում է մի սիւնի, կամենում է բա-
զուկներիցն խոյս տալ. չի կարող աղատուել, ակօս
ակօս մանրում է:

Նրա զլուխը վայր է զլորւում՝ փոչու անձինի
փոխուած և վիթխարի դիակը տարածւում է ոաներիս
մօտ մի քաղաքի պատճէշին նման:

Այն ժամանակ, ազատ չունչ քաշեցի, աչքերս
վեր բարձրացրի, և խիզախօրէն նայեցի աստղերին:
Բոլոր աստղերը իրանց ոսկեղէն հայեացքներըն սկե-
սեցին իմ վերայ, որովհետեւ ինձ միայն տեսնում էին
անապատում:

Ա՛խ, ո՞րքան քաղցր է շնչել այստեղ օդը՝ կը բծ-
քիդ բովանդակ մեծութեամբը։ Շնչում եմ օդը՝ ապա-
տօրէն, տառարթութեամբ։

Ա՛խ, ո՞րքան քաղցր է նայել այստեղ՝ աչքերիդ
բովանդակ զօրութեամբը. աչքերս ընդարձակում են,
սրանում են, ճեղքում են, հորիգոնի ափերին, թռչում
են հեռի։

Ա՛խ, ո՞րքան քաղցր է տարածել այստեղ բա-
զուկներդ, աղատ, համարձակ, նրանց բովանդակ եր-
կայնութեամբը։

Ի՞նձ այնպէս է թւում՝ թէ կարող եմ զրկել բո-
վանդակ տիեզերքին, արևելքից արևմուտք։

Իմ միտքը նետի նման սլանում է վեր, աւելի
վեր, զնու աւելի վեր, մինչեւ երկնքի անդունդը։

Եւ սրպէս մեղուն իր խայթոցին հետ թաղում է
և իր կհանքը, ես, մաքիս հետ, թաղում եմ երկնքում
իմ հոգին...։

ՄՐԾԻԿՆԵՐԻ ՈԳԻՆ

Է.

Գրեց Առամ Միցելելիշ Հեհացի

Ֆօմիկնս Պորտուգալցին, այս նկարագրութեան
հեղինակը, ծնուել է 1517-ին, վախճանուել 1579-ին:
Նա դրեւ է մի մեծ դիւցազներգութիւն (Էպոպէա)
Լուսիական տիտղոսով:

Նրա մէջ երգում է իր Լուսիտանիա հայրենիքը.
Իր դիւցազն է եղել Վասկօ Ֆամա Պորտուգալցի նա-
ւագարը, որ Բաբեյուսոյ զլիսից անց կացաւ առաջին
անգամ:

Արսորուած լինելով Զինասուանի Մաքաս քաղա-
քը, նա վերադարձին, մրրի հանդիպեց, նաւը խոր-
տակուեց, բայց բանաստեղծը կարողացաւ ազատուել
մի ձեռքովը ալիքների գէմ կոռւելով, միւսովը՝ վեր
բանելով իր դիւցազներգութեանը:



ՄՐՐԻԿՆԵՐԻ ՈԳԻՆ

Արեգակը հինգ անգամ լուսաւորել էր երկիրը,
այն օրից ի վեր, երբ մենք հրաժեշտ տուինք բարբա-
րուների երկրին: Գիշերը, ըջեցնում էր, լոռւթեան
մէջ, իր աստեղազարդ կառքը, մեր նաւերը հանդար-
տորէն ճեղքում էին կոհակներին. մեր ռազմիկները,
նաւի յետսակողմը նստած, հսկում էին, երբ մի մթին
ամպ յանկարծ խաւարեցրեց աստղերի ճակատը և սար-
սափ սփռեց մեր հոգիների վերայ:

*

Խաւարապատ ծովը՝ լսեցնում էր հեռուն՝ մի
աղմուկ նման ալիքների աղաղակին՝ որ խորտակւում
են՝ բաշխուելով ժայռերի:

Աստուած ամենակարող, աղաղակեցի ես, որպիսի
աղէտներ սպառնում են մեզ:

Որպիսի ահաւոր սքանչելիքներ պիտի ընծայեն
մեզ՝ այս կլիմայն և այս ծովը. այս տեղ փոթորիկից
աւելի մի բան կայ:

*

Խոսքս հազիւ վերջացրի. անհուն զարհութելի մի
ստուեր՝ կանգնում է մեր առաջ: Նրա դիրքը սպառ-
նալից է, նրա կերպը՝ վայրենի, նրա գոյնը՝ դժգոյն,
նրա մօրութը՝ թանձր և տղմոտ. Նրա մազը ծածկուած
է տիզմով և մանր խճերով. Նրա շրթունքները սկ են,
նրա ատամները՝ անգոյն. Նրա սկ յօնքերի ներքոյ աչ-
քերը ըրջըլում են և փայլատակում:

*

}

Նրա հասակը հաւասարում էր այն կոթողին՝ որ
երբեմն Հոսդոսի պարձանքն էր, և զարմանք տիեզե-
րաց:

Նա իսոսում է. հրահաւոր ձայնը թւում է գալ
նեպասնի անդունդներից:

Երբ տեսնում ենք նրան, երբ նրա ահաւոր չեշ-
տերն ենք լսում, տնկուում են մեր մազերը, սարսափի
սարսուոք անցնում է մեր մարմնից, և մեզ սառեցնում:

*

Ո՞վ ժողովուրդ, աղաղակում է նա, բոլոր ժո-
ղովրդներից յանդինագոյնը. չկայ ուրեմն ոչ մէկ պատ-
ուար որ արգելք լինի ձեզ. անսանձելի սազմիկներ,
անխոնչ նաւալարներ գուք համարձակուում էք նետ-

ուիլ այս ընդարձակ ծովերի մէջ, որի յաւիտենական
պահապանն եմ ես, այս սրբազն ծովերի մէջ, որոնց
երբէք չպղծեց մի օտար նաւ, և որի մուտքը արգել-
ուած է և ինձ:

*

Դուք բնութիւնից խլում էք գաղաներներ, որոնց
կարող չեն եղել յափառակելու ոչ գիտութիւնը, ոչ էլ
հանձարը:

Լաւ ուրեմն, յանդուգն մահկանացուներ, սովորե-
ցէք թէ որպիսի հարուածներ սպասում են ձեզ այս
փոթորկալից ափունքին վերայ և հեռաւոր երկրներին
չերայ՝ ուր գնում էք ձեր մոլեգնութիւններին տանե-
լու:

*

Վայ այն սրբապիղծ նաւին՝ որ յանդքնում է ձեր
հետքերին վերայ նետուել: Ես չղթայից պիտի արձա-
կեմ նրա դէմ՝ նողմերին և մըրիկներին:

Վայ այն նաւին, որ ձեր նաւից յետոյ, համար-
ձակուի խիզախնելու իմ զօրութեանս դէմ:

Հազիւ թէ երեայ իմ կոհակների վերայ, նա պի-
տի ծեծուի, խորտակուի, խորասուզուի անդունդների
մէջ:

*

Նրա հետ պիտի կորչի և ամբարիչտ նաւապեսը,
որ իւր թափառաշրջիկ արշաւանքների պահուն, տեղե-
կացաւ իմ անբռնաբարելի բնակարանի մասին, և յայտ-
նեց իմ գոյութիւնը. և այս ահաւոր պատուհասը ոչ
այլ ինչ պիտի լինի, բայց նախերդանքը այն ազէտնե-
րին՝ որոնց ապագայն պատրաստում է ձեզ: Ես, ես կա-
րող եղայ կարդալ ճակատագրի գրքում, որ ամէն տա-
րի ձեզ պիտի բերէ նորանոր արկածներ. մահը՝ ձեր
չարիքների մէջ՝ փոքրագոյնը պիտի լինի:

*

Նա շարունակում էր իր զարհուրելի գուշակու-
թիւններին:

Ո՞վ ես դու, հրէշ, հարց տուի նրան, խոյանա-
լով դէպի նա: Դեկրից ո՞ր մէկը խօսում է մեզ հետ
քո բերանով:

Ահաւոր ճակայն զցում է իմ վերայ մի դաժան
հայեցք. իր անհեթեթ շրթունքները հազիւ բաժան-
ում են միմեանցից, թոյլ տալով որ մի ահաւոր ա-
ղաղակ դուրս գայ:

Նա վերջապէս պատասխանում է ինձ մի խուլ և
զայրացկոտ ձայնով:

*

«Ես մըրիկների ոգին եմ. ևս սիրում եմ այս
ընդարձակ հրուանդանը, որին Պաղոմէսները, Սարա-
բունները, Պլինիոսները, Պոմպոնիոսները, և ձեր գիտ-
նականներից ոչ մէկը չէին ճանաչում:

Այստեղ ես վերջ եմ դնում Ափրիկեան երկրին,
այս գագաթով որ նայում է Անտարկտիկեան բևեռին,
և որը, մինչ այսօր, մահկանացուների աչքերից թաք-
նուած, զալրանում է այժմ ձեր յանդզնութեանը հա-
մար:

*

Իմ չորացած մարմնիցս իմ ոսկրներիցո՞ւ որ փոխ-
ուել են ժայռերի, աստուածները, անողոքելի աստ-
ուածները կազմել են ընդարձակ հրուանդանը, որ տի-
րում է այս ընդարձակ ջրերին, և իմ ցաւերին աճե-
ցնելու համար, իմ ցաւիս վերայ նախատինք էլ աւե-
լացնելու համար թէտիյս կը գայ ամէն օր՝ ինձ սեղմե-
լու իր գօտիովլը»:

*

Այս խօսքերից յետոյ, նա արտասուբի հեղեղներ
թափեց և անհետացաւ: Նրա հետ փարատեցաւ անգոյն
ամպը, և ծովը թւում էր՝ երկար ճառաշանքներ ար-
ձակել:

Ես ձեռքերս գէպի երկինք բարձրացրի, օգնութեան կանչեցի երկնային ողիներին, որ ճամբորդների հաւատարիմ առաջնորդներն են. աղաչեցի որ նրանք հեռացնեն այն աղէտներին՝ որպնց անգութ Աղամաստոքը սպասնացել էր ապա մեղ ապագայում:

Դրեզ Փամոենս Պոլտուգալի

Գ Ե Ւ

Ը.



Դ Ե Ւ

Լեռմոնտովից ներկայացնում ենք «Դե»-ը, արևելքան վէպ, թարգմանութեամբ Յ. Զ. Միրզայեանցի:

Այդ բանաստեղծութիւնը աւելի հրապուրիչ է մեզ համար, նրա առարկայն լինելով մեր գեղեցիկ երկիրը, կովկասը:



Թախծալից Դեը, աքսորման ողին,
Թոշում էր օգում մեղապարտ երկրի.
Եւ նորա մտքից խուն անցնում էին
Ցիշատակները բարւոք օրերի:

Օրերի, երբոր լոյսի մէջ անբաւ
Գեղափայլ էր նա, քերովքն անբիծ,
Երբոր գիտաւոր աստղը սըրարչաւ
Տալիս էր նորան ողջոյն ժպտալից:

Երբոր գիտութեան ծալաւոլ անչէջ
Մշուշի միջով յաւիտենային,
Նայում էր անհուն տարածութեան մէջ
Չուող աստղերի կարաւաններին:

Երբոր հաւատում, երբոր սիրում էր,
Անվիշտ անզրանիկն ստեղծագործման
Ոչ չարիք գիտէր, ոչ կասկած ունէր,
Եւ չէր սպասնում դեռ ևս նորան:

Գարերի շարքը տըխուր, ապարդիւն,
Եւ դեռ շատ ու շատ... և դեռ ամէն բան
Նա միտ բերելու չունէր զօրութիւն:

II.

Վաղուց, արտաքսուած, նա թափառում էր
Ամայութեան մէջ և անապատան.
Գարի ետեից գարը թոշում էր,
Ինչպէս վայրկեանի ետեից վայրկեան,
Անդուլ կրկնութեամբ և նոյնանման:

Դառնալով իշխան աշխարհի չընչին,
Զարիք էր ցանում առանց հաճոյքի.
Եւ բնաւ մի տեղ իւր չար արուեստին
Զընանդիալելով լնդդիմազրութեան
Զարիքը ձանձրոյթ պատճառեց նորան:

III.

Եւ արդ Կովկասի բարձանց վերեսում
Տարագիրն երկնի սլացաւ աղատ.
Որպէս ագամանդ նորա ներքեում
Փայլում է Կաղաէկ ձիւնով մշտապատ,

Եւ սեին տալով խորքում հեռաւոր,
Որպէս մի ճկոքուած, որպէս օձի բոյն,
Դարեալի կիրճ՝ ձգուում է ոլոր,
Եւ թերեք՝ ոստնող առիւծի նման՝

Բաշը թաւամազ ձգած թիկունքին
Մըմչում է խուլ և վայրի գաղան,
Եւ իւրաքանչիւր թոշուն օդային՝
Ճախրելով հանգարտ կապոյտ բարձունքում,
Նորա զրոյցին ականչ են դընում:

Եւ ոսկեայ ամպեր սպհում են, գալիս
Հարաւի կողմից, երկրից հեռաւոր,
Եւ ուղեկցում են նորան դէպ հիւսիս.
Եւ նորա ւերայ ժայռերը հըզօր

Գըլուի խօնարհած, խըմբուած միասին,
Ակնապիչ ներկով և խորհըրդաւոր՝
Ցած են ականում ցոլցոլուն ջըրին.
Եւ ամբոցների բարձր աշտարակներ

Կանգնած գագաթին աղառաժների
— Կովկասի զբրան նսկայ պահակներ—
Նայում են իրոխտ մէջիցն ամպերից:

Եւ վայրենի էր, այլ և դիւթական
Աշխարհն Աստուծոյ, բայց գոռող ողին
Նայում էր աչքով արհամարհական
Իւր ստեղծողի գեղեցիկ դործին,
Եւ նորա հալարա ճակատի վերան՝
Զաբանայտուեցաւ բնաւին մի բան:

IV.

Եւ մի այլ պատկեր այդ նորա գիմաց
Գեղեցկութիւններ սրբուց կենդանի.
Հեռնեն, ծաղկանիւս զորդերով ծածկուած՝
Բացուեցան զաշտեր ճոխ Վըրաստանի:

Երջանիկ երկիր, բնակավայր չըքնաղ
Կոթողանըման հին աւերակներ,
Ոստուն վըտակներ կարկաչածիծաղ,
Գոյն—դոյն քարերով նոցա յատակներ.

Եւ թուփեր վարդի, որոնց սաղարթում
Երգում է սոխակն իւր գեղեցկունուն,
Բայց պատասխանի չեն արժանանում՝
Սիրոյ ձայները՝ քաղցրութեամբ գեղուն:

Բատուեր տարածած չինալիներ հսկայ
Շուրջը բաղեղի պըսակ ոլորուն,
Զով քարանձաւներ, ուր տապից օրուայ՝
Սպասառանում է երկչու եղջերուն:

Եւ չողին, և կեանք, մրմունջ ծառերի,
Հարիւրահնչիւն ձայնների բարբառ,
Հեշտարար չողը անշունչ կէսօրի,
Երնչառութիւննը՝ բոյսերի հաղար,

Յաւէրժ ոռոգուած՝ պայծառ գիշերը,
Յօղով բուրալից, ցօղով կենսառու,
Եւ չողուն աստղեր, ինչպէս աչերը,
Ինչպէս հայեացքը մատաղ վրացունու:

Բայց այդ հմայքը՝ բնութեան պատկերի
Բացի նախանձից չէր զարթեցլնում
Դեի կուրծքի մէջ, զարծած անբերը,
Ոչ նոր զօրութիւն, ոչ նոր զգացում:

Գրեց Մ. Աեմանով (Խուս)

ԵՐԵԿԱՅԵԱՆ ԶԱՆԳԵՐ

թ.

ԵՐԵԿՈՅԵԱՆ ԶԱՆԳԵՐ

Թովիմաս Մուր մի իռլանդացի բանաստեղծ է:
Ծնուել է նա 1779-ին, վախճանուել 1852-ին:
Նա աշխարհաճոչակ դարձաւ իր իռլանդական մեղեղի-
ներով: Նա երգեց վառվռուն չեշտով իր հայրենիքն և
նրա փառքերը. նրանք տոգորդուած են մի բուռն սիրով
դէպի իւր Ճնշուած ժողովուրդը և մի բուռն ատելու-
թեամբ դէպի բոնաւորները:

Թողել է և այլ գործեր, Սրբազն երգեր, Հրե-
սակաց սեր, Երգիծաբանութիւններ ևայլն:



Ո՞վ զանգեր, երեկոյեան մեզմիկ զանգեր...
Նրանց ներդաշնակութիւնը որպիսի պատմութիւններ
մրմնջում է իմ հոգուա.
Պատմութիւնները իմ տնակին, իմ մանկութեան, և
անոյշ ժամուն՝
երբ մտիկ էի տալիս նրանց զմայլելի հնչիւնին:

Անհետացել են այն ժպտուն, ուրախ ժամերը.
Եւ նախկին զուարթ սրտերը արդ միմեանցից բա-
ժանուած
Ննջում են խաղաղ ու մութ գերեզմանում,
Ու չեն լսում երեկոյեան զանգերին...

Եւ երբ մեռնիմ և ես, նոյնպէս պիտի նուագէ հովի-
տին մէջ,
Անոյշ, ներդաշնակ, այդ երգը.
Եւ այլ բանաստեղծներ թափառելով այնտեղ, միայնակ
Պիտի երգեն զձեզ, ով երեկոյեան զանգեր:

Գրեց Թովիմաս Մուր (Իռլանդացի)

У Е Р

Ф.

Այս արձակ բանաստեղծութեան հեղինակն է Էմիլ
Վեհանց, ժամանակակից, կենդանի բանաստեղծ, Բել-
գիացի:

Այս երգը ներկայացնում է նոք մեր ընթերցողնե-
րին Արշակ Զօպանեանի գեղեցիկ թարգմանութեամբ:
(Անահիտ ամսաթերթ, 1899):

Բանաստեղծը նկատել է Սէրը՝ մարդկային պատ-
մութեան մէջ. նախ որպէս Աստիլի, ապա որպէս Մագ-
դաղենացի, քրիստոնեայ կոյս, և ապա որպէս Յեղա-
փոխութիւն:

Սիրոյ մէջ աստուածացրած է եղել հաճոյքը,
վիշտը, ընկերական հարցը:

Էմիլ Վէրնարն նախադասում է Սէրը՝ իրը Գե-
ղափոխութիւն նկատուած, որովհետեւ նրան համարում
է աւելի մարդկային:



Ս Ե Ր

I.

Աստղիկ,

Հրձուանքը մեռաւ քու մարմնոյդ պարտէզին մէջ,
եւ բազուկներու մեծ չուշաններն և շրթունքներու
րիկները.

Եւ տենդի և ոսկիի խաղողները,

Այս հակայ արեշին վրայ, որ քու մարմինդ էր՝
Մեռան:

II.

Հոկտեմբերի օրերուն ջրագուաները փետուր առ փե-
տուր

Իրենց սուզը թափեցին հրաշոյրներուդ պարտէզին
մէջ

Իրիկունները, մելամաղձիկ,

Իրենց սուզը թափեցին՝

Զահերուդ վրայ ու զէնքերուդ:

III.

Աւաղ, այնքան արձագանքներ մեռած ու մեռած այն-
քայն ձայներ
չեռուն, հեռուն, կարմրամոխիր հորիզոնին վրայ,
Քրիստոս մ' իր բազուկները խաչածե դէպի երկինք
կը բարձրացնէ.
Ո՛ղբ' մեծ իրիկուններուն մէջ՝ ու մեծ անտառներուն:

IV.

Աստղիկ,
Քաղցրօրէն եղիր էն՝ որ կը թաղուի
Քաղցրութեանն ու մեջամաղձութեանը
Եւ մահուանը մէջ՝ պայծառ պարտէզին.
Քայց թող օդին մէջ
Յամառի ծաւալիլ՝ քու մարմնոյդ հոսն անսահման:

V.

Աչքերդ կը ոլաքուէին ինչպէս բոցեր հրակէզ
Դէպի աստղերը՝ յաւիտենական.
Ու բիբերուդ կրակները
Իրենց շքեղութեամբը յաւիտենականութիւնը կը սահ-
մանէին:

VI.

Զեռքերդ քաղցր՝ ինչպէս մեղք շառագոյն
Ժամանակին ոստերուն վրայ աստուածայնորէն կը քա-
ղէին
Նորազարդ երիտասարդութեան պտուղները՝
Վարսերդ՝ արևու մացառմըն էին:

VII.

Իրանդ, իր կլոր շողողումներուն հրատներովը
կը թուէր երկինք մը՝ հզօր ու ծանր աստղերու,
Եւ երբ բազուկներդ սրափիդ վրայ սէրը կը սեղմէին,
Ծիծերուդ ելեէջը՝ աշխարհի սէրը կը նուազէր:

VIII.

Ծովերուն ոսկիին վրայ կը կանգնէիր ինչպէս ջահմը.
Ինքինքդ կու տայիր ամենուն, ինչպէս երկիրը՝
Իր ծաղիկներով, միճերով, լեռներով, վերաբողբոջում-
ներով
Եւ գերեզմաններով:

IX.

Քայց հիմա որ ծնան
Ուրիշ տենչեր Անծանօթի,
Քաղցրորէն եղիր Աստղիկ, թախծաղինն ու կորսուածը.
Մեռած պարտէզին ծոցը՝ ծառաստաններուն ու բու-
րումներուն մէջ.
Քունիդ վերե ունենալով առկախուած՝
Քաղցրութիւնը աշնան, և ուրականէ գալարուած վար-
դի մը:

X.

Վուշէ հանդերձներ հագիր, Աստղիկ, ահա Քրիստոսը.
Մագգաղենացին եղիր և թող քու մէջդ իջնէ
Մելամաղձօրէն, էնոր չնորհն ու ոգին.
Խռնարհ, մոխիրի մէջ աղարտէ ոտքերգ,
Եւ թող լայն ծիծերգ անմահօրէն ոսկի,
Եւ աչքերգ, հայելիներ արեու և խրախճանքի,
Աչքերգ՝ դեռ հրավառ հակառակ հաղար տարուան սիրոյ,
Թող մեռնին մագերուգ տակ որ զլուխդ ի վար կու-
լան,
Ոգիսպառ երկիրը՝ իրիկուններուն արիւնը խմեց.
Եւ անձկութիւնը կ'աղաղակէ աշխարհիս չորս ծայրե-
րէն՝
Դէպի Գողգոթան, և դէպ իւր սևացից խաչը:

XI.

Հագուէ, վուշէ հանդերձներով ու խորունկ բարութիւ-
նով,
Ահա կու գայ Աստուածը անզուզական քաղցրութեան.
Ահա անոր երեսն ու քօղը՝ զոր Վերոնիկ
Քեզի կը ըերէ, բևեռներուն, պատանքին ու գեղար-
դին հետ:

XII.

Ահա նոր ու քաղցր ժամը լոռութեան.
Առաջին անգամ ըլլալով, ջերմեռանդօրէն,
Մարդկութիւնն իր ցաւին աչքերը կը պատնէ.
Աստղիկ, ահա արիւնը, և ահա լեզին,
Քրիստոնէական խօլութեանց կրակոտ բաժակին մէջ.
Ահա հրակէզ ու ձերմակ սիրալ սիրականին,
Բոցեղէն մացառներ, զմայլանքի հնոցներ,
Տժգոյն սոկի սկիհներ, ուր կը փոխանոսի
Անհունօրէն՝ սէրն անսահման ու անօթի:

XIII.

Հոգիի այբուցքներ յիմար մարմնոյն խորը.
Էռութիւնը համօրէն սիրելէն քանզուած,
Առանց սակայն զիտնալու՝ ի՞նչպէս զտնէ,
Ի՞նքզինքը տալու համար՝ զերագոյն բառը:

XIV.

Պայծառ ժպիաներ, երջանիկ արցունքներու մէջ,
Քարի ցաւեր ու երկչոտ գորովներ,
Բնոտանի ու բարեպաշտ թոթովումներ,
Ու յանկարծ ձիրքը մարգարէութեան,
Երբ հոդին, մէկ լողէի մէջ, Աստուծոյ կը փոխուի,
Ինչպէս նշխարքը:

XV.

Վուշէ հանգերձներ հազիր, Աստղիկ, ահա Քրիստոսը.
Ահա իր մեծ ձեռքերը տիրական,
Ահա ձարէ մահիճն ու գամերն, ու քարերը,
Որպէսզի անոնց վրայ թառալսու կոչկոմնս մարմինդ.
Ահա արբեցութիւնն ու չարչարանքը փոխ առ փոխ.
Ահա սպիտակ վանքերն ու իրենց պատերուն պատանքը.
Մահուան ձեռքով անհունօրէն կանգնուած,
Ճիշերուն ու տենչերուն չուրջը՝ որ կեանքն են,
Ահա մահն անձայն՝ իր անվրէպ տանջանքներով.
Գիշերանց, չէկ սարսափին տակ՝ ատող լուսնի մը,
Աստղիկ, ահա մարմինդ և իր վէրքերուն բերանները,
Որ բովանդակ սիրովը կը խենդենան ու կը պապակին:

XVI.

Վաւշ հազիր, Աստղիկ, ու քաջկրտէ մինչեւ վերջը,
Ամէն բանի մէջէն՝ քու վսեմ ցաւդ սիրոյ.
Թէպէտ լոյսն ահա կը ծաղի
Եւ արդէն մարեր է այն աստղը,
Որ առւրբ Բեթղեհէմին վերև կանգ տռաւ ատենով:

XVII.

Արիւն հազիր, ահա իննոսուներեքը.
Արքաներու փախուստ մը, բոցավառ արևմուտքի մը
տակ,
Ու կառափնատը՝ խարսխուած,
Կարմիր հակ՝ մակընթացութեանց մէջ
Ալծուփ կոռւփներու և մուկնած պայքարներու:

XVIII.

Գաժան ու ողբերգական թերուանկը եղիր,
Բանաւոր ընդվկումներուն մէջտեղը ցցուած.
Ինչպէս որ սրբուհին ու տարփուհին եղար,
Վեհագոյն քան երբէք, արկածասէր հոդիդ,
Ատենով քաղցրութեամբ, այսօր կատաղութեամբ
Ինքինքը կու տայ ամենուն. Ժամանակին համեմատ
Դուն այն աղաղակն ես սիրոյ, գթութեան կամ ար-
գարութեան

Որ կը մեկնի գէպի անհունը,
Հրձուանքի կամ արցունքներու, արիւնի կամ լիզիի
Աղաղակը՝ զոր միշտ կ'արձակեն միշտ կը չողացնեն,
Բուռն տեսդն ու յիմարութիւնը՝
Չոհաբերութեան:

XIX.

Քաղաքը ցասման ու մըրկի մէջ է.
Ամբողջ ատելութիւնը անոր զլուխը կը լուսավառէ,
Փայլակնածի կամքեր ուղեղներուն մէջէն կ'անցնին,
Յանկարծական բազուկներ՝ արդասաւրող կատաղու-
թիւններով՝
Կ'երևան, ուժերով ու մուրճերով ծանրաբեռն:
Զես դիտեր ի՞նչ որոտում մը ժողովուրդներուն չուր-
ջը կը գոռայ
Եւ անոնց իր ձայնը կու տայ ու զանոնք կրակներով
կը զինէ,
Ճակատները իրենց պատը՝ աստուածներուն զոռոզու-
թեան դէմ կը ցցեն,
Կը լսէն, ներկայ ժամէն անզին, կոչը
Անոնց՝ որ աւելի եղբայրական ժամանակ մը պիտի
Ճանչնան,
Երբ ժականները պիտի ըլլան ինչպէս ցօղուններ
Որոնցմէ պիտի թափին ծաղիկները մոլութեան ու իշ-
խանութեան:

XX.

Կեանքը եղիք այլ ևս մահուան գէմ՝ պայքարով.
Աստղիկ, քո տեսադարդութիւնդ ամրոխնե-
ներուն վրայ հոսեցներ.
Ահոնց կատաղութիւնները եղիք ու անոնց ալեծփանքը.
Ու ամենունը եղիք, ու աստուածային եղիք նորէն,
Այդ բոլոր զինուած բազուկներուն, այդ անտաշ ու-
ղեղներուն մէջ,
Ալեոր ճակատազրին արիւնը վեր կը ցատրէ ու կը
նորոգուի.
Ժամը ծանրաբեռն է սպանութեամբ ու արիւնով.
Կը սպաննեն յանուն սրբազն ապագային, խուլ ձայ-
ներ,
Դաժան ձայներ, խոլ ձայներ՝ իրարու մէջ կը հալին,
Կարմիր օրօրոցին չուրջը՝ ուր աշխարհ մը կը թոթովէ:

XXI.

Աստղիկ, քու մէջդ ամփոփէ այդ անձկագին զինովու-
թիւնը,
Թող մարմնոյդ ու սրտիդ խորէն
Սէրը խուժէ ու տիրէ վերջապէս մաքիդ մէջ.
Սիրէ մարդկաւթիւնը՝ որ հոգին է լաւագոյն՝
Փոթորկատանջ և ցնորատենչ գէպի երջանկութիւնը
Ինրզինքդ յանձնէ ու չուայլէ ամէն անոնց որ քեզ կը
կանչէն:

Աւչէ թէ աստուածներուն մէջը բազմած կամ քրիս-
տոսներուն առջե
ծնբաղիր,—այլ, կանգնան, մեր մէջը,
Ու պարզօքէն մարդկացին ու մայրական:

Գրեց կմիլ վերհարի Բելգիացի

ԵՐԵԿՆԱՅԻ ՕՐՈՅՔԻ ՄՈՏ



ԺԱ.

Հիլէւ բան. իսկական անունով Նիկողայոս Պիլս,
Տեղհանակ Մար սենետակը, Աօն և Տերեւերը, և այլ նշա-
նակալից գրուածների, ԺԹ. դարու Հոլանտացի բանա-
ստեղծներիցն է:

Նրա քերթուածների մէջ՝ ահսարաններն ընտա-
նեկան են, միտքը՝ փիլիսոփայական, ոճը՝ մելամազ-
ձիկ:

Ըսթեցողը կարծում է ինքնիրան Հոլանտական
մելամազիկ կլիմայի մէջ փոխազրուած:



Թող ննջէ մետաքսեայ կապոյտ բարձի վերայ, իսպա-
ղիկ, Անմեղ երեխայն, իր կեանքի երրորդ տարուայ մէջ.
Որպիսի՞ չնորհալի ձեռվ իր մսեղ թաթիկը անցնում է
Մետաքսի կապոյտին, և իր նուրբ մազերի ոսկու մէջ:

Եւ որպէս իր փոքրիկ ձակառը գաղոտազողի թաքչում
է իր գանգուրների ներքե, Որպէս քունը գունաւորում նրա այտերը մի վառ
կարմրութեամբ:

Եւ մինչդեռ նրա փոքրիկ բերանը կիսովին բաց-
ւում է, Նրա փոքրիկ շրթունքը ժողվուում է դէպի վեր՝ մի
փոքրիկ ժպիտուվ:

II.

Ո՞հ, թողէք ինձ դիտել այս փոքրիկ փափկիկ ծունկը,
Որ, անդիտակցութեամբ և պարզութեամբ մերկացել
է իսպի ժամանակ,

Դու պիտի չզարթնես, երբ այդ իմանաս,
Քունը խորունկ է, կեանքի երրորդ տարուայ մէջ:

Կը գայ մի ժամանակ, ուր խոնջէնքը բաւական պիտի
չլինի
Քնով խաղաղեցնելու հրավառ ճակատը,
Երբ հանգիստը խոյս է տալիս խարեբայ բարձից:
Այլ դու խաղաղ ննջում ես՝ մետաքսեայ բարձին վե-
րայ...

III.

Երջանիկ երեխայ, կամենում եմ լինել քեզ նման,
Դու դեռ ոչնչի չես փափագում երազիդ կամ հսկում-
ներիդ պահուն,
Բայց մի օր դու յիմար փափագներ պիտի սնուցանես,
Դու էլ, այլ մարդիկների նման, պիտի սքանչանաս
երեսյթին վերայ:

Ո՞հ, դեռ կարելի չէ այդ բանը կարգալ այս դէմքի
վերայ,
Բայց կուգան չորս այլ տարիներ, և դու պիտի դիտես
Նախանձով նրանց մեծ են կոչում,
Սիրելի տղայ.—դա քո առաջին յիմարութիւնը պիտի
լինի:

IV.

Մեծերը, աւազ, գիտեն՝ թէ ի՞նչ են իրանք.
Եւ այս գիտակցութիւնը նրանց բոնակատում է ար-
տասուելու կամ շառագունուելու.

Դու այլ կարմրութիւն չես ճանաչում, բայցի առողջու-
թեան վարդերից,
Դու զգում ես արտասուքի քաղցրութիւնը, բայց նրանք
արտասուքից յառաջ չեն գալիս:

Դու դեռ ամէն ինչ անդիտանում ես, ոչինչ հասկա-
նում, դու նայում ես աշխարհի վերայ
Զարմացած, բայց ազահ աչերով,
Եւ դու չես գուշակում թէ որպան ուրախութիւն ան-
հատ պիտի լինի քեզ համար,
Այն օրից՝ երբ այդ առեղծուածի քողը պատառուի:

V.

Բո հայրը շըջում է վայրահակ, համբ ցաւի մէջ
Բո մայրը լաց է լինում իւր մօր մահուան մտածի մօտ,
Պատիւների ծարաւը այրում է քո անդրանիկ եղբօրը,
Խարուած յոյսը սպառում է քո քրոջ սիրուր...

Եւ նա որ այդ սիրաը խորտակեց հալում անողոք
իւղձմանքից
Եւ ես որ այսաեղ ծնգի եմ գալիս,
Լաց եմ լինում իմ տկարութիւնների, իմ հոգուս չա-
րիքների վերայ,
Իսկ ո՞ու... դու ննջում ես խաղաղիկ՝ մետաքսեայ
բարձի վերայ:

VII.

Դու այժմ թերես երազում եռ մի մանկական ուրախ
բան.
Մենք էլ երազում ենք, երազում, բայց արթնութեան
պահուն...
Որովհետեւ մենք ենք որ մեր քունը անհանգստացնում
ենք,
Որովհետեւ հոգելն և երկիւղը մեզ տանջում են:

Եւ մենք այնքան սխալների ենք ենթարկուած,
Որ քնի մէջ անգամ նրանք մեզ չեն թողնում,
Որ երազներում անգամ՝ մենք չարիքի ստրուկներ ենք,
Միրելի՛ տղայ, դու չգիտես թէ թնչ է չարիքը:

VIII.

Եւ սակայն, մենք ամէնքս էլ եղել ենք քեզ նման,
Եւ քեզ նման անմեղ, երբ հանգչում էինք,
Մեզ տեսնողները չեին գուշակում,
Թէ ինչեր անց պիտի կենան մեր հոգուց,

Թէ թնչպիսի բաժակ պէտք է ընծայէր մեզ Աստուած,
Որպէս մեր ձեռքը պիտի առնուր այս բաժակը,
Եւ թէ վշտերի և սուգի մէջ
Ի՞ր վերայ պիտի խորհինք, թէ Աստծու:

VIII.

Դու էլ պիտի չլինիս մի օր մի անհանգարտ երեխայ,
Ճաւ նրանց՝ որ կեանքի հետ՝ քեզ ամէն ինչ տուին.
Երբ տղամարդ լինիս, պիտի չծառայէս մի կրքի,
Որ պիտի յափշտակէ քեզանից՝ առաքինութեան հետ՝
և քունը:

Ամօթի կրակը պիտի չհանգցնէս անմաքուր ջրի մէջ,
Սրտիցդ Աստծուն պիտի չհալածէս.
Ի՞նչպիսի վիճակ սպասում է քեզ: Ոճիք և ճոխութիւն,
թէ առաքինութիւն և ցաւ..
Դու շարունակում ես խաղաղ ննջել՝ մետաքսեայ բար-
ձի վերայ:

IX.

Ա՞չ, թող տառապանքն և խղճի խայթը քեզ չմերձե-
նան.
Թող երկիրը քեզ չզրկի երկնքից.
Իմ սիրաը այս աղօթքն է բարձրացնում առ Աստուած,
Այն էակին հետ՝ որ քեզ ցաւով յզաքաւ:

X.

Առվարիր դու էլ աղօթել խաղող հաւատքի
Եւ նոր զարթնած զգացմունքի տարիներում՝
Եւ մի մոռանար նրան աշխարհի աղմկին մէջ,
Աշխարհի՞ որ հրապոյը ներից խոյս չէ տալիս:

Մի օր մահը պիտի հանգնէ կեանքիդ կայծը,
Որ սկսում է ուրախ և անմեղ.
Երանի՛ քեզ, եթէ զտնես մահուան մի անկողին,
Որ փափուկ լինի, որպէս մետաքսեայ բարձը,
Որի վերայ, երեխայ, քո նինջը տեսայ:

Գրեց Հիլտեպանի, Հոլանտացի

ԱՃԽԱՐՀԻ ՍՏԵՂ ԾԱԼԻՄԼ

ԺԲ.



Շուէդի հոչակաւոր լսնաստեղծներից մին է
Սևմունի Միկփուզոն:

Նա ապրում էր ԺԱ. գարում Քրիստոսից յետոյ,
իսլանդա կղզում: Նրա գործերից ամենայայտնի է հ-
ղել «Հատա» (Մամ), որի մէջ հաւաքել է Շուէդացի-
ների հեթանոսական զրոյցներին աշխարհի ստեղծման
մասին:

Դա մի հետաքրքիր գործ է ոչ այնքան զուտ—
զրական, որքան ազգագրական տեսակէտից:



ԱՇԽԱՐՀԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

I.

Գարերի արշալոյսի ժամանակ չկային ոչ ծով, ոչ
ափունքներ, ոչ էլ հովիկներ: Ոչ երկիրն էր տեսնեռում
վարը, և ոչ էլ երկիրնքը՝ վերը:

Ամէն ինչ մի անդունդ էր, զուրկ գալարութիւ-
նից և զուրկ սերմերից. արեգակը չունէր մի որ և է
պալատ. աստղերը չգիտէին իրանց բնակարանը, լու-
սինն էլ չէր ճանաչում իր ոյժը:

II.

Հարաւի կողմը, այն ժամանակ, կար մի ալսարն,
լուսաւոր, հրդեհուած, բոցելէն. այդ աշխարհից հե-
ղիներ էին թափում հիւսիսում կանգնած անդունդի
մէջ. նրանք իրանց աղբեւրից հեռանալով դէպի ան-
դունդը զլորուելիս՝ իսկոյն եւեթ տիզմի և սառի էին
փոխում, և անդունդը լեցնում:

Այսպէս քիչ առ քիչ անդունդը ամբողջապէս
լցուեց, բայց նրա մէջ կար մի թեթև և անշարժ օդ,
որ ցուրտ գոլորշիներ էր արձակում:

III.

Հարսուից փշեց յանկարծ մի բոցաշունչ հողմ. գոլորշիները հալուեցին. կազմուեցին կենդանի կաթիներ. նրանցից ծնան իմէր հսկան և կտումա կոշվը: էտումը ջի ծծերից վագում էին չորս կաթնեղէն գետեր. հսկայն նրանցով էր մնանւում:

Կովը կերտկրում էր՝ լիելով բարերին՝ որ ծածկուել էին աղով և սպիտակ սառոյցով:

IV.

Առաջին օրը երբ նա այս քարերին լգեց՝ նրանցից գուրս եկան մարդու մտզեր, երկրորդ օր՝ մի զըւլուխ, երրորդ օր՝ մի ամրող մարդ, որից ծնուեց զորը:

Իմէր հսկայից էլ ծնուեց մի հսկայների սերունդ: Պորը ամուսնացաւ մի հսկայի աղջկայ հետ, որ նրան տուեց երեք որդիները. Ռաֆին, Վիլ և Վէ:

V.

Այս երեք եղբայրները սպանեցին իմէր հսկային. Նրա արիւնից կազմեցին ծով ու գետերը, նրա մարմնից՝ ցամաք երկիրը, նրա ոսկերից լիոնիրը, նրա տատիներից՝ ժայռերը, նրա մազերից՝ բոյսերը, նրա գանկից՝ երկնակամարը, նրա ըղեղից՝ ամպերը, նրա պլան աշքերից էլ աստղերը:

VI.

Նրանք աշխարհի աստուածներն եղան. նրանք ամուսնացան այն աղջիկների հետ՝ որ իմէր հսկայի ցեղիցն էին:

Նոր հսկան ունեցաւ մի աղջիկ. Գիշերն էր դա, այս աղջիկը ամուսնացաւ աստուածապարմ Տակլինկէրի հետ, և ծնաւ Օրը:

VII.

Այն ժամանակ Ռափին առաւ Գիշերն և Օրը և նրանց զետեղեց երկնքում. նրանց տուեց երկու նժոյգ, երկու կառք, որպէսպի միմեանց ետեից ման աշխարհի շուրջը

Ամենից առաջ եկաւ Գիշերը՝ նստած իր Զիւնաբաշ երիվարի վերայ:

VIII.

Ամէն առաւօտ Զիւնաբաշը՝ իր շրջանն աւարտելիս՝ սոսկում է երկիրը՝ իր սանձից հստող փրփուրովը:

Օրն էլ կը գայ նստած մի երիվարի վերայ՝ որ կոչւում է Լուսաբաշ. նրա հրեղէն մազերն են որ լուսաւորում են երկիրն և երկինքը:

Քրեց Սէմունէս Սիկփուզոն Շվետացի

ԶԻՒՒՈՐԻ ՄԱՀ

ԺԳ.

ԶԻՆՏՈՐԻ ՄԱՀԸ

Դանիմարքացիները, միջին դարում, ունիին ի-
րանց աշուղները, որոնց Սբալս էին կոչում:

Սրանց մէջ մի բացառիկ գիրք է զբաւում Ռեն-
կար Լօսարօք, Դանիմարքայի թագաւորը:

Մէջ ենք բերում նրա մի փոքր երգը, իր մահ-
ուան վերայ զրուած, երբ մեռաւ Անդիայում մի բան-
տում իժերով լցուած:



I

Պատերազմեցանք սրերով:

Դանիմարքայի որդիներ, զարթեցրէք պատե-
րազմի աստուածը. զարթեցրէք նրան ձեր պողպատէ
զէնքերով:

Դուք չգիտէք իմ չարչարանքները, դուք չգիտէք
թէ նրակս կաշկանդուած եմ օձերից:

Ես իմ որդիներիս մի այնպիսի մայր եմ տուեր
որ դիւցազներ է ընծայում աշխարհ՝

II.

Պատերազմեցանք սրերով:

Մահս ահա մօտենում է, իժերը պինդ սեղմում
են ինձ. օձը բնակարան է հաստատել սրտում:

Յուսով եմ որ Վիտարի բարկութիւնը պիտի
ծանրանայ ելլիսի վրայ. կատաղութեամբ պիտի վատ-
ուին իմ որդիքները, երբ լուն իրանց հօր մահը, նը-
բանց երիտասարդ արիւնը պիտի չգաղարուի եռալուց
մինչև նրանք իմ մահուան վրէժը չլուծեն:

III.

Պատերազմեցանք սրբով.

Յիսուն և մի անգամ իմ՝ որդիներին պատերազմի
հմ տարել:

Ես չեմ կարծում որ ինձանից զօրաւոր մարդ կա-
րող է գտնուել աշխարհում:

Ո՞չ. ամենեին չեմ ցաւում իմ մահուան վերայ:
Ահա աստուածունիները, Ոտինոսից ուղարկուած, գա-
լիս են դէպ ինձ:

Ուրախ սրառվ կը գնամ (երկնքում) պատրաստ-
ուած գահոյքների վերայ բազմելու, և գարեջուր խմե-
լու՝ աստուածների հետ:

Իմ կեանքի ժամերը հասել են իրանց ափունքին:
Ծիծաղկոս երեսներով ահա մեռնում եմ ես:

Դրեց Ռենկուր Լոսքրօֆ Դանիմարքացի

ԲՈՂԵՄՆԵՐԻ ՔԱՅԼԵՐԳ

ԺԴ.

ԲՈՀԵՄՆԵՐԻ ՔԱՅԼԵՐԳԸ

Բոհեմկացիներն էլ ունեցել են իրանց ազգային
բանաստեղծութիւնը:
Իբրև նմայ, ներկայացնում ենք այստեղ՝ նրանց
պատերազմի քայլերդը:



Լուսաշողով արեգակ, ով հրեղէն աշխարհ, ով
մեր սիրելին, ինչի՞ այդքան դիւրութեամբ նայում ես
մեզ:

Ինչի՞ ուզարկում ես մեզ՝ ջախջախուած Բոհեմ-
ներին՝ աժգոյն ձառագայթներ: Ասա մեզ, ուր է գնա-
ցել մեր իշխանը. ասա մեզ, ուր են մեր բանակները:

II.

Նա խոյս է տուել թագնուել Ողինոյի պալատում:
Ո՞վ զժրազդ և որը աշխարհ, ով պիտի փրկէ
քեզ. — զու ինքնդ:

Նայիր. մօտենում են թշնամիների գունդերը:
Ո՞րքան երկար է նրանց գիծը. բազմութեամբ իջնում
են լեռների կրծերի միջից և յարձակում մեր հովիտ-
ների վերայ:

III.

Դժբանդղ ժողովուրդ, պիտի բռնազատուիս նրանց
տալ քո ոսկին, քո արծաթը, քո ամէն ինչը. քո և քո
նախահայրերի ողորմելի խրճիթները՝ պիտի մատնուին
հբդեհի նրանց զինւորներից:

Այս նրանք դերում են մեր ոսկին, մեր արծա-
թը. այրում են մեր բնակարաններին:

Նրանք փախուստի են բռնազատում մեր զօրքե-
րին և ողորում են Դրսագին:

IV.

Մի լար, մի լար, ով երկչու զիւղացի. շուտով
կը տեսնես խոտերի աճին և կանաչանալը՝ Բոհեմիա-
կան գաշտերում, թշնամիներից կոխոտուած: Մեր թու-
լացած բազուկները փութով կը կազուբուին և մենք
նրանց մէջ գոյնգոյն ծաղիկներ պիտի ժողովենք մեր
զիւցազների զլուխները պակելու համար: Նայիր, ահա
ուոճանում են զարնան սերմերը: Առասութիւնը պի-
տի յաջորդէ, բաղդը պիտի փոփոխուի:

V.

Նայիր: Պէնէշ ժողով է անում բոլոր ժողովրդի
հետ ինքն ժողովուրդը պիտի հալածի Սաքսոնիացի-
ներին:

Այն գունդը որ բարձր զգեակն է պահպանում՝
հեղեղօրէն վազում է անտառներում և գաշտերում,
յառաջ գնում, սրերի տեղ՝ բահերով զինուած, և ահա
պաշարում են թշնամուն: Նրանց մէջ առաջինը՝ Պե-
նէշն է, Պենէշը:

VI.

Արշաւում են բոլորերին կատաղութեամբ և ուժ-
կին. աղաղակում են նրանք. «Վրէժ. վրէժ մեր երկի-
րը աւելողներից. վրէժ Սաքսոններից. վրէժինդրու-
թին, վառուիր մեր զօրքերի մէջ: Վրէժինդրութին,
բորբոքիր ամէն մէկի սիրաը: Վրէժինդրութին փայ-
լիր ամէն մէկի աչքերում»:

VII.

Երկու բանակներն էլ գոսում գոչում են ահաւոր
սպառնալիքներով,

Խառնում են միմեանց հետ. բիրերը բիրերի հետ
են բաղխուում, նիզակները՝ նիզակների. մարմինների
ընդհարումը պատառում է օգը՝ լսեցներով մի անտա-
ռային ճայթում. բաղիւող սրերը՝ փայլատակում են
կայծակների նման:

VIII.

Ահաւոր աղաղակներ, սարսափեցնող ձայներ գլշպղում և վախեցնում են ամենի գաղաններին և թղոչուններին՝ խուլ և խաւար անտառներում։ Զորի արձագանքը բաղխւում է լեռների կատարներին և նորից գէպի երկիրը գալիս։ Բիրերի և մեծ սրերի ձայները թւում են մահուան մի անոելի ներդաշնակութիւն։

IX.

Այսպէս երկու բանակները հաստատուն մնացին և անպարտելի։ Նրանց ոտները խրել գամուել են գետնում։ Պենէշ թռչում է մի ժայռի կատար և բարձրացնում իւր վիթխարի սուրբ՝ իւր բանակի աջ թեփ վերայ։ բայց նա տկարացել էր. գէնքը դարձրեց գէպի ձախը, որ գեռ իր արդար ոյժը չէր կորցրել։

X.


Երա քաջ զօրականները մազլցում են և ժայռերի պատառուածքներից վեր բարձրանում. վիթխարի բարեր գլորում թշնամիների վերայ։

Լսեցէք։

Պատերազմի հրդեհը գեռ աւելի բորբոքում է։ Մայրէկ արէք գէպի գաշտը. Հեծեծանքներ...

Այն, վիրաւորում, արխնոտում, փախչում են ֆերմանացիք։

Արինլուայ գետին են տապալում։ Մերն է յաղթութիւնը։



ՍԵՐՎԱՆԹԵՍ

ԺԵ.

Միկէլ աը Սերվանիքս աը Սամակէտրա ծնուել է
1547-ին, և վախճանուել 1616-ին:

Սպանիացի էր նա, ահանելով իր երկրում ասպե-
տական վէպերի առատութիւնն և նրանց գործած ա-
հագին ազգեցութիւնը, նրանց ոչնչացնելու գաղափարն
յղացաւ: Հենց այս պատճառով զրեց իր երգիծաբա-
նական զիւցազներգութիւնը՝ Դոն Քիոր վերնազրով:
Դա մի զիւղացի է, որ ասպետական վէպերի ընթերց-
մամբ խելագարած, զնում է ամէն աեղ քաջագործու-
թիւններ անելու:

Փիլիպպոս Գ. Սպանիացի թագաւորը՝ մի օր տե-
սաւ մի պատահու՝ որ բարձրածայն ծիծազում էր:
«Կամ յիմար է դա, ասաց, կամ Դոն Քիոր է կար-
գում»: Պատահին՝ ձեռքումը Սէրվանիթէսի զիրքն ունէր:
Այս զիրքը, որ վերջ զրաւ մի ամրող աշխարհի ծաղ-
րական զրականութեան, զուեշտական զրքերով ամե-
նից աւել հոչակուածն է.

ԴԱՆ ՔԻՇՈՅ

Դոն Քիորթ զը—լա Մանչի բնաւորութեանը՝ և
նրա զլաղմանըների մասին:

Մանչի զիւղերից մէկի մէջ, շատ փոյթ չունիմ
նրա անունը յիշելու, ապրում էր, ոչ շատ յառաջ, այն
ազնուական մարզիկներից մէկը, որ ունեն մի հին նի-
գակ, մի ժանդառած վահան, մի վախտ երիվար, և մի
որսական շնոն:

Մի խաշած միս, աւելի յաճախ կովից՝ քան ոչ-
խարից, երեկոյեան էլ մի քիչ քացախոտ կերպակուր,
շաբաթ օրերը ձուածեղ, ուրբաթ օրերը՝ ոսով, և կիւ-
րակի օրերն էլ մի քանի աղաւնի աւելի, սպառում էին
նրա հեամտի երեք քառորդ մասը: Մնացեալը՝ վճա-
րում էր իր՝ բարակ կտակից շինուած տառատոկը,
թաւշեայ տարագը, և հողաթափները՝ որ տօնական օ-
րերը նոյնպէս թաւշեայ էին, և թանձր կտաւէ հակուս-
ոը՝ լուր օրերի համար:

Իր տանը կային մի տանտիկին՝ որ քառասունը
անցել էր, մի եղրօր—աղջիկ, որ գեռ քսան տարեկան

Հէ եղել, և մի ծառայ, որ ծառայում էր տանը, ախոսով մէջ, աշխատում էր և արտում և կարում էր որթի ձղերին:

Մէր ազնուական մարդու տարիքը համարեա մօտեցել էր յիսունի:

Նա ուժով էր, կորովի, չոր մարմնով, վտիս կերպարանքով, առաւօտները վաղ զարթնող և մեծ որսորդ:

Կարծւում է որ ունէր իրը մականուն Թուզագակամ Քուէզադա: Պատմագիրները չեն համաձայնութեամ այս մասին: Ինչ որ աւելի հաւանական է թւում, ոսէ որ նա կոչւում էր Թուիկզադա: Շատ փոյթ չանենք Քրա մասին, բաւական է որ դէպքերը ստոյդ լինին:

*

Երբ մեր ազնուական մարդը անկործ լինէր, այսինքն է օրուան երեք քառորդ մասը, նա զբազւում էր կարգարով ասպետութեան վրայ խօսող գրքերին այնքան հաճոյքով և զմայլմունքով, որ այնուհետեւ որսորդութիւնը՝ և տնական գործերին մոռացաւ:

Իր այս եռանողը այնքան աճեցաւ, որ նա վաճառեց իր կալուածների մի մասը և կանգնեց մի գրադարան կազմուած այնպիսի գրքերից, որոնց մէջ ամենից աւելի սիրում էր մեծահոչակ Ֆէլիսեան գը Սիյլուայի երկերն:

Այդ հեշտ և յստակ արձակը, որ գրեթէ միշտ գուրել է մի որ և է մարդից, իրան գարմանալի էր թը-

ւում, մանաւանդ այնքան գողարիկ նամակների մէջ ուր սիրականները իրանք իրանց բացատրում են այսպէս.

«Պատճառը այն անպատճառաբանութեան, որին պատճառում էր իմ պատճառարանելու կարողաւթեանը, այնքան տկարացնում է իմ խելքը, որ պատճառ ունիմ զանգատուելու՝ ձեր գեղեցկութեան մամին»:

Խօսելու այս բնական եղանակը շատ հաճոյ էր անցնում մեր ազնուական մարդուն:

Միայն բարկանում էր ինքնիրայ դէմ, որ չէր կարող գուշակել այդ խօսքերի միտքը, և տանջնում էր՝ հասկանալու համար այն՝ ինչ որ ինքն Արիստուէլքս կարող չպիտի լինէր հասկանալու:

Նա չէր զագարում զարմանալուց՝ Դոն Բելիանիսի ափ առւած և ընդունած հրաշալի վերքերին վերայ. որքան էլ վերարոյցները ձարտար լինէին, թւում էր իրան՝ որ տարօրինակ սպիներ պէտք է մնային նրանցից: Բայց ամէն ինչ ներելի էր հեղինակին, այն անվերջանալի արկածին համար, որին խոստանում է պատմել իր գրքի վերջը:

Շատ անգամ, մեր ազնուական մարդը փորձութիւն էր զգում գրիչն առնելու և աւարտելու այս գեղեցիկ զլուխ գործոցը.—Իրան ժամանակը պակասեց:

Յաճախ նա վէճ ու կոիւ էր անում գիւղի քահա-

նային հետ, որ կրթուած մարդ էր և մի աստիճան ունէր Սիկէնսի մէջ, թէ որքան գեղեցիկ էր կամ ոչ Փալմբէն և Անկլըրէն և Ամասի Տրոլ:

Վարպետ Նիկոլան, նոյն գեղին սափրիչը, ինք զինքը յայտնի կուսակից էր յայտարարել Արեգակի աստեախն, և նրանից յետոյ նախամեծարում էր Դոն Գալառին, Ամազիսի եղորը, որովհետեւ, ասում էր, առաւական հանգուրժելի մարդ է, և միշտ չէ լալիս, իր լալկան եղորը նման:

Գերջապէս, միր ազնուականը, միայն այս գաղափարներով զրադուած, իր օրերին և գիշերներին անցնում էր նրանց վերայ որոճալով:

Այս անընդհատ ընթերցմունքն և քնի պակասը՝ նրա ուղեղը ցամաքեցրին. նա խելքը կորցրեց:

Նրա խեղճ գլուխը այնունետ լի էր միայն կախարդութիւններով, պատերազմներով, մենամարտութեան հրաւերներով, տանջանքներով, և բոլոր այն յիշարութիւններով՝ որոնց հանգիպել էր այս զրբերում:

Նա մի և է փոքր տարակոյս անգամ չունէր այս պատմութիւնների ստուգութեան մասին, և ասում էր լրջօրէն թէ Սիտ Ռուի Տիալ մի լաւ ասպետ էր եղել, բայց չէր կարելի նրան համեմատել Եռանդուն—Սրի ասպետին հետ, որ մի հարուածով, երկու հսկաներին ճեղքում էր մէջտեղից:

Նոյնպէս շատ մեծ համարմունք ունէր Բէռնար ար Ֆարփիօյի վերայ, որ յաղթեց գիւթուած Ռուանտին, որպէս Հերսլիչ Անտէայի:

Մէծն Մորգանաը նրան անհաճոյ չէր թւում. նա համարում էր բաւականի լաւ կրթուած՝ մի հսկայի

համար: Բայց իր սիրելին, իր սրտի հատուբը, էր Ռընօ ար Մոնաարան, մանաւանդ երբ նրան ակնուում էր գղեակից կուրս գալիս, որպէսպի գնայ ուղերներին թալանելու:

Այնքան սիրում էր այս հերոսին, որ պատրաստ էր տալու իր տանտիկինը, իր եղոր աղջիկն էլ վրայ տալ, որպէսպի կարենար հաճոյքն ունենալ՝ մատնիչ կանըլոնի ականջները քարչելու:

*

Շուտով նրա մտքի մէջ ծագեց ամենից անսուպոր գաղափարը, որ եղած լինի աշխարհում:

Նա երեսակայեց թէ ոչինչ այնքան զեղեցիկ, այնքան պատուաւոր պիտի լինէր իրանց համար, աւելի օգտակար իր հայրենեաց, որպէս յարութիւն տալ՝ թափառական ասպետութեան, հեծնել ձին, զինուել բաղզախնդիր ասպետների նման, արկածնել պտրել, յանցաւորներին պատժել, բոլոր անիրաւութիւնների առաջքն առնել:

Խեղճ մարզը արգէն իսկ կարծում էր որ իր քաջութեամբ՝ Տրապիզոնի կայսրութեան աշխարհական եղած լինի:

Այս յոյսերով հարբեցած, վճռեց իսկոյն գործի սկսել:

Առաջին գործը եղաւ՝ գնալ պտրել հին զէնքեր, ժանգով ծածկուած, որոնց ժառանգել էր իր հաւու հաւից և թողուած մնացել էին մի անկիւնում:

Նա նրանց մաքրեց, շտկակեց, որքան կարողացաւ. բայց տրտմութեամբ տեսաւ՝ որ սաղաւարտի մի ժամանք պակասում էր:

Իր ճարտարութիւնը՝ թերին լցրեց. այդ կէսը ամբողջացրեց ստուարաթղթով, և նրան յաջողուեց շինել մի բան որ նմանում էր սաղաւարտի: Յետոյ կամելով փորձել թէ գիտցկուն է թէ ոչ, նրան իր բոլոր ուժով մի հարուած իջեցրեց. իսկոյն և եթ փըշացաւ՝ մի ամբողջ շաբաթուայ աշխատանքը:

Մի սաղաւարտի՝ խորտակուելու համար ցոյց տըշտած այս չափազանց ընդունակութիւնը՝ նրան չատ հաճելի չանցաւ:

Նորից սկսեց աշխատել և այս անդամ նրա գերայ աւելացրեց երկաթեայ փոքրիկ կապեր, որ նրան մի քիչ աւելի ամբացրին: Գոհ էր իր արած գիւտին վերայ, և չցանկանալով նորից նրա տոկոնութիւնը փորձել, ինքն իրան համարեց այլիս լաւ սպառազիշնուած:

Սրանից յետոյ՝ նա գնաց իր երիվարը տեսնելու, և թէպէտ խեղճ անասունը ոչ այլ ինչ էր՝ բայց մի չոր կմախք, այնուամենայնիւ նրան աւելի ուժեղ թուեց քան Մեծն Ալեքսանդրի Բուցէֆալը՝ կամ Միտի Բարիէսան:

Չորս օր մտածեց՝ թէ ինչ անուն պէտք է դնել իր երիվարին. նա չատ տագնապում էր. վանսդի, կամենալով աշխարհի մէջ աղմուկ հանել, ցանկանում էր որ այս անունը արտայայտէ այն՝ ինչ որ եղել էր նըժոյգը իր փառաւոր բաղդին հասնելուց առաջ: Յետ ընդունելու, մերժելու, փոխելու չատ անուններ, նա

յանգեցաւ Ռոսսինոնիք անուան, մեծահնչիւն, գեղեցիկ, մեծ, նշանակալից անուն:

Նա այնքան գոհ եղաւ՝ իր երիվարին համար այսքան փառաւոր անուն դտած լինելուն համար, որ վճռեց մի անուն ալ ինքն իրան համար գտնել:

Այս աշխատանքը տես ութ օր: Վերջապէս ինքնեւ իրան անուանեց Դոն Քիչոթ:

Բայց, միաքը բերելով որ Աւատիսը գոհ չէր եղել անուանելով ինքնիրան միայն Ամասիս և թէ նրա վերայ աւելացրել էր Կօլ (Ֆրահսա) իւր հայրենիքի անունը, նա կամեցաւ այնուևես կոչուել Դոն Քիչոթ աը լա Մանչ (Մանչեցի), որպէսզի իր հայրենիքն էլ իր փառքերին մասնակից անէ:

Փոքր բան չէր, ի հարկէ, ունենալ զէնքեր, մի կէս-սպառաւարտ, ստուարաթղթէ շինուած, մի նժոյգ արդէն իսկ հոչակուած, և մի էլ անուն ինքնիրայ համար: Բայց ամենից հարկաւոր բանը՝ գեռ պակասում էր.— մի տիկին՝ որուն նուիրէր իր ծառայութիւններին:

Որովհետեւ տիկին չունեցող ասպետը ոչ այլ ինչ է, բայց մի ծառ, զուրկ պտղից, տերեկից, մի տեսակ մարմին, զուրկ հոգուց:

«Եթէ իմ մեղքերիս համար, ասում էր նա, կամ մանաւանդ իմ երջանկութեան համար, մի հսկայի հետ չափուեմ, ինչ որ պատահում է ամէն օր, և առաջին հարուածով նրան տապալեմ, մարմինը երկու մասի ձեղքեմ, կամ վերջապէս նրան ստիպեմ անձնատուր լինելու, ինձ որբան մեծ հաճոյք պիտի լինի նրան յուղարկելը իմ տիկնոջ մօտ, որպէսզի նրան հերկա-

յանալով, նրա առջեն ծնկի դայ և ասի մի խոնարհ ձայնով.

«Տիկին, դուք այստեղ տեսնում էք Քարաքու-
լիամբրօ հսկային, Մալինարանիա կղղու թագաւորին: Ա
չոչակաւոր ասպետը, որին՝ համբաւը չէ կարող բաւա-
կանի գովել, Դուն Քիչոթ զը լա Մանչ, մենամարտով
ինձ յաղթեց և հրամայեց գալ Նորին Մեծութեան ոտ-
քը, որպէսզի իմ բաղդը վճռէք»:

Ա՛ն, որքան գոհ եղաւ մեր զիւցազնը, երբ այս
ձառը արտասանեց, և որքան աւելի՝ երբ իր տիկնոջ
անունն էլ գտաւ:

Ոչ շատ հեռի գտնում էր մի գեղջկուհի, բաւա-
կանի սիրուն, նրան իր սիրականը անուանեց:

Նա կոչում էր՝ Ալանզա Լորէնցո: Բայց՝ կամե-
նալով նրան տալ մի այնպիսի անուն՝ որ իշխանուհու
յարմար լինէր, նրան անուանեց. Տիւլինի դի. Թօքոզ:

Նա բնակում էր Թոբոզո գիւղում:

Այս անունը, որի համար այնքան աշխատութիւն
կրեց, նրան երեւաց այնքան ներդաշնուկ, այնքան
նշանակալից՝ որքան բոլոր միւս անունները՝ որոնց
հնարել էր:

Գրեց Սերվանքիս Սպանիացի

ՀԱՅՐԵՐԱՎ

ԺԶ.

Հոմերոս, յոյն բանաստեղծներից մեծագոյնն և ամենահոչակաւորը ծնուել է հաւանօրէն Զմիւռնիտ քաղաքում, Քրիստոսից հազար տարի առաջ թէպէտ նրա ծննդեան առոյդ թուականն անյայտ է: Նա զրել է երկու գիւցազներգութիւն՝ իլիական և Ադիսական:

Իլիականում իր գիւցազն է Աքիլլէս, որ պաշտում է Տրոյիա քաղաքը, և սպանում իր ախոյեանը, Տրովացիների հերոսը, Հեկտորը: Մարդիկներից բացի, աստուածներն էլ երկու խմբի են բաժանուած. մի մասը պաշտպանում է Տրովացիներին, միւսը՝ Աքիլլէսի զօրքերին: Տեսարանը՝ մերթ երկումս է, մերթ երկնքում. Արամազդ հազիւ կարող կը լինի սպառնալիքներով կարգի բերել իր աստուածներին, որոնք իր կամքի հակառակ, պատերազմի կերպարանքն են փոփոխում: Շատ նշանաւոր է իլիականի մէջ Տրովացիների հերոսին, Հեկտորի, պատերազմելու համար քաղաքից դուրս գնալը, հրաժեշտ տալով իր ամուսնուն, Անդրոմարէի, որ իր երեխայն գրկում, խնդրում է նրանից՝ զգոյշ կենալ, կոռւել պարիսպներում և չհեռանալ:

Ոդիսականի զլսաւոր և ամենից շեշտուած անձնաւորութիւնն է Ոդիսես, որ Տրոյիայի պաշարումից յետոյ, նաւով յետ դառնալիս, մոլորուելով ձանապաշնից, շատ ուշ հասնում է իթակէ կղզին, իր թագաւորութեան տեղը, ուր գտնում է իր տունը՝ թշնամիների մատնուած:

Իլիականի և Ոդիսականի գեղեցիկ և զրաբար լեզուով թարգմանութիւններին կարելի է ստանալ վեհետկից, որի վարդապետներից մին, և Արսէն Բագրատունի, անմահացել է իրու անհամեմատ թարգմանիչ Հոմերոսի:

ՀԵԿՏՈՐԻ ՀՐԱԺԵՑԸ

Երբ անցնելով մեծ քաղաքից, Հեկտոր հասաւ արևմբաւեան զրան առաջ, Ուսկից նա պէտք էր զուրս գալ քաղաքից զէպի զաշար, իր բազմօժիտ ամուսինը փութաց, ընդառաջ եկաւ նրան... Միասին գալիս էր և իր աղախինը՝ Գրկած Հեկտորի փոքրիկ երեխայն՝ որ գեռ կարող չէր խօսելու, Հեկտորի երեխայն, որ սիրելի էր ու չնորհալի՝ որպէս մի ասող:...

Հեկտոր, նայելով իր որդուն, ժպտեցաւ լուռթեամբ, Անդրոմարէ, նրա մօտ կանգնած, արտասաւում էր: Իր ձեռքը գրաւ Հեկտորի ձեռների մէջ, նրա անունը տուեց, և այսպէս խօսեց. «Ո՞վ հերոս, քո հոգին քեզ կորստեան պիտի տանի. Դու չես գթայ այդ փոքրիկ երեխային վերայ, իմ վերայ որ այնքան կանուխ այլի պիտի մնամ քեզանից.

Որովհետեւ բոլոր Աքայեցիք միասին քո վերայ պիտի
յարձակուին,

Պիտի սպանեն քեզ: Եթէ ևս զուրկ մնամ քեզանից
Լաւագոյն է որ հողի տակ մտնեմ. որովհետեւ եթէ դու
մեռնիս,

Իսձ համար այնուհետ չկայ մխիթարութիւն, այլ ցա-
ւեր միայն:

Որովհետեւ ոչ հայր ունիմ ես և ոչ մայր.

Իմ հօրը սպանեց աստուածներից սերած Արիլէսը...
Եօթը հարազատ եղբայրներ ունէի նրա ապաբանքում,
Ամէնքն էլ մի օրուայ մէջ գերեզման իշան...

Իմ մօրն էլ սպանեց իմ հօրը ասնը Արտեմիս, որ-
ոորդ աստուածուհին...

Բայց դու ես, ով Հեկտոր, իմ հայրը, իմ սիրելի մայ-
րը,

Իմ հարազատ եղբայրը, իմ պաշտելի ամուսինը:

Եկ, ողորմէ, մխ, կաց այս բերդում,

Մի թողուր որ ըո որդեակը որբ դառնայ, և ես էլ
այրի...»:

Պատասխան տուեց մեծն Հեկտորը, ճօճելով իր սաղա-
ւարտը.

«Ես ինքս էլ, ով կին, մտածում եմ այդ բոլորը,
Բայց ամաչում եմ վատարար պատերազմից հեռանա-
լուց,

Ամաչում եմ Տրովացիներից, և նրանց երկայնազգեստ
կանանցից:

Այդ բանը ինձ թոյլ չէ տալիս և իմ սիրտը, որովհետեւ
ես սովորել եմ միշտ քաջ լինել

Դիւցազն Տրովացիների գլուխն անցնել և կոռել
իմ հայրենեաց և իմ անձի փառքին համար.

Իմ միտքը և իմ սիրտը ինձ ասում են,

Որ կը գայ մի օր՝ ուր պիտի կորչի սուրբ Տրոյիան,
Պրիամոս թագաւորը և Պրիամոսի տիգաւորը
դողովուր-
դըն էլ միասին:

Բայց ես այնքան փոյթ չեմ անի Տրովացիների մօ-
տալուտ ցաւերի վերայ,

Ոչ էլ Հեկտորէի, ոչ էլ Պրիամոսի վերայ,

Ոչ էլ իմ հարազատ, բազմաթիւ և զօրաւոր Ազրայր-
ների վերայ,

Որ թշնամիներից սպանուած՝ պիտի թաւալուին փո-
շու մէջ,

Որպէս քո վերայ... թերես զբան հակուած Աքայեցինե-
րից մին,

Ազատութեանդ արել հանգյնելով, քեզ գերի տանի:
Թերես գնաս Արգոս, և ուրիշի կնոջ համար սկսես

բանուածքներ գործել,

Կամ ջուր կրես՝ Միսոէի կամ Հիպերի աղբիւրից,
եւ չարաչար տագնապ ունեղութիւն կրես դառն հարկի

մէջ գտնուելով.

Թերես մին՝ քեզ տեսնելով արտասուելին՝ ասէ.

Հօ, զա Հեկտորի կինն է, այս մարդու կինը, որ Տրո-
յիայի պատերազմի ժամանակ,

Լաւ ձի հեծնող Տրովացիների մէջ՝ ամենից քաջ ուազ-
միկն էր:

Այսպէս պիտի ասէ մին, և նորից պիտի ցաւիս,
Որ այդպիսի մի մարդու համար՝ գերութեան ևս մատ-
նուել.
Լաւագոյն է որ հողի մի կոյտ, մի գերեզման ինձ
ծածկէ,
Քան տեսնեմ քո ճիշը, քո աբտասուքն և անարգանքը»:
Այսպէս խօսեց Հեկտոր և իր ահեղ բազուկներն երկա-
րեց դէպի որդին,
Իսկ երեխան իւր դայեկի գեղեցիկ ծոցին մէջ ապա-
փնելով՝
Ճիչ բարձրացրեց ու խոնարհեց, իր հօրը կերպարան-
քից զարհուրած,
Վախենալով պղնձից և ճիռ մազերով զարդարուած
սաղաւարտից;
Տեսնելով նրա ճօճելը՝ սարսափելի կերպով:
Սիրելի հայրը և մեծարելի մայրը՝ ժպտեցան տղու
արածին վերայ:
Իսկոյն ևթ ահեղ Հեկտորը գլխից վերցրեց փայլվուն
սաղաւարտը,
Եւ նրան վայր գրաւ գետնի վերայ.
Եւ գեղեցիկ երեխայն իր ձեռքերին մէջ առնելով և
համբուրելով,
Այս ազօթքը ուղղեց Արամազդին, և այլ աստուած-
ներին.
«Ո՞ւ Արամազդ և գուք, այլ աստուածներ, թող իմ
որդեակն էլ
ինձ նման լինի հոչակաւոր Տրովացիների մէջ.
Նոյնպէս զօրաւոր լինի Տրոյիայի մէջ, և նոյնպէս քաջ»:


Երանել, եթէ նոյն իսկ ասէին. սա իր հօրից էլ քաջ է,
Երբ զանայ պատերազմից և բերէ արիւնոտ աւարներ,
Սպանելով իր թշնամուն և ուրախացնելով իր մօր
սիրտը»:

Այսպէս խօսեց իր ամուսնուն և երեխայն՝ իր սիրե-
լուն տուաւ:
Նա ընդունեց տղան իր քաղցրաբոյր գրկի մէջ՝
Ուրախութիւնից արտասուելով: Հեկտոր գորովեցաւ
այդ տեսնելով,
Փայլիայեց ձեռքով իր կնոջը, նրա անունը տուեց և
ասաց.

«Նաղելիս, թող քո սիրտը այնքան չտխրի ինձ համար,
Ոչ ոք կարող է ինձ գերեզման իջեցնել՝ եթէ ճակա-
տագիրը դեռ այլ չէ վճռել,
իսկ եթէ նա միանգամ վճռեց, ոչ վատասիրտը, ոչ էլ
քաջ՝
Զեն կարող խոյս տալ նրանից:
Բայց զու քո տունը գնա, գործերից զբաղուէ,
Ելիկիդ, ասեղիդ, և հրամայէ ազախիններիդ
իրանց գործերին ուշ գնել. իսկ
Տրոյիայի մէջ ծնած բոլոր այլ մարդիկները՝
Պէտք է պատերազմի վերայ մտածին. ևս մանաւանդ»:

Այսպէս խօսեց ահեղ Հեկտորը. զիմին դրաւ ձիու մաշ-
գիրով զարդարուած սաղմարտը.
Իոկ սիրելի կինը զիմեց զէպի իր տունը,
Սակայ սակայ ետ նայելով, և ջերմ արտասուքներ թա-
փելով:

Գրեց Հոմեռո Յոյն



Վ Ե Ր Գ Ի Լ Ի Ո Ս

ԺԵ.



Վիրագիլոս, Հոռվմայեցի բանաստեղծներից ամենամեծը, Հոռվմի Հոմերոսը, ծնուել է Մանդուայի մօտ 70 տարի Քրիստոսից առաջ. վախճանուել է 19 տարի Քրիստոսից առաջ:

Նա ապրում էր Օգոստոսի կայսերութեան ժամանակ, երբ բոլոր աշխարհ հպատակւում էր Հոռվմայեցիներին, որ իրանց զօրութեան, զրականութեան, քաղաքակրթութեան և չռայլութեան դադարնակէտն էին հասել:

Վերգիլոս գրել է մի դիսցազներգութիւն Ենէական, որի հերոսն է կործանւող Տրոյիայից փախած՝ Հոռվմայեցիների նախահայր Ենէասը. Մօսկականի, որի մէջ նա երգել է Մշակի քաղցը կեանքն և նրա արուեստը, և Հովհերգութիւններ, որոնց մէջ նա խօսեցնուում է հովիւներին, զովարանուում բնութեան գեղեցկութիւններին և խաղաղ անպաճոյճ կեանքը:

Որբան Հոմերոս բարձր է նկատում իր հանճարով, վաս երևակայութեամբ, նոյնքան էլ Վիրագիլոսը՝ իր նուրբ ճաշակով, քնքոյշ զգացմունքներով:

Նապոլիի մօտ գեռ ցոյց են տալիս մեծ բանաստեղծի գերեզմանը, որ ուխտատեղի է գարձել:

Հ. Արտէն Բագրատունի, Վենետիկի Մխիթարեան, թարգմանել է զբարար, Վիրագիլոսի Ենէականը, Մը Շամականը, Հովհերգութիւնը:

Մենք առաջ ենք բերում Ենէականի երկրորդ երգը: Ենէաս համուում է Կարքեղոն. Նրա Դիզոն թագուհին բռնագատում է Տրոյիայի կործանման նկարագրութիւնն անել և սա սկսում է.

«Հրամայում ես ինձ, ով թագուհի, անպատմելի ցաւը նորոգել».

Այս տողը առած է դարձել:

ՏՐՈՅԻԱՅԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

Լուցին ամէնքը. երեսները դէպի նա դարձրած՝ (ապասում էին):

Այն ժամանակ իր բարձր անկողնից, աշուպէս մկնեց (խօսել) հայրն Ենէաս:

«Անպատմելի ցաւերին նորոգել հրամայում ես ինձ, ով թագուհի, թէ որպէս Դանայեցիները աւերեցին Տրոյիայի զօրութիւնը, և նրա ողբալի թագաւորութիւնը, ամենացաւալից բաներ, որոնց մասամբ ականատես եղայ, մեծ մասամբ էլ գործակից:

Միյլամիգոնների, Դոլոփների, կամ անգութ Ողիսեսի որ զինւորը կարող պիտի լինէր իր արտասուրքը գովելու, եթէ այս գէպքերի պատմութիւնը լաէր:

Բայց ահա խոնաւ գիշերը գահավիժւում է երկնարից, և թօթափւող աստղերը՝ յորդորում են քնել սակայն քանի որ այդքան փափակ ունիս մեր աղէտներին ճանաչելու, և Տրոյիայի գերագոյն տառապանքը լսելու համառօտ, թէպէտ հոգիս նրա յիշատակից անգամ սարսափում է, և ցաւից դժկամակում, կը սկսեմ:

*

«Դանայեցի զօրսավարները, պատերազմից խորակուած, ճակատագրից ետ մղուած, յետ այնքան երկար տարիների քանդակում են մի երիվար,—լեռան չափ մեծ.—Պալլասի աստուածային արտուեստով։ Նրան կողեր են տալիս՝ կարուած եղենավայտից։ Կեղծում են՝ իբր այն թէ վերագարձին համար մի ուխտ պիտի կատարեն։ Այս լուրը տարածում է։

Վիճակահանութեամբ ընտրում են ռազմիկներ, և նրանց թաքցնում (երիվարի) կոյր կողերի մէջ, և մինչեւ խորը զինուած ռազմիկներով լցնում են՝ նրան հագին քարայրները և որովայնը։

*

Տրոյիայի հանդէպ կայ Տեսեզոս, մի շատ հըռչակուած կղզի, ինչքերով ճոխ, երբ Պըխամոսի թագաւորութիւնը տեսում էր։ Այժմ նա մի ծոց է միայն և մի նաւահանգիստ որ շատ ապահով չէ նաւերի համար։

Այնտեղ փոխագրուած՝ նրանք ծածկուում են՝ տամայի ծովեղերթին վերայ։ Մենք (Տրոյացիքն) նրանց համարում էնքնը հեռացած, և հողմի օգնութեամբ հասած Միկնք։

Արդ բոլոր Տեկրիտ (Տրոյիա) թողնում է երկարա-

տեսուզը, գոները բացւում են, ամենքը փափառում են դնաւ տեսնել Դորիացիների բանակատեղին, և անապատ վայրերն, և լըուած ծովափը։

Այստեղ Դորիացիների գունզը, այստեղ անգութ Աշքիլէսը կանգնել էր իր վրանը, այստեղ էր նաւատորմութիւնը համար սահմանուած տեղը. այնտեղ սովորել էին ճակատ առ ճակատ պատերազմել։

Մի մասը ափշած գիտում է՝ կոյս Միներվային նուիրուած նենզաւոր պարգելը, և զարմանում են՝ երիվարի մեծութեան վերայ. և նախ Թէյմիդէս յորդում է երիվարը պարիսպներից ներս մազնել զետեղել նրան միջնաբերդում. (նա այսպէս խօսեց) կամ նենզութեամբ, կամ որովհետեւ Տրոյիայի ճակատագիրը այս էր կամենում։

Բայց Քափիյս և նրանք որոնց միտքը աւելի լաւ դատել կարող էր, խորհուրդ են տալիս, ծով զցել Յոյների լարած զարանը, կամ կրակ դնել նրա տակը և այրել, կամ պատառել և ըննել (երիվարի) որովայնի փորուածքներին։

Տարատամ ամբոխը բաժանուում է այլեայլ կարծիքների։

*

Այն ժամանակ Լատան, ամէնքի մէջ առաջինը, մի մեծ գնդի հետ, զայրացած վազում է միջնաբերդի գագաթից, և հեռուից աղաղակում։

«Ո՞ւ զժբաղդ քաղաքացիներ, որքան մեծ է ձեր յիմարութիւնը: Կարծում էք զուք որ թշնամիները գնացած լինին, կամ կարծում էք որ Յոյներից ալբուած մի ընծայ՝ նենգութիւնից դերծ լինի: Այդքան պիտէք Աղփսևսին ճանաչել:

Կամ Աքայեցիք են ծածկուել այդ փայտի ներքի, կամ այս մեքենայն յօրինուած է մեր սպարիսպներին կործանելու համար, մեր տները դիսելու, կամ քաղաքին տիրելու, կամ մի խարէութիւն կայ ծածկուած: Ո՞ւ Տեկեայ որդիքներ, մի վասահէք այս երիվարի վերայ: Որպէս էլ լինի, ես վախենում եմ Յոյներից, նոյն խակ երբ նրանք ինձ մի ընծայ են րերում: Այսպէս խօսելով՝ նա ուժգին բռնութեամբ մի մեծ նիզակ արձակեց անսուսնի կողին և որովայնի վերայ, որ կորածէ էին յօրինուած: Նիզակը գողգողալով կանգ առաւ, և որովայնը ցնցուելով, փորուած անձաւները հնչեցին, և մի արձականք արձակեցին: Եւ եթէ աստուածների վճիռները, և մեր միտքը ձախող չլինէին, նա մեզ պիտի մզէլ երկաթով աւերելու Արդիացիների դարանը, և զու այժմ, այ Տրոյիա, կանգուն պիտի լինէիր, զու այժմ էլ գոյութիւն պիտի ունենայիր, ոչ բարձր զեակ Պրիամոսի:

Բայց ահա Դարդանիացի հովիւները սուր աղաղակներ են բարձրացնում, և տանում իրանց թագաւորին մի տղամարդ, որի ձեռները կապուել էին թիկունքի վերայ, մի անձանօթ մարդ, որ նրանց հանդիպել էր պատահարար, ոբպէսզի օգնէ (նենգաւոր գործի յաջողութեանը), և բանայ Տրոյեան՝ Աքայեցիների առաջ քաջասիրտ և պատրաստ կամ նենգութիւններ

իդուուխ հանելու, և կամ անխուսափելի մահուան զոհ գնալու.

Ամէն կողմից, նրան տեսնելու փափագով, Տրոյիայի տղամարդիկ վազում, ըրջապատում են նրան, և մրցում են իրար հետ գերին ծաղր անելու մէջ:

* *

Լսիր այժմ Յոյների նենցութիւնները, և սովորիր ճանաչել նրանց բոլորին, միայն մէկ ոճիրը իմանաւրով:

Որովհետեւ երբ նա կանգնեց բոլոր նայուածքների մէջ տակնապած, անդէն՝ և տեսաւ իր շուրջ, Փոփւղական ամբոխը.

«Ափսոս, ասաց նա, այժմ որ երկիր, որ ծովեր կարող են ինձ ընդունել. կամ ինձ զժբաղդիս՝ այլիս ի՞նչ է մնում. որի համար՝ Յոյների մօտ չկայ մի ապաւէն, և կարձեալ Դարդանիացիք անգամ ինգրում են իմ տանջանքը և իմ արինը:»

Այս ողբը փոխեց ամէնքին, և ամէն զայրոյթ խաղաղուեց:

Յորդորում ենք նրան ասել, թէ որ արիւնից է, և ի՞նչ (լրեր) է բերում, և թէ կարո՞ղ ենք հաւատալ մի զերի մարդու:

Նա, վախեց աղատելով, այսպէս խօսեց.

«Տէր արքայ, ես բոլոր ճշմարտութիւնը կ'ասեմ, թող լինի ինձ, ի՞նչ որ պիտի լինի:»

Ես չեմ ուրանում որ ես ազգով Յոյն եմ. այս ամենից առաջ (խոստովանում եմ), և եթէ բաղդը Սիսանը դժբաղդ արաւ, կարող չէ կեղծաւոր և ստախօս անել նրան:

Եթէ երբէք, մէկի հետ խօսեիս, լսելիս Բելեան Պալամեդիսի անունը, և իր հոչակուած փառքը, որին սպանեցին Պեղասեանները անմեղին վերայ՝ կեղծ մատնութիւն կասկածելով, և մի զլուելի զրաբարտութիւն անելով, որովհետեւ նա պատերազմը արգելուք էր. այժմ նրանք արտասում են լոյսից զրկուածին վերայ: Իմ խեղճ նայրը ինձ էլ պատերազմի ուղարկեց (պաշարման) առաջին տարիներում, որպէսզի ընկեր եմ Պալամեդեսի, որի ազգականներից էինք մենք: Երբ նա ողջառողջ էր և իր թագաւորութիւնն մէջ, և թագաւորների խորհրդին մէջ ոյժ ունէր, մենք, մենք էլ բաւեկանի պատիւ և անուն ունէինք. Երբ նա նենդաւոր Ռդիսեսի նախանձի հետեանքով (խօսում եմ ոչ անձանօթ դէպքերի մասին) նա երկրիս ափերից չեռացաւ, տիրած, անցնում էի իմ կեանքը՝ սուզի և խաւարի մէջ, և զայրանում էի խորհրդով իմ անմեղ բարեկամի անկման վերայ: Յիմարաբար՝ կարող չեղայ լուս մնալու. և խոստացայ նրա զրէժը հանեւ եթէ զիակուածը ինձ մի որ և է պատմութիւն ընծայէր, եթէ կարող լինէի յաղթական դառնալ իմ Արգոս նայրենիքը, և իմ խօսքերով բորբոքում էի վայրագ ատելութիւններին: Այս եղաւ ինձ համար՝ չարի առաջնորդ նորից զարդարութիւնը մի անձինք է առանձնում, մի մեծ նուէր. որ բանակի մէջ էլ գանուի նա, եթէ անարատ մնայ, յաղթութեան պատճառ կը լինի. այս պատճառով Յոյները շինել են մի փայտաշէն երիվար, բայց այնքան մեծ՝ որ Տրոյիացիք կարող չինին՝ նրան իրանց քաղաքը փոխադրելու, և աստուածունու պաշտպանութիւնը ձեռք ընդունու:

Ժողովրդի մէջ, և իր ոճիրը զիտենալով, զէնք վերցնել (ինձ զէմ):

Եւ իրաւի, նա չպաղարեց, մինչև որ Քայլասի պաշտօնավարութեան ժամանակ... Յայց ինչի՞ իդուր երկարիմ այս անհաճոյ պատմութիւններին, կամ ինչի՞ յապաղիմ: Եթէ զորք բոլոր Արայեցիներին էլ հաւասարապէս ձեզ թշնամի էք համարում, և ձեզ համար բաւական է զիտենալ այս՝ (որ ես Յոյն եմ) փութացիք տալու իմ պատուհասը: Իթակեցին էլ (Ողիսես) կամնում է այդ և Ատբիղեանք պիտի գննեն իմ տանձանըը՝ մեծ զնով:

(Սիսոն յետոյ պատմում է, որ աստուածները մի ժամանակոն են պահանջել Յոյն բանակից, և այդ բանը իրան վիճակուելով՝ փախել է Տրոյիս. իր մահը՝ յաղթութիւն պիտի ընծայէր յոյն բանակին: Հենց այս պատճառով Տրոյիացիք խնայում են Սիսոնի, և ապա կամնում են զիտենալ՝ թէ ինչի՞ չինուել է այդ երիվարը: Սիսոն պատասխանում է, որ Յոյներ վերագարձել են իրանց նայրենիք, բայց նորից զարդարու և յանէարծ Տրոյիացիների վերայ յարձակուելու նենդաւոր զիտաւորութեամբ: Մինէրուան նրանցից մի պարզէ է պահանջում, մի մեծ նուէր. որ բանակի մէջ էլ գանուի նա, եթէ անարատ մնայ, յաղթութեան պատճառ կը լինի. այս պատճառով Յոյները շինել են մի փայտաշէն երիվար, բայց այնքան մեծ՝ որ Տրոյիացիք կարող չինին՝ նրան իրանց քաղաքը փոխադրելու, և աստուածունու պաշտպանութիւնը ձեռք ընդունու:

«Այս նենդաւոր պատճառածքը, Սիսոնի այս պար-

սաւելի հեաբագիտութիւնը՝ արժանի է լինում մեր
վաստահութեանը:

Կեղծ արտասուքներ, մի նենուաւոր մարդու խար-
դախ վարժունքը յազթեցին այն ռազմիկներին՝ որոնց
յաղթել չէին կարուացել ոչ Դիոմեդէս Տիյդեի որդին,
ոչ եռանդուն Աքիլլէսը, ոչ պաշարման տասը տարի-
ները, ոչ էլ յունական հազար նաւեր:

* *

Մի գէպը, աւելի մեծ, աւելի սարսափելի, ներ-
կայանում է մեղ գժբաղդներիս, և խոսվում մեր սըր-
տերը, որ նրան չէին սպասում: Լառքն, որ բաղդից
ընտրուած էր քուրմ Նեպտոնի, զոհում էր մի վիթխա-
րի ցուլ հանդիսական բազինների առաջ:

Բայց ահա—սարսում եմ պատմելիս, երկու իժեր
անսահման օղակներով, մեկնելով Տենեղոսից խոր և
խաղաղ ջրի վրայ ընկողմանում են՝ և դիմում են՝ գէ-
պի հանդիսակաց ծովափի:

Նրանց կրծքերը չըջապատուած են ալիքներից,
նրանց գլուխները իշխում են ջրերի վերայ. մարմին-
ների մնացեալ մասը ետեից սողում է ջրերի վրայ,
նրանց անսահման թիկունքից՝ կազմելով օղակների մի
շարք:

Փրփրած ծովի վերայ՝ լուսում է մի աղմուկ:

Եւ արդէն իսկ նրանք հասել էին ցամաք երկիր.
Նրանց աշքերը կարմրել էին բոցով և արիւնով. թըր-

թուն լիզուներով՝ լզում էին իրանց կոկորդներն, և
սուլոցներ արձակում:

Փախչում ենք ամէնքս՝ ահարիւն դէմքերով. Նը-
րանք, վստահ ընթացքով, մօտենում են լառունի, եր-
կու իժերը, միանգամայն յարձակում են նրա երկու
որդիքների վերայ, զրկում նրանց փոքր մարմիննե-
րին, նրանց իրար խառնում, և խածուածքներով պա-
տառուում նրանց զժբազզ անգամներին: Լառքոն
գալիս էր՝ նետերով զինուած, և վազելով օդնութեան.
բանում են և նրան, շղթայում են նրան՝ վիթխարի
օղակներով: Երկու անգամ պատատում են նրա մար-
մի շուրջը, երկու անգամ իրանք իրանց վերայ ծալ-
ւում են՝ նրա վկի շուրջը՝ իրանց թիկունքնե-
րով, և ապա նրա գլխից վեր (օդի մէջ բարձրացնում)՝
իրանց գլուխներին և վերասլաց վզերին:

Լառքոն, այդ վայրկեաններում, աշխատում է իր
ձեռքերով՝ նրանց հանգոյցները քակել. իր ժապաւէն-
ները՝ ողոգուում են լորձունքով և սև թոյնով. միան-
գամայն նա բարձրացնում է սարսափելի աղազակներ՝
գէպի աստղեր, նման ցուլի մոնչիւններին, երբ վիրա-
սորուած խոյս է տալիս բազնից, անվստահ կացինը՝
թօթափելով իր վկից:

Բայց երկու իժերը՝ սողալով-սահելով փախչում
են գէպի ամենաբարձր տաճարները, և մանում են՝
զայրացած Տրիտոնիայի բարձր բնակաբանը, ծածկում
են՝ աստուածունու ոտքերի և իր վահանի ներքեւ:

Այն ժամանակ՝ մի նոր սարսափ լցնում է ամէն-
քի գողաճար սրտերը, ասում են՝ որ լառքոն իր ոճիրն
էր քաւել իր նիզակով վասելով սրբազան անտառին

(երիվարին), սրովհետեւ նրա կողի դէմ արձակել էր՝ մի եղեսնաւոր նիդակ:

Ամէնքը միաբերան աղաղակում են, որ պէտք է պատկերը՝ աստուածունու բնակարանը փոխազբուի, և թէ պէտք է ազօթել նրա աստուածութեան առաջ:

Մենք բաժանում ենք պարիսպներին, և բաց աշումք քաղաքի պատուարներին:

Ամէնքը պատրաստում են գործի, և ձիերու ոտնարի ներքին անիւներ գնում՝ որպէսզի ասհէ, և չուաններ անցնում նրա պարանոցից՝ և քարշ տալիս:

Աղետաւոր մեքնայն, զէնքերով լիք, անցնում է պարիսպներից, նրա չուրջը պատանեակներ և չամուսնացած աղջիկներ, երգում են սրբազն երգեր, և ուրախանում են՝ երբ իրանց ձեռքով չուանին են զիաշչում:

Մեքենայն մանում է, և սպառնալից սահում մինչև քաղաքին մէջ:

Ո՞վ իմ հայրենիքս, ո՞վ իլիոն, աստուածների բնակարան, և զուք, Դարդանական պարիսպներ, պատերազմով հոչակուած: Չորս անգամ նա կանոյ առաւ նոյն խնկ զբան սեմի վերայ, և չորս անգամ զէնքերի ձայն լսուեց՝ երիվարի որովայնից:

Մենք սակայն չարունակում ենք, ուշ չգնելով այս աղմկին, կուրացած մոլորութեամբ, և զետեղում ենք սրբազն միջնարեգում աղետաւոր հրէշը:

Այն ժամանակ Կասսանդրոս բաց է անում իր մարդարէական բերանը, բայց աստուածները այնպէս վճռել էին, որ ոչ ոք Տրոյիացիներից մտիկ տայ նրան:

Մենք, գժբաղդներս, որոնց համար այս օրը

վերջինն էր, քաղաքում աստուածների տաճարները քօղարկում ենք տօնական տերեններով:

*

Բայց երկինքը պտըտում է, և գիշերը երակարար գուրս է գալիս Ովկիանոսից, իր անսահման ըստուերով ծածկելով երկինքն և ըենոք, և Միրմիզոնայ նենգութիւնքը. լուս են Տրոյացիք՝ ցրուելով պարիսպների վերայ. քունը տիրում է խոնջած անգամներին:

Եւ արդէն Արգիական վազանդը մեկնում էր Տեսնեղասից, նաւերը շարուել էին, զիմելով զէպի անծանօթ ափունքներ, չնորհիւ լութեամբ, որը համբ լուսնի բարեկամն է. թագաւորի նաւը, այս վայրկենին մի լապտեր վառեց նաւուն ետեր: Սինոն, պաշտպանուած աստուածների չարակամ վճիռներից, բաց է անում եղենափայտի կողերը՝ և զաղանապէս արձակում՝ երիվարի որովայնում ծածկուած յոյներին. բայցուած հրիվարը՝ թոյլ է տալիս՝ որ սրանք զէպի օդ գան, և ուրախութեամբ զուրս են զալիս՝ փորուած վաղնիից. Յոյների զիմաւորները, թեսանդը և Սթենիլոս, և անգութ նդիսևար, սահելով զէպի վար ձգուած չուաններից, և Ակամաս և Թօսաս, և Պելեայ որդին՝ նէպաղումնուը, և առաջին Մաքանը, և Մենելաոս, և Եփես

նենգութեան շինողը:

Տիրում են զինու և քնի մէջ թագուած քաղաքին. պահապանները սպանուում են, զոները բացուում, ըն-

գունում իրանց ընկերներին, և միանում՝ դաւակից գնդերի հետ:

*

Այն ժամանակն էր՝ ուր առաջին քունը սկսում է խոնջ մահկանացուների համար, և սահում է նրանց մեջ, շատ հաճելի կերպով, իրրե աստուածների մի նոուէր:...

Պարիսպները հնչում են զանազան հեծեծանքներով, թէպէտ իմ հօր, Անքիսի տունը բաժանուած էր միւսներից և ծառերից շրջապատուած, ձայները յըստակւում են, և զէնքերի սարսափը մօտենում է երազապէս:

Թօթափում եմ իմ քունը, և կանգնում եմ իմ տան բարձրագոյն գագաթին վերայ, և մնում եմ ուշագիր, ականջներս սրած. որպէս, երբ ցորերի մէջ լոց է ընկնում, և յառաջ է վարում հոգմից, կամ որպէս երբ մի հեղեղ, աճած՝ լեռներից գանավիժուող մի հեղեղատից աւերում է գաշտերին, փչացնում ծիծաղկու հունձքերին և եղների աշխատանքներին, և քարշ է ձգում իրա հետ արմատախիլ եղած անտառներին, անգէտ հովիւը ափշած է մնում՝ ժայռի բարձր կատարից՝ շառաշը լսելով:

Բայց ահա յայտնուում է ճշմարտութիւնը և Յոյների լարած դարանը...: Միասին բարձրանում են սագմիկների աղաղակը՝ չփորների գոսումը:

Ես ինձանից գուրս եկած, և առանց երկար խորհուութէ ինչ կարող եմ անել վագում եմ դէպի վէսքնը, իմ զգայութիւնքս ինձ բորբոքում են, յորդորում են մի գունդ հաւաքելու պատերազմի համար և իմ ընկերների հետ՝ դէպի միջնարերզը արշաւելու. մուեղնութիւնը, զայրայթը չփոթում են իմ միտքը, ասում եմ որ գեղեցիկ է մեռնել՝ զէն ի ձեռին:

Բայց ահա Փանթոս, խուսափած Աքայեցիների նետերից, Փանթոս, Ոտրիսախ որգին, միջնարերզի և Փերսոսի քուրբը, սարսափահար վաղում է դէպի իմ հօրպալար, մի ձեռքում նա ունէ յաղթուած աստուածներ և սրբազն առարկայներ, միւս ձեռքում իւր թոռնիկը:

«Տրոյիայի բաղզը, հարց եմ տալիս—որպիսի զլութեան մէջ է, միջնարերզը գրաւված է»:

Այն ինչ այս խօսքերը ասացի, նա հառաչեց, և տուեց այս պատասխանը:

«Գիբրագոյն օրը և Գարգանիայի անխուսափելի ժամը հասել է: Մենք Տրոյացիքս վերջացել ենք. Ի՞նո՞ն և Տրոյիացիների փառքը վերջացել է:»

Անգութ Արամազզը ամէն ինչ փոխադրեց Արգոս. Ցոյները տիրում են հրդեհավաս քաղաքին վերայ:

Բարձր երիկարը, կանգնած պարիսպների մէջ գուրս է ժայթքում զինեալ գնդեր և յաղթական Սինոնը՝ ամենուրեք, մեղ նախատելով, հրդեհներ է վառում: Դաները բացուել են ամբողջապէս, և համուում են ուրիշ գնդեր, այնքան հազարաւոր՝ որքան եկել են Միկէնքէն:

Թէնամիների մի մասը կանգնել են փողոցների

ծայրը, և նրանց նեղ մուտքը խափանում. մերկացուել են սրերը, փայլում են նրանց հատու բնբանները, պատրաստ մահ տալու. հազիւ թէ գաների տռաջին պահապահները փորձ են անում կռււելու, գիմադրնու, պատերազմելով խռարի մէջ»:

Վառառծ այս խօսքերից, առառաջնուրից մղուած, յարձակում եմ, խոյանում եմ ինձ նետելու բացերի, և թշնամինների նետերի մէջ, անսանզ ուր տանում է ինձ մի կայր կատաղութիւն, այնանդ՝ ուր կանչում են ինձ վէնքերի շաշիւնը, ազմուկն և աղաղակը, որ երկինքն են համում: Միանում են ինձ հետ Դիքէոս, և ամենաքաջ զինաշարժ եպիտոսը, որոնց ահանում եմ լուսնեակի լուսով, ընկերում են ինձ և Հիյփանիս և Դիյժմաս. նրանք խմբունցին իմ շուրջը Միյզգոնի որգու մորերոսի հետ: Սա պատճառքար եկէլ էր Ցրոյիս, բորբոքուած լինելով մի յիմար սիրով զէպի կատամազը: Նա նրա ձևոքն էր խնդրում, և որպէս վիսայ, օգնութիւն էր բերել Պրիամոսի և Փոխւզիացիներին: Թշուան արայ, նա չէր կամեցել հաւատալ՝ ո՞ւ ներշնչուած սիրունու յորդորներին:

Երանց ահանուով իմ շուրջը խմբուած, և պատերազմելու նուազի մէջ.

«Մագմիներ, ասում եմ, ի զուր գուք ազնուական և ներոսի սրտեր էք կրում. քաջութիւնը այլ ևս ոչ մէկ օգուտ չունէ:»

Տեսնում էք, բազգը մեղ ուր հասցրից:

Առառաջնուրը, որոնց չնորհիւ կանգուն էր մնում այս թագուերութիւնը՝ հեռացան մեղանից, թողին:

իրանց բագիններին և տաճարներին, և զուք ոչ այլ ինչ էք պաշտպանում, բայց ծխող աւերակներ:

Մեռնենք, նետուենք զէնքերի մէջ: Պարտուածների համար մի փրկութիւն կայ. անյոս լինել փրկութուց»:

Կառաղութիւնը լցուեց՝ երիասարդ սազմիկների սրտերի մէջ. որպէս յափշտակող գայլեր՝ որ ու մասութուղի մթութիւն մէջ զուրս են զալիս, մղուած կատաղի քաղցից, և որոնց աղաղակ են չորացած կոկորդներով ծագեր, վաղում ենք, նետերի մէջից, թըշնամինների միջից, զէպի աղահով մահը, քաղաքի կեդրոնական ճանապարհը բնիւղով:

Ան զիշմը սաւանում է մեր շուրջ, իր քարայրածն սաւուերով:

Ո՞վ կարող է խօսել այս զիշերուայ աղէտներին վերայ, մվ կարող է պատմել կոտորածներին, որի՞ արտասուրքը կարող է հաւասարիլ գժրաղդութիւններին:

Տապալում, վիշում է մի հէն քաղաք, որ տիրապետել էր բաղմաթիւ տարիներ. անշարժ զիակներ անթուելի բաղմութեամբ տարածուել են այսուղ և այսուղ, և փողոցների և աների մէջ, և աստուածների սբբազմն սեմերի ւերայ:

Եւ Ցրայիացիները միայն չեն որ տասապում են և իրանց արիւնը թափում. նաև պարտեալների սրտերում յանկած, զարթնում է քաջութիւնը, և յաղթական Ցոյները՝ զետին գլորւում: Ամենուրեք անդութ սուզը, ամէն անդ՝ երկիւզը, և մահուան բազմապատկուած էք:

Ամենից առաջ համդիալում ենք Անդրոբէոսի, որ

գալիս է յոյնելի մի դնդի հետ. մեզ կարծում է զաշնակից դունդ և մեզ չճանաչելով, կանչում է մեզ՝ բարեկամ խօսքերով.

«Փութացէք, մի ռազմիկներ, որպիսի դանդաղաշարժ անհոգութիւն։ Միւսները արդէն աւերում, թալանում էն բոցավառ Պերգամոսը (Տրոյիան). դուք այժմ դուրս էք գալիս ձեր նաւերից»։

Ասում է. և որովհետեւ ապահով պատասխաններ չեն ընդունում, իմանում է խոկոյն՝ թշնամիների մէջ է ընկել։

Նա կանգ առաւ ափշած. և իր ձայնի հետ՝ ոտքը յետ քաշեց։

Նման այն մարդուն՝ որ փշոտ մացափի մէջ, գետնի յենլով, կոխում է մի իժ, որին նախապէս չեր տեսել, և խոկոյն դողալով, յետ յետ է քաշում, և իժը բարկանում է, և ուռեցնում իր կապոյտ պարանոցին, այսպէս և Անդրաքէսս խոյս էր տալիս մեզ տեսնելով։ Մէնք յարձակում ենք և մեր սեղմուած զէնքերով՝ նրան շրջապատում. և դիաթաւալ փոռում գեանի վերայ այն Յոյներին՝ որ վայրերին անտեղեակ էին և սարսափահար։

Բաղզը օդնում է մեր առաջին ջանքին։

Եւ այն ժամանակ Քորերոս, իր յաջողութիւնից և իր քաջութիւնից խրախուսուած։

«Ո՞վ ընկերներ, ասում է, զնանք, ուր առաջին բազզը մեզ փրկութեան ճանապարհ ցոյց է տալիս, և իր տեղից նա մեզ յաջող է թւում։

Փոխենք մեր վահաններին, և Յոյների դրօշակները մեզ յարձարեցնենք. ով կարող է դանազանել մի

թշնամու մէջ՝ քաջութիւնը նենդութիւնից։ Նոյն խոկ նրանք մեզ պէտք է զէնքեր տան։

Այսպէս խօսեց նա և խոկոյն դրաւ իր գլխի վերայ Անդրամաքէսսի գիսաւոր սազաւարար, յափշտակում է նրա փայլվուն, զարդարուած վահանը, և կախում իր մէջքից՝ արգիական սուսերը։ Խիփէսս և Դիշմաս էլ նոյն բանն են անում. նոյն բանն է անում՝ և բոլոր դուրս երիտասարդութիւնը։ Ամէն ոք զինուում է այս նոր սւարներով։

Մէնք յառաջ ենք գնում՝ Յոյների հետ խառնուած, թէպէս աստուածները մեզ հակառակ էին, և յարձակուելով թշնամու վերայ, բազմաթիւ պատերազմներ ենք մզում՝ մթութեան մէջ. բազմաթիւ Յոյներ՝ Որքոսի մօտ (դոփաքն) ենք ուղարկում։

Ոմանք խոյս են տալիս անկարգարար գէպի նաւեր, և վագիլով համնում՝ ապահով ծովափը. ոմանք՝ ամօթալի սարսափով սանդուխներից բարձրանում են երկարի վերայ, և ծածկում՝ նրա ծանօթ որովայնի մէջ։ Աւազ, ոչ ոքին ներուած է յուսաւ երր այդ թոյլ չէ տրուած աստուածներից։

Ահաւասիկ կասանգը, Պրիամոսի կոյս աղջիկը, ցանուցիր ծամերով դուրս էր տարւում տաճարից և Միներուայի սրբարանից, իզուր բարձրացնելով գէպի երկինք իր վառվուն աչքերին, իր աչքերին միայն, որովէնեակ կապանքներ արգելում էին՝ նրա փափուկ ձեռներին։

Ֆորերոս, այս տեսնելով, կատաղութիւնից կորցնում է ինքնիրան, և թէպէտ ապահով է իր կորուստը, նետում է թշնամիների գնդի մէջ։ Մէնք ամէնքս

հետեւոմ ենք նրան, սեղմուած զէնքերով, և յարձակ-
ւում թշնամիների վերաց:

Այստեղ նախ տաճարի բարձր գագաթից մեր քա-
ղաքացիները նետեր են անձրեւում մեր վերայ և սլքու-
ւում մի շատ ցաւալի կոտորած, որի պատճառն էին
մեր զէնքերի երեսյթը՝ և յունական սաղաւարտներից
յառաջ եկած պատրանքը: (Միւս կողմից) Յոյներն եւ
այս ժամանակ, հեծեծանքներով և զայրութով, աղջկան
յափշտակուում տեսնելով (Քորերից), հուաքուում են
ամէն կողմից և մեր վերայ յարձակուում, և ամենա-
եռանգուն Այսուը, և երկու Ասրիդայք, և Դոլոփների
բոլոր բանակը:

Եցսպէս երեմն հոգմերը բազմաւում են միմեանց
հետ, երբ նրանց յորձանքը՝ ուժգնորեն է նետուում, և
Զեփիւն, և նոտոսը, և զուարթ Եւրոսը, որ նենում
է Արշալոյսի երիւարների վերայ, անտառները մոնչում
են, ներէոսը փրփրում է և իր եռաժանիովը՝ յուզում
ծովերին՝ մինչև իրանց յատակը:

Երանք անգամ, որոնց մենք, չորհիւ մեր նեն-
գութեանը, հալածել էինք մեր առջնից՝ զէպի քաղաքի
խորերը, նորից երեսում են և ամենքից առաջ ճանա-
չուում մեր վահաններին, մեր ստախօս դիմագծերին, և
տեսնուում՝ որ մեր բերանները չեն ներդաշնակուում ձայ-
նով՝ (իրանց լեզուի հետ):

Իսկոյն մենք ջախջախուում ենք թուից, ամենից
առաջ ընկնուում է Քորերոս՝ Սթենելէսափ բազկի տակ,
քաջապէն աստուածունու բագնի առաջ. Ենկնուում է և
Թիփէսո որ ամենից արգարն էր Տրոյացիների մէջ, և
ամենից հաւատարիմ պահպանողը՝ օրէնքների. երանք
թէ աստուածները այլապէս վճռած լինէին:

Կորչուում են և Հիյփանիս և Դիյմաս իրանց ըն-
կերների նետերից վիրաւորուած, ոչ քո ծայրագոյն
բարեպաշտութիւնը, ոչ էլ Ապողոնի ժապաւէնը, քեզ
ով Փանթոս, չպահպանեց ընկնալուց:

Ո՞վ իլինսի մոխիրներ, և գերագոյն բոց իմիններիս
(աճիւն իմ հայրենակիցների), գետին ընկնալուց ա-
ռաջ, վկայ եղէք, որ խոյս չտուի նետերից, ոչ էլ Յոյ-
ների հարուածներից, և եթէ բազդը վճռած լինէր՝ որ
ու էլ ընկնեմ, դրան արժանի էի իմ ձեռքով՝ (գործած
քաջութիւններով):

Բայց մենք հեռանուում ենք այդ տեղից. Իփիդոս
և Պելիաս գալիս են ինձ հետ. Իփիդոս ինձանից աւելի
տալիք ունէ, իսկ Պելիաս զանգագաղաթը է՝ Ողիսեսից
ընզունած մի վերքի պատճառուն. աղաղակները մեզ
կանչուում են զէպի Պրիամոսի պալատը:

*

Այստեղ տեսնուում ենք մի այնպիսէ ահաւոր պա-
տերազմ, որ այլ աեղի կուները թւում են գոյութիւն
չունենալ և թէ ոչ ոք սպանուում է քաղաքում, այնքան
կատաղի է պատերազմը: Յոյները բարձրանում են զէ-
պի տաճակը, մեքենայները պաշարուում են պալատի սեմբ:

Արմերի վերայ և նոյն իսկ գոյների ասաջ սան-
գուիներ են բարձրացուած: (Յոյները) վեր են վազում
սանգզաւառերից, ձախ բազկներովը վահանները դնե-
րով նետերի զէմ և իրանք իրանց պաշտպանելով, իսկ
աջ բազուկներով տան զագալից են բռնուում: Տրոյացիք

Էլ իրենց կողմից, զեր են վերցնում աւերուած աշաւարակների, իրանց այլուած տների մնացորդները, (և նրանց նետում թշնամիների վերայ). այս է իրանց միակ նպաստը, մահուան մօտ, տագնապի վայրկիանների մէջ. վայր են գլորում ոսկեզօծ գերաններին, որ իրանց նախնիքների պալատներն էին զարգարում: Մի մասն էլ, սուրերը մերկացրած, կանգնում են ստորին դռների առաջ և խիտ խիռ չարուած, մուտքը պաշտպանում:

Այս տեսնելով՝ վառւում է և իմ քաջութիւնը, և խոյանում եմ դէպի պալատ, օգնութիւն տանելու, և իմ նպաստով միիթարելու այս մարդիկներին, և պարտուածների ոյժը աւելացնելու:

*

Կար մի սեմ և գաղտնի դռներ և հաղորդակցութիւն՝ Պրիամոսի զանազան պալատների մէջ, և յետակողմն էլ մի գուռ, որտեղից, երբ թագաւորութիւնը դեռ տեսում էր, դժբաղդ Անտրոմաքէն սովոր էր, առանց նաժիշտների, գնալ Պրիամոսի մօտ, տանելով իրա հետ՝ իր հաւուն՝ Աստիլանտիք երեխային:

Ես (այս դռնից) համում եմ պալատի ամենաբարձր կատարը, որտեղից դժբաղդ Տրոյիացիները՝ ապարդիւն նետեր էին արձակում:

Մի ահազին բարձրութեան վերայ, իր կատարները աստղերին գիտցնելով՝ կանգնած էր մի աշտարակ. այնտեղից տեսնում էր բովանդակ Տրոյիա,

Յոյների նաւատորմիզը, և Աքայիցիների բանակատեզը, մենք կացիներով յարձակուեցանք այդ աշտարակի վերայ չորս կողմից, բաղմիկով տախտակների ամենաբարձր մասը, որի զօդերը անհաստատ էին, բլեցինք նրա արմատները, և նրան վայր գլորեցինք:

Աշտարակը, յանկարծ տափալում է, ահեղ գըղողումով կործանում, և շնկնում հեռուն՝ Յոյների զնդերի վերայ:

Բայց յաջորդում են ուրիներ, ոչ քարեր, ոչ էլ նետերի մի ու է տեսակ, չեն զանոդաղում այս ժամանակ:

Նոյն իսկ գաւիթում, և առաջին սեմի վերայ գաւլիս ու գնում է Պիյրնոս (Աքիլէսի որդին) որի զէնքերը փայրիլում են, և պղինձը շողչողում:

Այսպէս երբ մի օձ գալիս է լոյս աշխարհ, յետ ուտելու մասսակար խոտեր, և յետ ձմեռուայ եղանակին՝ թաքնուած մնալու թունաւոր հողի մէջ, մերկանում է իր հին պատմուածնը, զգենում է նոր չորեր, և փայլում է երիտասարդութեամբ, և կուրծքը ուռեցրած կանգնում է արեգակի առաջ, ոլորում է իր սահուն թիկունքը, և կոկորդումը թրթուացնում իր եռանետ լեռուին:

Մեծն Փիրիֆաս և Աքիլէսի նժոյգները վարող՝ ախոռապետն Աւթոմեղոն, Շիրայի բոլոր երիտասարդութիւնը՝ միաժամանակ յառաջում եմ յարկին ներքեւ և դէպի տան կատարը՝ բոցեր արձակում:...

Թերես կամենում ես գիտենալ՝ թէ ինչ եղաւ Պրիամոսի բաղդը:

Երբ նա քաղաքին անկումն և գրաւումը տեսաւ

և իր լնակաբանի գոճեցը խորտակուած, և թշնամին նոյն իսկ իր գաղանի սենհակներին մէջ մտած, իզուր ծերունին զետեղում է իր ուսերի վերայ, որ ալեսյթի պատճառով զողողում են, իր ժանդուած զէնքերին, մէջրին կապում է մի անօգուտ երկաթ, և խուն թշնամիների մէջ դիմում է զէպի մահ:

Պալատի մէջուեղ, եթերի մերկ առանցքի տուկ (բացօթեայ) կաբ մի մեծ բազին, և նրա մօտ մի ամենահին գափնին՝ որ հակում էր բազնու վերայ և իր հովանիովը ծածկում թերափներին (ընտանելան աստուածներին):

Այնաեղ Հեքուպէ և իր աղջկերանը, նման աղաւնիների, որ մի սկ փոթորկի պահուն փախած լինին, սեղմուել էին իրարու կողքին, և զրկել աստուածների պատկերներին:

Արդ, երբ Հեքուպէ տեսաւ Պրիամոսը, երիտասարդական զէնքերով զինուած, աղազակեց.

«Ուզիսի՛ անզութ մտածութիւն քեզ մզեց զէնքեր առնելու, ովք իմ ամենաղթբազգ ամուսինս: Այս ժամանակը պէտք չունէ մի այդպիսի օգնութեան, և այսպիսի պաշտպանողների. ոչ, և ոչ իսկ եթէ իմ Հեկտորս է՛լ այժմ այստեղ լինէր: Ե՛կ, առանձնացիր այտեղ, այս բազինը թող պաշտպանէ մեղ ամէնքիս, կամ դու էլ մեղի հետ մեռիր:

Այսպէս խօսեց նա իր բերանով, և քարշ տուեց ծերունուն իր մօտ և նրան զետեղեց սբրազան բազնին վերայ:

Բայց ահա Պոլիտոս, Պրիամոսի սբրիներից մին, խոյս տալով Պէլլիսափի կոտորածից, ձեղքելով նետերին

ու թշնամիներին, փախչում է զէպի երկայն կամարակապնիքը և, վիրաւորուած, վազում դատարկ սրահներում:

Պիլրնոս, բորբոքուած, հալածում է նրան՝ մի թշնամի վէրքով, և արդէն նրան բռնում է ձեռքավը, և ապահապեցնում նիզակովը: Այն ինչ նա իր ծնողների աչքի և դէմքի առաջ հասաւ, ընկաւ, ժայթքեց առաւ արիւն, և հոգին աւանդեց:

Այն ժամանակ Պրիամոս, թէպէտ արդէն մահուած մօտ, չէ կարաղ սանձել ինքնիրան, և խեղզել իր ձայնն և զայրոյթը:

«Լաւ արին, աղազակում է նա, այդ քո ոճիրն, այդ քո յանզգնութեան փոխարէն, թռղ աստուածները (եթէ երբէք արդարութիւն կայ երկնքում որ ուշ գարձնի այսպիսի գործերի վերայ) քեզ արժանի շնորհակալութիւններ մատուցանեն, քեզ արժանաւոր վարձքը տան, քեզ՝ որ իմ աչքի առաջ՝ իմ որդուս սպանեցիր և մի հօր նայուածքը տիրեցրիր մի այսպիսի մահով: Բայց Աքիլլէսը, որի որդին լինել ստարանում ես, այսպէս չվարուեց՝ Պրիամոսի, իր թշնամու հետ, այլ յարգեց աղաչաւորի իրաւունքն և հաւատաքը, և գերեզման չնորհեց Հեկտորի արիւնազուբկ մարմնին, և ինձ ուղարկեց՝ իմ թագաւորութիւնը»:

Այսպէս խօսեց ծերունին և մի անկարող անհարուած նիզակ ուղղեց, որ տեղ չգտաւ թնդացող սպանձի վերայ, և իզուր կախուած մնաց վահանի մակերևոյթից:

Պատասխան տուեց Պիլրնոս.

«Գնա՞ Պելլիսի որդուն, իմ հօր մօտ, իրրե պատ-

դամաւոր, և այնտեղ պատմիր այս գործերին։ Զմռանաս պատմել իրան՝ իմ տխուր գործերին, և ասել թէ Նէպաղիմոսը՝ արժանի չէ նրան։ Իսկ առայժմ՝ մեռիր»։

Այսպէս խօսեց, և նրան, որ զողողում էր և թաւալում իր սրդու առատ արեան մէջ, քարշ տուեց դէպի բագիները, ձախ ձեռքով բռնեց նրա մազերին, աջ ձեռքով բարձրացրեց փայլառակող սուսերը, և առա մինչև բռնը՝ մինեց նբա կողի մէջ։

Այս հղաւ Պրիամոսի վախճանը. այս մահը տարա նրան ճակատազրին հրամանով, յետ տեսնելու Տրոյիան՝ հրդեհուած, և Պերգումոսը վկած։ Այն որ երեմն գոսոզարար հրամայում էր Ասիայի այնքան ազգերին և երկիրներին, այժմ փոռել է ծովափի վերայ. նրա զլուխը՝ բաժաննուած է ուսերից և նրա մարմինը անուն չունէ…

* *

(Ենէսս Պրիամոսին տեսնելալ յիշում էր իր ձեռունի հօրը, Անքիսին, և գնում է նրան փրկելու. ճանապարհին վերայ տեսնում է Հեղինէն, պատերազմի և իր հայրենիքի կործանման պատճառը. կամենում է նրան սպանել. բայց Աստղիկ, որ երեսում ամպերի վերայ հեծած, թոյլ չէ տալիս նրան. Ենէսս ճամսում է իր տան առաջ, կամենում է հայրը տանել, բայց նա պատասխանում է)։

«Դուք, որոնց արիւնը՝ դեռ չէ սպառել իր ոյժը՝

տարիների ընթացքին, դուք՝ որ կարող էք միայնակ ընթանալ, փախէք։

Իսկ ես, եթէ աստուածները կամեցած լինէին իմ կեանքը երկարել, անշուշտ, կանգուն կը սպահէին իմ հայրենիքը։ Բաւականէ, շատ էլ է՝ որ ես նրա աւերը տեսայ, և քաղաքի գրաւվելուց յետոյ էլ կարող եղայ դեռ ապրելու։ Այսեղ է իմ գերեզմանը. հեռացէք գուրը, Մնացիր բարօվ ասելով իմ (անշունչ) մարմնին։ Ես ինքս պիտի սպանեմ ինձ. թշնամին անգամ պիտի գթայ իմ վերայ, և պիտի պարէ իմ մնացորդներին։ Հեշտ է թում ինձ գերեզմանից էլ զուրկ մնալ։ Անօգուտ տեղ երկարում են արթիներիս չարքը. ես ապրում եմ ատուած աստուածներից, որովհետեւ վազուց աստուածներից հայրը՝ իր կրակը դպցրեց ինձ և չնչեց իմ վերայ՝ կայծակների հողմերովը»։...

Այս պատճառով, նորից կապում եմ իմ զէնքերիս, և ձախ ձեռքիս մէջ առնում եմ վահանը, և զուրս նետում անից։

Բայց ահա իմ հարսը, սեմին վերայ իմ ոտներն է զրկում, և ցոյց տալիս, իր հօր՝ փոքրիկ եռուսուր.

«Եթէ դու պիտի գնաս կորսուելու, ինձ էլ տարքո հետ՝ գէպի կորուստը. բայց եթէ դու մի որ և է յոյս ունես, այդ քո վերցրած զէնքերի վերայ, պաշտպանիր ամենից առաջ՝ այս տունը, ուր բնակում են քո որդին, քա հայրը, և ես, որին երբեմն քո հարսը անուանում էիր»։

Բարձրաձայն ասում էր այս խօսքերը և բոլոր տղունք լցում էր հեծեծանքներով։ (Համոզում են Անքիսի որ խոյս տայ միասին. Ենէսս, ուսերի վերայ

առած իր ալեսոր հօրը, ձախ ձեռքով իր եռւլս փոքրիկ երեխային բանած յառաջ է գնում հրդեհուղ և կործառ նուող քաղաքի միջից. նրա ետեից գալիս է իր ամուսինը): Անց ենք կենում քաղաքի մութ փողոցների միջով և ես, որ քիչ առաջ աչ մէկ երկիւղ չէի զգում իմ վերայ աեղացող նետերից և ոչ էլ Յայների համախմբուած գնդերից, ամէն չունչ այժմ սարսափեցնում է ինձ, ամէն չնշին աղմուկ՝ անհանգստացնում է ինձ, որովհետեւ վախում եմ և՛ իմ ընկերներիս և՛ իմ ընտանս համար:

Եւ արդէն խոկ մօտեցել էի զոներին, և կարծում էի ճանապարհի բոլոր վահանդկներից աշատուած լինել երբ յանկարծ ինձ թուաց լսել տադնապալից ուսնաձայն, իմ հայրը նայում է մթութեան մէջ և աղաղակում. «Փախիր, որդեսկ, վախիր, գալիս են, տեսնում եմ իրանց չողովուն վահաններին, և փայլվուն պըղինձներին»: Չգիտեմ թէ թշնամի աստուածներին որը սարսափեցրեց ինձ և ուշը զէխիցս սարաւ: Որովհետեւ երբ վաղելով անցնում եմ անձանապարհ վայրերից, և գուրս նետում ճանապարհների ծանօթ ուղղութիւնից, աւազ, իմ թրիւգա հարսը յափշտակուում է ինձանից, չգիտեմ թէ ճակատագիրը նրա փախուստը արգելից, ճանապարհից մոլորուեց, թէ խոնջած, նստաւ ճանապարհի վերայ, այսքանը գիտեմ որ այլևս նրան չկարողացանք տեսնել:

(Ենէաս քաղաքից գուրս է տանում իր հօրն և որդուն, գնում է նրանց կիրէսի տաճարի առաջ, որ Տբոյիայի փախստականների ժամաղրավայրն էր, և տպա նորից մտնում է քաղաքը, աւերակների, բոցերի,

գիտների, թշնամիների մէջ իր հարսը գանելու համար. մի մութ անկիւնում երեւում է նրան՝ իր հարսի ուրուականը, նրան տեղեկացնում թէ աստուածները կամեցել էին փրկել իրան՝ փախստեան նեղութիւններից և զիրութեան նախատինքից. և ապա տառմ է նա). «Աստուածների մեծ մայրը ինձ թոյլ չէ առախ հեռանալ այս ափունքներից: Ուրեմն մնացիր բարով, և քո բոլոր սէրը ընծայիր մեր հասարակաց որդուն»:

Ես արտասում էի և կամենում էի շատ բան առեւ բայց նա լոեց, և անհետացաւ նուրբ օգի մէջ. երեք անգամ փորձեցի իմ բաղուկները նրա պարանոցի շուրջ անցնել բայց, նման թեթե հողմերի, նման մի թեհաւոր երազի, նրա պատկերը բաղուկներիցս խոյս տաեց:...

Գրեց Վիրզիլիոս Հոոմայեցի



ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Յ Ա Բ

ԺԹ:

Յոր, Երբայրական բամբառեղծութեան մէջ դրաւում է մի հղական զիբք: Ոչ ոք հաւասարում է նրա զգացումների բռնութեանը, նրա վառ Նրեակայութեանը, պատկերների ասաւութեանը: Վսեմութեան մարմնացումն է նկատել բոլոր ազգերի զբարդութեաներից:

Նրա վարքը ժանոօթ է: Արտէս աւանդուում է Աստուածաշունչ գրքում, նա Աւսիդ աշխարհի իշխաններից մէկն էր. Սատանան թոյլաւութիւն էր ստացել Աստուածուց՝ նրան փորձելու. տանջուած անուն տառապանքներից, նա անիծում է կեանքն և աշխարհը, բայց ոչ և նրանց ստեղծողը. Իր հօտերին. և նրան վերապարձնուում է Աստուած իր հօտերին և ինչքերին: Նա պատկերն է Տառապանքի, և վարձատրուած համբերութեան: Հոչակուած են նրա գրքի երկու հատուածներ, Յորայ անէծք, Ասծոյ գոյցը ամպուի միջից, ուր կան երեւարի և վիշապի աննման նկարագրութիւններ:

ԴԱՌՆԱՑԱԾ ՀՈԳՈՒ ԱՆԵՄՔԸ...

Թնդ կորչի այն օրը, ուր ես ծնայ, և այն դիշերը՝ ուր ասացին. «Ահա մի արու»:

Թնդ խաւարի այն գիշերը, և Աստուած չպարի նրան՝ երկնքից:

Լոյսը թող երջեք չտարածուի նորա վերայ. Թնդ խաւարն և մահուան ստուերները իրանց զիրկը ընդունեն նրան, թող մառախուզը պատի նրան:

Ասիծուած է այդ օրը, այդ գիշերը. Թնդ ջնջուին նրանք տարուայ օրերից, թող չհաշվին նրանք՝ ամիսների շարքում:

Թող միշտ ցաւերով լիքը լինի այդ գիշերը, և ուրախութիւնն ու ցնծութիւնը՝ ների մնան նրանցից:

Այլ պիտի նգովէ նրան այն՝ որ պիտի նգովէ այդ օրը, և ձերբակալ պիտի անէ միծ վիշապը:

Թնդ խաւարին այն գիշերուայ աստղները, թնդ իզուր սպասէ և լոյսի չհանդիպէ. թող չտեսնի արուսեակի ծագելը:

Որովհետեւ նա չփակեց իմ մօր արզանզի դոները. թերեւ իմ այս աչքերը ազատած կը լինէին ցաւերից:

Ա՛խ, ինչի՞ չմեռայ մօրս ուբուժայնում. այլ դուրս
եկայ արտանդից և քիչ յետոյ էլ չկորայ....

Ինչի՞ պատահուեց իմ ծնունդը, կամ ինչի՞ մօրս
ծծերից կաթ կերայ:

Այժմ հանգստացած զաղբած կը լինէի, կը հանդ-
չէի, կը քնէի աշխարհի այն թագաւորների և խոր-
հրդականների հետ, որ հաղարտացել էին իրանց սրերի
վերայ, այն իշխանների հետ, որ առատ ոսկու տէք
էին և իրանց տունը լցրել էին արծաթով, այն մե-
ռածների հետ, որ գուրս են գալիս իրանց մօր ար-
դանդից, այն աղաքների հետ որ լոյսը չեն տեսել:

Այնտեղ (գերեզմանում հանգչում) են այն ամ-
բարիշտները, որ բորբոքում էին զայրոյթով, կատա-
զութեամբ:

Այնտեղ հանգչում են և մարմնով աշխատողները
և նրանք՝ որ հարկանանների ձայնը չեն լսել: Նրանք
հանգչում են միասին յաւիտեանս:

Այնտեղ են և փոքրը և մեծը. այնտեղ ծառայն
եթիւդ չունէ իր տիրոջից:

Բայց, ինչի՞ լոյս է չնորհուել զառնացած հոգինե-
րին, և կեանք՝ ցաւատանջ սիրտ ունեցողներին:

Ցանկանում են մահուան, և չեն գանում. փորում
են իրեւ գանձեր, հրճում են և թէ գտնեն:

Մահը հանգստութիւն է մարդու համար. բայց
նրա հանապարհը, թաքցրած է նրանցից. Աստուած
ցանկ է պատել նրա չուրջ:

Կերակրից ասած՝ հեծեծանքը համաւ իմ վերայ.
Նեղուած եմ արտասուրից, և սարսափից:

Այն բանը՝ որից վախենում էին, եկաւ իմ վերայ,

և այն՝ որից կասկածում էին, պատահեց ինձ:

Չխաղաղեցայ, չդաղարեցայ, չհանգստացայ, որով-
հետեւ բարկութիւնը եկաւ իմ վերայ:

Երեսում է Աստուած, և այսպէս խօսում ամպերի
և մըրկի միջից:

Ո՞վ է դա որ թաքցնում է ինձանից իր խոր-
հուրդներին. ժողուում է խօսքեր իր սրտի խորքում
և կարծում է ինձանից թաքցնել:

Մարդու նման ամբացներ քո մեջքը, ևս հարց կը
տամ քեզ, զու էլ պատասխան տուք ինձ:

Ո՞ւր էիր զու, երբ ես երկրի հիմունքներն էի
դնում. պատմէ ինձ եթէ հասկանում ես, եթէ հանձար-
ումիս:

Ո՞վ նրան չափ զրաւ, ով լարը ձգեց նրա վե-
րայ, զիսեա:

Ի՞նչ բանի վնրայ հաստատուել են զրա փա-
կանքները, ով զրաւ նրա մեջ անկեման քարը:

Երբ աստղերը ծերացան, աստղերի բոլոր հրեշ-
տակները ինձ մեծածայն օրհնեցին, և իմ բոլոր հրեշ-
տակները ինձ գովեցին:

Երբ ծովը ծնաւ և երաւ իր մօր արդանդից, ևս
նրան փակեցի դռներով:

Մէզը տուի նրան իրեւ հակուստ, մասախուզն
էլ իրեւ իրանձարուրք:

Տուի նրան սահմաններ, փականքներ, դռներ-
ասացի. մինչև այստեղ պիտի զաս, այն կողմը պիտի
չանցնիս, այլ այդտեղ պէտք է խորտակութին քո ալիք-
ները: Միթէ քո՞մօտ չինեցին առաւօտեան լոյսը:

Ալուսեակը փացաւ իր կարգը՝ գալու երկրի

թեկրի վերայ, և յըուելու նրա մէջ զանւող ամբարիշաներին:

Կամ թէ գու առիր կաւը, և նրան կենդանի ստեղծեցիր, և խօսուն գարձնելով նրան՝ զրիր դեմնի վերայ:

Յափշտակեցիր լոյսը՝ ամբարիշաներից, ամբարտաւանների բաղկներին խորսակեցիր:

Հասել ես երբէք ծովի ափունքը, ման եկէլ ես անգունդների հետքերին վերայ:

Մահուան զոնիրը սարսափով բացւում են քո առաջ, զժոխքի պահապանները սկսում են զողոզաքիզ տեսնելիս:

Գիտես արգեօք լայնութիւնը որքան է երկնքի ներքի, պատմէ ինձ, տեսնենք, որքան է:

Ո՞ւր է այն երկիրը ուր բնակում է լոյսը, կամ ուր է խաւարի հայրենիքը:

Կը տեսնես ինձ նրանց սահմանները, գիտես նըրանց ճանապարհը:

Թերես զիտես, և զու էլ նոյն ժամանակները ծնուել ես, և քո օրերի թիւը չառ է:

Գնացել ես ձիւների շտեմարանը, կարկտի զանձատունը տեսել ես:

Արգեօք քիզ համար համբարուած են նրանք թշնամիներիդ դէմ գործածելու համար, կռուի և պատերազմի օրը:

Ո՞ր տեղից է գտիս եղեամբ, կամ հարսու՞ ո՞ր տեղից փուում է երկնքի ներքի:

Ո՞վ է պատրաստում անձրիի յորգահոսան հեղեղներին, և մըրիկների ճանապարհ տալիս՝ որ երկիր

գան, այնտեղ որ անապատ է, ուր մարդ չկայ, որպէսզի անկոխ և անշէն տեղը յագեցնեն, և բոյս բռնցնեն:

Ո՞վ է անձրիի հայրը, ով ծնաւ ցողի կաթիլներին: Որի արգանդից զուրս է զալիս սառը:

Ո՞վ ծնաւ եղեամբ երկնքում, որ իջնում է և ծորում ջրի նման: Ով է հալեցնում երկնքի երեսը:

Դիտես անաղերի դասաւորութիւնները, ով և բաց արել հայկի քողը:

Կարսղ ես Մազարովիթը բանալ իր ժամանակին, և նրա հետ ասնել զիշերավարը՝ նրա ծամերից բանելով:

Ճանաչում ես երկնքի լը ջանակներին, կամ ամէն ինչ որ ստեղծուել է երկնքի ներքեւ:

Կարսղ ես մէզը կանչել քո ձայնով, այնպէս որ, զողալով ու ջրով ծածկուած քեզ մտիկ տայ:

Կարսղ ես կայծակներ արձակել այնպէս, որ գնան և ասին քեզ. «Ի՞նչ կայ»:

Ո՞վ կիներին սստայնանկութեան խելքը տուեց, կամ նկարներ շինելու համարը:

Ո՞վ է թւում ամպերին՝ իմաստութեամբ, և երկինքը խոնարհեցրեց մինչեւ երկիր. թափուած է նա հողու, փոշու նման. նրան շինեցին իրրե քարերով՝ վրանածե:

Դու ես որսի գնում առիւծներին կերակուր զըտնելու համար. և զու ես յագեցնում վիշապներին:

Պիտի զողան իրանց անձաւներում, և գարանի պիտի նստեն անտառներում:

Ո՞վ ագաւներին կերակուր պատրաստեց. նրա

ձագերը աղաղակում են առ Աստուած, ըրջում են թափառական, կերակուր են խնդրում...:

Ո՞վ թոյլ տուեց որ ցիսը ապրի իր աղատութեան մէջ, ո՞վ քակեց նրա կապահքներին, ժայռերը տուեց նրան՝ իրրեանակարան, և ճահիճներին իրրե հանդըստարան:

Նա ծիծաղում է բազմամարդ քաղաքների վերայ. նա չէ լսում հարկանաների հայդոյանքները, զիտում է լեռներին՝ որոնց վերայ արածում է, ման է գալիս ու պարում գալար բոյսերի հետքերին...:

Արգեօք դժու երիվարին՝ ոյժ հազցրիր. և սորսափը կախեցիր նրա պարանոցից. զրահներ զրիր նրա շուրջ և նրա լանջքին տուիր, իրրե փառք, յանդզնութիւնը:

Ջրոտում է գաշտի վերայ և ստները գոփում. գաշտ է իջնում զօրութեամբ. թէ նետեր պատահեն՝ արհամարհում է նրանց, եթէ երկաթ՝ խոյս չէ տալիս նրանից:

Նրա գլխի վերև չողողում են, աղեղ, սուր, վահանների, նիփակների չարժումը. նա բարկութիւնից՝ երկիրն է ապականում:

Նա չէ հաւատում, մինչև որ փողը չհնչէ. և իրը փողը գոռայ, «վաշ-վաշ» ասում է նա ինքնիրան:

Հեռուից առնում է պատերազմի հոտը և փակոյն արանում է՝ փոնչելով:

Արգեօք քո իմաստութիւնը արաւ, որ բազէն անշարժ տարածի իր թերերին և դիտէ գէպի հարաւ:

Արգեօք քո հրամանով վեր է բարձրանում, արձիւը, և անդզը նստում է խաղաղիկ իր բունին վերայ

վէմերի անձաւների և խորերի մէջ, այնտեղ է մնում, և կերակուր պարում:

Հեռուից նկատում են նրա աչքերը. նրա ձագերը՝ արինալ են թաթախուած. գտնուում են խոկոյն այնտեղ՝ ուր զիալ կայ...:

Ահաւասիկ (վիշտպէկտը). ոյժը պատում է նրա մէջքը, զօրութիւնը բազմել է նրա որովայնի ողորտի հերքեւ:

Վեր է տնկում իր պոչը՝ իրրե հոճի. իր ջղերը պատառառուած են իրաբու կերայ, պղնձից են շինուած նրա կողերը, և նրա թիկութքը մի ձոյլ երկաթ է:

Աստծու արաբածների սկիզբը նա է. նա խաղաղիկ է՝ նրա հրեշտակներին:

Հասնելով ապառաժ լերան-վերայ, ուրախութիւն պատճառեց տարտարոսի չոբոտանիներին:

Քնում է զանազան ծառերի ներքեւ. պրոռի, եղէզի, կնիւնի ներքեւ.

Նա հովանիկ կը տայ մեծամեծ ծառերի, անտառների, հագնիի ձողերի:

Եթէ նեղեղ պատահի, նա ոչինչ չէ զգում. յանձնապատան է. եթէ Յորդանան նրա բերանը զիմէ, նա նրան ընդունում է իր ակնակալիճների մէջ:

Եթէ խոյս տայ քեզանից՝ կարող ես ծակել նրա ոնդունքը. կարող ես վիշտպին վեր բարձրացնել կարթով, կարող ես սանձ դնել նրա ցոռուկի չուրջ... Պիտի խօսէ քեզ հետ հեղութեամբ, և կակուղ խօսքերով՝ քեզ հետ զաշինք գնի: Կարող ես նրան նուաճել (և անել քեզ) ծահայ յաւիտենական...:

Սարսափը կայ նրա ատամների չուրջ, նրա փորը՝

պղնձեայ վահաճները, նրա կապերը, գայլախաղ քարի նման, իսիս խիս իրարու կողըրած, և օղը չէ թափանցում նըանց մէջ...

Երբ նա փոնչում է, գայլատակներ կ'արձակուեն,
նրա աչքերը թւում են մի մի արտունեակներ:

Նրա բերանում վառում են հրաբորոք լամպար-
ներ, և կրակէ կայծակներ ընկնում:

Նրա անձը՝ կայծակներից է կաղմուած, բոց է ցոլանում նրա բերանից:

Նրա պարանոցում բնակում է զօրութիւն, կո-
րուսաը վաղում է նրա առջեից:

Նրա անդամները կպել են միմեանց եթէ մի բան
թափես նրա վերայ՝ նա չի շարժում. նրա սիրով
քարացել է, անշարժ և ամուր է, դարբինների սալին
նման:

Երբ նա շարժում է տեղից՝ սարսափում են գա-
ղանները, չորքոտանիները և երկրի գեռունները:

Եթէ նիզակներ հանդիպեն նրան, զենքեր և նե-
տեր չեն վնասում նրան:

Երկաթը նա համարում է յարդ, և պղինձն էլ
փռած փայտ:

Պղնձից շինուած աղեղը չէ վիրաւորում նրան,
նա ամբարաբը համարում է խոտ, և մուրճերն էլ ե-
զէք. ծիծաղում է կրակով լցուած շարժման վերայ:

Նրա անկողինը կաղմուած է սրուած աէզերից.
Ճողի բովանդակ ոսկին նրա ներքեւ թւում է ամբաւ
կաւ:

Եռացնում է անդունդներին՝ որպէս կաթսայ, ծո-
վը ոչինչ է համարում, անդունդների տարտարոսն էլ

իր գերին. նա վհերին՝ իր ձեմելիքը կարծեց:

Երկրի վերայ չկայ մի բան, որ նրան նմանի.
բայց նա՝ իմ հրեւտակների խաղալիկն է:

Նա նկատում է բոլոր բարձունքներին, և թագա-
ռուում ամէն բանի վերայ՝ որ ջրի մէջն են գտնուում:

Գրեց Յոթ Երբայիցի



ՔԱՂԻԳԱԾՈՒ

Բ.



Քաղաքաշա մի հսկիկ բանաստեղծ էր: Ապրում
էր Քրիստոսի թուականի առաջին դարում: Նա մեծ
պատիւներ էր վայելում Վիքրամագիտիայի արքունի-
քում, և կոչում էր նրա ապարանքի ինն ակունքնե-
րից մինը:

Հնդկական սրբազն լեզուն, որ կոչում է սահս-
կրիտերէն շատ բասեր ունէ, որ նման են հայերէնի հետ.
բանաստեղծութիւնը, որին ներկայացնում են այստեղ,
կոչում է բնագրի մէջ «Մէգա Դուռա»—«Մէգ պատ-
գամարեր» կամ «Լուր բերող ամպ»:

Այս հատուածը հոչակաւոր է զարձել և նկարա-
գրութեան և զգացմունքի տեսակէտից:



ՊԱՏԳԱՄԱԲԵՐ ԱՄՊԸ

Փութա, ով երազընթաց պատգամաւոր, որ պի-
տի տեսնես իմ առւնը, իմ Քուվէրա տիրոջ պալատի
հիւսիսկողմբ:

Հեռուից փայլվիում է, թանկագին ակունքներով
զարդարուած կամարակապը, որ, ծիածանի նման, շոշ-
շողում է փառքով:

Դու պիտի տեսնես իմ սիրականի գեղեցիկ պար-
տէզը, և նրբահասակ մանտարան, որ հակում է՝ իմ
սիրելու ձեռքը համբուրելու համար:

Զկայ մի երեխայ, որ այնքան խնամքներով չըր-
ջապատուած լինի, որպէս այս բազգաւոր ծառը:

Այնտեղ, ըլջապատուած զմբուխոների չարքից,
տաքածում է մի ընդարձակ լճակ, որի ափունքները
զարդարուած են սովետին լոտոսով:

Կարապները նրա մէջ, ուրախութեամբ պիտի
ողջունեն քո գալուստը, և նրա զով ջրերը պիտի գալ-
ջանան քեզ աւելի հաճոյ երևելու համար; և նրանք
կանգ պիտի առնեն առանց յիշելու ընկան լճակը, որ
երբեմն այնքան սիրելի էր նրանց:

Շափիզայներով ծածկուած և հողից վեր բարձրա-

նալով, գէպի վեր է թռչում մի լեռ, նուիրուած հանգստութեան և հաճոյքի:

Թփերի մի մացառ՝ շըջապատում է նրան՝ մի ոսկեղէն գօտիով, սիրելի վայր, որին ժամանակաւ սիրում էր իմ նշանածը և որի յիշատակները այնքան ձզիւ նորոգւում են իմ յիշողութեան մէջ, որքան յըստակ այժմ տեսնում եմ քեզ, ոչ մթին ամպ:

Անման գեղեցիկութեամբ ծագիներ քաղցր բոյրերով լցնում են իմ պաշտած ծովին հովանոցեակը. ազոքա և քեղարա (բոյսերը) միմնացից կամենում են խլել նրա փարփայնքները, երբ նա անց է կենում նրանց մօտից, ցանկանում են կոխուուել նրա ոտների տակ, կամ համբուրել նրա այտերին:

Այստեղ, բիւրեղեայ պատուանդանի վերայ, ամենաճոխ ակունքներով զարդարուած, եղէզի շառաւիզի նման՝ տեսնուում է մի ոսկեղէն սիւն. կապոյտ պարանցով սիրամարգը խում է ցողը գիտելով, իմ սիրականին, և կանոնաւորում է իր քայլերին՝ իր տիրունու գօտու զանգակների ձայնին վերայ:

Այս նշաններով, զու պիտի ձանաշես այն արեպակնագէմ բնակարանը, ուր ևս ապրում էի իմ սիրականի հետ, և որը կորցրել է իր բավանդակ հմայքը՝ այն օրից իվեր, երբ, աւազ, ևս բաժանուեցի իմ սիրելիններից: Այսպէս և լուսոը փայլում է արեպակի առաջ և տիրութենից գունատուում, երբ աստղի ընթացքը աւարտուում է:

Մեղմիւ իջիր բլրան կողին վերայ, առանց քեզ ցոյց աալու քու բոլոր փառքի մէջ, որովհետեւ քո համեմատութիւններիդ մեծութեամբ՝ զու կարող ևս

սաբսափ ազգել իմ սիրունուն, տաբածուիր բարձրութեան վերայ որպէս ճանձերի մի խումբ որ խաղում է լոյսի ճառագայթի մէջ: Դու պիտի տեսնես իմ սիրունուն՝ իր բնակարանի դրան առաջ: Ցոյց տամ քեզ զինքը:

Մեծ Արարիչը ոչինչ է արել աւելի գեղեցիկ: Իւր ատամները նման են մարգարիաների, նրա ըրթունքները՝ պումպայի փայլն ունին, նրա աչքերը նման են վիթի աչքերին՝ երբ նա ընտհաղ զարթնում է: Նա լուռ է, որովհետեւ ցաւում է իր ընկերոջ վերայ, որի վերայ արտաւում է՝ սկսած արշալուսից՝ մինչեւ խոր գիշեր: Անտարակոյս իր տիրութիւնը բնակում էր մի չնորհալի լուտոսի մէջ, որ կարկամել էր անձրնից և ցրտից:

Նրա ձեռքի վերայ հանգչում է իր թառամած այտը, փորտուած արցունքներից: Նրա աչքերը անփայլ են: Նրա երկայն ծամերը՝ կախուել են որպէս քօղ, ընկնում են իր փայրահակ գլխի շուրջ և նրա ըրթունքի փարփառոյնը՝ անհետացել է: Նա զարկացած է և զգգոյն, լուսնի նման, երբ, ոչ մթին ամպ, նա ծածկում է իր ճառագայթներին:

Այժմ որ քո տեսքը նորոգում է նրա ցաւերին, նա երկրպագում է, աղօթում, տիրութենից արտասուելով, նա տեսնում է իր անհամբեր աչքերի առաջ, իմ պատկերը՝ ցաւերով խանգարուած: Եւ նա ասում է իր սիրելի սարեակին:

— Յիշում ես, փաքրիկ թռչնակ, քո երբեմնի օրերը և քո տէրը՝ որին ազատարար ընկերում էիր իր զրոսանքների ժամանակ, զէպի գաշտեր և անտառներ: Նա քեզ միշտ նոյնպէս սիրելի է»:

Նա հնչեցնում է իր քնարի լարերը՝ շնորհալի անհոգութեամբ և միշտ նուազում է իմ ցեղի փառաւոր զործերին: Բայց նրա մտածութիւնը ամեննեին չէ ներդաշնակւում նրա թրթառումների հետ և նրա պիշտը արձակւում է մի վայրենի մեղեղիով:

Նա զիտում է սեմը՝ ուր թարմ շամփրակներ վլայում են նրա բարեկալաշութեանը, նա կրկին ու կրկին հաշում է նրանց, մինչդեռ ծաղիկները թառամում են իր ոտների մօտ, և նա այսպէս շափում է ժամերին, որ պէտք է սահեն զնան, մինչև որ մենք նորից միմեանց հետ տեսնուենք:

Այս զբաղմունքները մի քիչ սփոփում են նրա վշտերին, բայց աւագ, գիշերը բերում է նրան՝ աւելի երկար և աւելի գառն հոգսեր: Ո՞հ, այդ ժամանակ նրա մօտ կանգնիր և ցածր ձայնով նրա լարուած աշկանջին ասաւ ըստ պատրամը, նրա ցաւերի ժամանակ ուրախ լրեր տուր նրան, տակնապի այդ գիշերուայ մէջ սփոփիր նրան:

Նա հանգչում է իր ալբիական անկողնի վերայ, տիսուր է նա, արտասում է, հառաչում, թախծութեան մէջ անցնում երկար, երկար ժամերին, որ սահում էին երրեւ վայրեկնաններ՝ երր նա իմ մօտն էր զտնւում: Երրեմն, անփոյթ ձեռքով հետացնում է անհաւասար և անխնամ կերպով հանգուցուած ժամերին, որոնց կապեց նա իմ աքսորի օրը. վայր զցելով իր պսակը՝ քաղցրաբոյր ծաղիկներից կազմուած: Ե՛ս միայն պէտք է այդ ժամերի հանգույցը քակեմ և տամ նրա ճակատին մի գեղեցիկ ստուեր:

Նրա փայլփլուն նայուածքը. որ իր երջանիկ օրեւ-

րի ժամանակ կարող էր լուսնի անոյշ ճառագայթների հետ համեմատուել, այժմ զիշերուայ պէս մոայլ են նրա երկար յօնքերի ներփայ, որովհետեւ արտասութները նրանց անջատում են լոյսից, անզգայ և վշտակիր, նա տարածուել է իր մահճի վերայ, նման լուսուի երր միթին ամպերն են բարձրանում: Աչ մի քաղցրաբոյր ծաղիկ չէ հանգչում նրա մարմնի վերայ, ոչ մի լուսափայլ գոհար չէ շողշողում նրա շնորհալի պարանոցի շուրջ: Ապահով եմ որ զու երբ այդ տեսնես՝ արտասութներ պիտի թափեն՝ որովհետեւ բարերար հոգիներ՝ կրում են անոյշ զթութեան աղղեցութիւնը:

Մի կարծիք, ոգ սիրելի ամսլ, որ նրա տիրութեան մասին արած իմ նկարագիրը սիրահարի պատրանքը լինի: Դու ինքդ էլ մի քիչ յետոյ պիտի տեսնես, թէ որքան ճշմարիտ են այն ինչ որ տրտում արքուր քեզ ասացի: Ո՞րքան հեծեծանքներ պիտի արձակի նա, երբ իր նայուածքը զէպի քեզ բարձրացնի, երբ նա քո վալուստը իմանայ, զես ինքդ նրան չմօտեցած, և նրա երկայն ծամերը պիտի զողղզան շուշանների նման, որոնց աւելում է հոգմը՝ սստոստուն ալիքների վերայ:

Բայց իմ սիրելին փակել է իր խոնջած արտեսնունքները, թող քո կայծակը՝ նրա քաղցր հանգիստը չվրդովի, և մի բանար նրա բազովիները, եթէ զոնեա երազի մէջ ինձ գրկելու համար կրացուին, սպասիր որ յամիկը քեզ ուղարկի իր տառաօտեան բոյքերին, այն ժամանակ սահիր մինչի իմ սիրելու լուսանցքը, և այն ժամանակ բաց նրա արտեանունքներին՝ մի քաղցրաբոյր զեփիւով, և հոգացներ նրանց երկնքի տնձրեկի

ամենից անոյշ կաթիներով: Թաղ որ լոյսի ճառագայթները խաղան նրա փոքրիկ զլիի չուրջ, հալածիր նրա հոգսերին, և խօսիր նրա հետ մի շատ յատակ ձայնով՝ նրան թարգմանելով իմ սիրոյ պատգամը,

—Ո՞վ տիսուր և միայնակ տիկին, ևս գալիս իմ քո տիրոջ կողմից և տանում եմ քո ողջոյնը՝ մինչեւ նրա հեռաւոր բնակարանը: Աքսորեալը առաջնորդեց իմ քայլերին և ինձ ուզարկեց գէպի իւր արտասառդ սիրելին, տօնով՝ որ նա թնդ քակի տիրութեան հանգոյցները, որոնց նա կազմել էր իր բացակայութեան ժամանակ:

Այն զարմանքով, որ Ռիթայի վերայ լացող գեղեցիկ Սեթայի նայուածքները ընկան օդի որդուն վերայ, նայնպէս էլ նրա աչքերը քեզ պիտի ուզգուեն, և նրա հաւատարիմ սիրով ընդմիշտ երախտապարտ պիտի մնայ քեզ այն հետաքրքրութեանը համար, որին ցոյց ես տալիս մեր ճակատագրին՝ նկատմամբ, որովհետեւ այս սիրով անհամբեր է լրեր ստանալու նրա վերայօք՝ որին սիրում է ամենից աւել:

Ո՞վ բարի ամպ, թող քո օրհնութեան օրերը երկար տեսն: Գողարիկ կերպով խօսիր նրա հետ և թող քո պատգամը հետևեալը լինի:

«Բո սիրելին արտասառւմ է մեծ Ռամայի անտառում տիսուր ճակատագրին վերայ՝ որ նրան քեզանից բաժանեց, և հարցնում է եթէ ուժասպան ես եղել միայնութեան մէջ թափած արտասառքներից, թէ քո աչքը խաւարուեց, թէ քո այտը գժգունուեց: Աղետաւոր և թշնամի ճակատագիրը նրան բաժանեց քեզանից, բայց նա երեակայութեամբ միշտ քեզ մօտ էր,

դու նրան երեւոմ ես ախրութիւնից թառամած, իրը իր պատկերը լինէիր, նրա հողին քո մօտն է, և ոչինչ չէ կարող վերջ տալ նրա հեծեծանքներին: Հեսի քո աչքերից, հեռի քո ականջներից, նա ինձ յորդորեց գալ քո վշտերին սփոփանք աւալու: Ահ, ուրբան երջանիկ կը լինէր, եթէ կարող լինէր ինքն իսկ դպչել քո այսերին և իր պատգամը ինքն իսկ մրմիջնել քո ականջնից»:

Ես տեսնում եմ իմ չնորհալի սիրունուն ամէն ծագի մէջ, որ իլ բոյքերով, պատառուում է իմ հոգանցեալին, երբ սարսափած եղնիկ փախչում է իմ ճանապարհից, ես նրա անոյշ աչքերի մէջ՝ քո հայեցքըն եմ տեսնում. սիրամարդի գոյնզգոյն փետուրները յիշեցնում են ինձ քո ծամերին՝ որի ծփանքները՝ ծիածանի են նմանում. առուակի փոքր ալիքները նմանում են քո յօնքերի կամարներին, և երբ ըուսնեակը լուսաւորում է իմ տիսուր զիշերը, քո մաքուր և գժգոյն գէմքը՝ գալիս է աչքիս առաջ: Ամէն մի առարկայում տեսնում եմ խորհրդանշնը այն գեղեցկութեան՝ որին տեսնում եմ միայն քո վերայ:

Հանքերի գոյնով ես քո գէմքը նկարում եմ որմի վերայ, բայց իմ մթնած աչքերը չեն տալիս ինձ իրանց սովորական օգնութիւնը, որովհետեւ անողոք ճակատագիրը՝ նրանց վերայ սփուրմ է իր քօղը և արտասուրով կուրացնում իմ ագահ նայուածքներին:

Անտաների ոգիներ, արտասուրով իմ անվերջ ցաւի վերայ, կաթիլ կաթիլ թափում են իրանց արտասուրքներին՝ ծասերի ճիւղերի վերայ, երբ նրանք տեսնում իմ բաղկների բացուելը օդը միայն գրկելու

համար երազումն, որ քո վերայ է խօսում:

Ձեփիւոը, որ իջնում է ձիւնապատ լիոնիրից, իւր քաղցրաբոյր թևերի չօշափումովը շամիների բողոքները բանալով, բայրերով լի, և ուստին ցայտեցնելով, գալիս է գէպի ինձ իրեւ իմ սիրունուց եկած մի յաջող պատգամ: Ես նրան ուրախութեամբ ողջունում եմ, երբ ուղղում է գէպի հարաւ, որովհեան թերեւ նա քո վարդապոյն բերանն է համբուրել, թերեւ նա փայփայել է քո փայլուն ճակատը, և սրտից վեր առել տարել իր հետ՝ մի երկնային բոյր:

Բայց, ով իմ սիրելիս, գերազոյն ցաւիզ մէջ անդադար քո գժերազգութեան վերայ մի խորհիր, վախեցիր որ մի դուցէ քո մտածութիւնը զոհ գնայ քո տիրութեանը, որ մի դուցէ քո բարի հոգին՝ յաղթահարուի պայքարում, ոչ վիշտը, ոչ էլ ուրախութիւնը՝ անխառն չեն. մեր բաղզը փոփոխական է, և ոչինչ կայ այս կեանքումն անփոփոխելի, այլ ամէն ինչ ընդհակառակն, անապահով է, որպէս մի պտտասզ անիւ, մարդը պէտք է երբեմն բարձրանայ, երբեմն խոնարհուի, որպէսզի իր ճակատագիրը լրացնի:

Չորս տիսուր ամիսներից յետոյ, երբ Վիշնու կանգնի իր օձերից շինուած անկողնի վերայ, իմ արսորը պիտի վերջանայ և քո սիրելիդ, ազատուած, պիտի ուղղէ իր քայլերին գէպի բնակարանը՝ և գէպի քեզ: Այն ժամանակ աշնան լուսինները, աւելի պայծառ լոյսով, պիտի սփռեն իրանց անոյշ նշոյցները գիշերուայ վերայ, և ուրախութիւնը, անխառն ուրախութիւնը, պիտի հրճուեցնի մեր հոգիներին, և այդ ու-

բախութիւնը՝ աւելի անոյշ պիտի երեայ երկար բաժանումից յետոյ:

Ես քեզ տեսնում եմ նորից, բայց գու միայնակ չես. քո բաղկները խառնուում են իմ բաղկներին, ով սևաչեայ գեղեցկութիւն, ապահով եղիր թէ որքան էլ անի մեր բաժանումը, իմ հաւատքը անխախանելի պիտի մնայ, և չպիտի գաղարեմ քո հաւատարմութեան վերայ վսահն լինելուց, ինչ զրպարտութիւններ էլ անհն չար լեզուները:

Ո՞վ ամոլ, կամննում ես գու տանել իմ սիրուն սիրոյ այս պատգամը: Դու լուռ ես, և սակայն իզուր չեմ աղօթում, որովհեան երբ ծարաւի ծաթաքան քեզանից անձրեւ է խոդրում զովանալու համար, գու չես պատասխանում, բայց յանկարծ մի տարափ նորից կազզուրում է նրա անոյժ թևերին: Միշտ այսպէս է. լաւագոյն պատասխանն է՝ մեր սիրելիների փափազը գործով կատարել:

Եւ երբ գու, ով բարեսիրտ պատգամաւոր, այսպէս խաղաղեցնես իմ սիրունուն, նորից շարունակիր քո ընթացքը՝ եթերի գաշտերում և եկ երիտասարդացնելու աքտորեալի սիրաը, բերելով նրան՝ իր սիրելու ձայնին անոյշ արձագանքները:

Այն ժամանակ պիտի վճարեմ քո գթասրտութիւնը՝ իմ չնորհակալութիւններով, և իմ երախտագէտ օրհնութիւնները պիտի ընկերեն քեզ՝ մինչև որ քո բնակարանը վերագանաս. այն ժամանակ կարող ես գնալ գէպի քո սիրած գաւառները և այնտեղ բնակուել՝ զրունելու կամ ազատօքն արշաւելու համար: Թող երբէք անոյշ անձրեւ քեզանից չպակասէ, և թող

քեզ նշանուած աղջիկը, կայծակի շողողուն լոյսը, քեզ
զանից երբէք չբաժանուի»:

Հարստութեան աստուածը լսեց սիրոյ այս պատ-
գամը, գութը զարթնեց նրա սրտում, քաղցրութեամբ
ականջ տուեց պատմուածքին, և տխուր աքսորեալը
վերադարձրեց իր տունը. և ապա հրամայեց՝ որ մո-
ռանայ իր տիրութիւններին, և ընդ միշտ բնակուի
իր սիրունու հետ, կրկնապատկելով իր սէրը:

Գրեց Քալիդ : Տ. Հնդիկ

Է Փ Ռ Է Ա Պ Է Յ

ԻԱ.



երբէմ զէյ, ազգով թուրք, ծնուել է Կոստանդնուպոլիս: ԺԹ գարու ամենանշանաւոր թուրք մատենագրներիցն է: Նա յայտնի է զարձել և իրքն թարգմանիչ. թրքերէնի է փոխազրել Սիլվիոյ Պէլիքոյի Խմբանից: Եաւ առաջ կատարել է Շատովարիանի Ա.Տ.Ալա վէպը: Հակոսակ նրա ազատասէր սկզբունքներին՝ նաև չափորուեց մայրաքաղաքից, այլ միայն զրկուեց գասախօսութեան պաշտօնից: Միւլքիչէի վարժարանում:

Նա երկար ժամանակ պետական խորհրդի անդամ է եղել:

Սրտաշարժ է, նրա Յիշիր ինձ եղերեգութիւնը:



ՅԻՇԻՐ ԻՆՁ Ա

I.

Երբ գարունը գալիս է՝ փոփոխւում է ամէն ինչ: Սիրահայուած սոխակը, գալար տերեների տակ թաքնուած, չգիտես որպիսի զորովով գեղգեղում է մելամաղձիկ երգեր:

Այն ժամանակ, երկնքի հրապոյըը տեսնելով, յիշիր իմ սիրոյս մաքրութիւնը, մի վայրկեան, մի վայրկեան մենակ յիշիր ինձ:

II.

Երբ մի հանգարտ և լուռ գիշեր, ծովի վերայ գանուես, վեր առ քո գլուխը, դիտիր վերին աշխարհին:...

Եթէ սիրահարուած լուսնի լոյսը, այն ժամանակ քեզ տիրեցնի, յիշիր այն բոպէներին՝ որոնց միասին անցկացրինք. դիտիր վայրկլուն և ալեծուփ ծովը, և լուռթեան մէջ, յիշիր ինձ:

III.

Երբ արշալոյսին մօտ, նաւակում, վասփորի վերայ, մի մարդ, գողգոջուն ձայնով կազելներ նուռազի, սիրահարուածի այդ տխուը հառաջները, աքսորեալի այդ ողբերը անշուշտ քեզ մի մելամաղձիկ յուզմունք կը պատճառեն, այն ժամանակ մտքումդ, գաղտնի, յիշիր ինձ:

IV.

Ոչ ոք չգիտէ թէ ևս որքան եմ տառապում բաժանման տանջանքով, այնքան զգայուն և տկար լինելով իմ սիրալ:

Բայց ոչ բաժանումը, ոչ էլ վիշտերը, ոչ էլ հազարումէկ փորձանքները, որոնց ուղարկում է գէպի ինձ ճակատագիրը՝ չեն կարող իմ էութիւնիցս սիրոյ տեականութիւնը ջնջել:

Սիրում եմ քեզ այնպէս, որպէս սիրել եմ: Դու միայն ոգեսրում ես ինձ: Ո՞րքան ժամանակ քո սէրը հառաջէ իմ շրթներիս վերայ, դու էր, մի քիչ յիշեր ինձ:

V.

Այս ցաւատանջ սիրալ մի օր բարախելուց պիտի դադարուի: Իմ մարմինը պիտի չքանայ հողի ներքեւ: Իմ բերանը պիտի վակուի հողով:

Այն ժամանակ պիտի վերջանան գորովանքի երգը, որոնց երգում եմ քեզ համար, ով իմ միակ հըրձուանը:

Այն ժամանակ, լուս գիշերուայ մէջ, եթէ նկատես մի ուրուական, փակիր աչքերիդ, խոհիր իմ սիրոյս զգբաղդութեանը վերայ, և, ախրութեամբ, յիշիր ինձ.

Գրեց կերեմ պէլ Թուրք



ՊԵՏԱԿԱՆԵՐԸ

իբ.

Ոինթէյ Թանէֆիքոյ, Եապոնացի վիտասան, յայտնի է գարձել իր երկրում մի գրուածքով, որի վերնափիրն է. «Վեց վարագոյք, նշան կորսաական աշխարհի»:

Իբրև նմոյչ Խսպանական գրականութեան, կը վերցնենք Թանէֆիքոյի վերսոյշեալ գրքից մի հատուած. «Պէքասները» (մի տեսակ թռչուն):

Նրա վիլխառփայական միտքը, հետեւալ պատմուացքում, այն է թէ՝ ճշմարտութիւնը նրքան անհաճոյ է բոնաւորներին, և թէ ճշմարտութեան խրոխսոէրը, նրքան թշուառութեան պատճառ կը լինի անկեղծ մարդուն:



ՊԵՔԱՍՆԵՐԸ

Ժամանակով, մի ընտանիքում, որ խնամի էր զարձել Քանթոյի իշխաղների տան՝ Ֆամանայի ընտանիքի հետ, ապրում էր մի մարդ՝ Ապօղի Թամոնթարա Քացեօղի անունով:

Որսորդութիւն անելու համար, նա զնել էր Քացեօղայի թագաւորութեան կէոր, և որովհետեւ նա շատ սեղանակիցներ ունէր, մանաւանդ զինուորական դասակարգից, հէնց այս պատճառով էլ շատ ազգեցիկ մարդ էր գտուի, և համարեն նա այնքան հեղինակութիւն էր վայելում՝ որքան մի նահանգապետ:

Քոպօրուրոյի լեռնաշղթայի մի կողին վերայ կանգնուած էր, միայնութեան մէջ, նրա պարագը. նա ընդարձակ կալուածներ ունէր Քանածաւայի ամիերի վերայ, և այլ բազմաթիւ որսատեղեր:

Իսքնին հետեւում է թէ Ապօղի Թամոնթարա Քացեօղի մի լաւ գիրք էր գրաւում և ապրում էր փառաւորապէն:

*

Մի օր, աշնան վերջը, գտնւում էր նա մոմիծիծ ծառերու մի գեղեցիկ անտառի մօտ. նա կամեցաւ որ-

սալ՝ բազմութեամբ այնտեղ ապաւինած թոշուններին:

Այս նպատակով նա գնաց մեծ ծովափին վրայ կանգնած պալատը, նա պատրաստուել էր նրան ընդունելու, յետ ամբողջ օրը ման գալու, վերջալոյսի ժամանակ՝ նա Պէքանների ճահիճը հասաւ:

Տիրում էր այնտեղ կատարեալ միայնութիւն, չկար այնտեղ ոչ մի մարդկային բնակարան:

Միայն ծովափին վերայ, անսառում կար մի դատարկութիւն, որին գիմում էին բոլոր արանեանները:

Այն ժամանակ նրա ընկերներից մէկը, նկատելով մի պէքաս, որ եկել էր կերակուր գտնելու միւս աշխունիքի վերայ, որ բաւականի հեռաւոր էր, նրան տառաց.

—Տեսնո՞ւմ էք դուք այս թոշունը: Իրաւամբ այստեղը Պէքանների ճահիճ են անուանել և իմաստ կայ այս անուանակոչութեան մէջ: Ե՛կ այստեղ ժամը տասնեւկէսին, զու պիտի տեսնես Պէքանների թոշելը. աշնանային վերջալոյսի ժամանակն է գա, որպէս ասում է և Սահիծոյ իր մի յանաստեղծութեան մէջ:

Թամոնթարա ժպանեցաւ և ասաց.

—Պէքանների ճահիճ բառերը ոչ մի առընչութիւն չունեն նրանց թոշելու հետ, նրանք ոչ մի կերպով չեն բացատրում թէ այդտեղ բնակում և թոշում են պէքանները: Եթէ բանաստեղծը այս բառերն է ընտրել իրը տիտղոսիր մի բանաստեղծութեան, նա, յայտնի է, սխալուել է:

Պէքանները այստեղ չեն գալիս ոչ ուտելու, ոչ էլ թոշելու: Այստեղի յատկանիշն է նրա խոր միայնու-

թեան երեսյթը, և լաւագոյն կը լինէր նրան անուանել՝ «Մահուայ ծտոփ ճահիճը»:

Մի մարդ որ գտնուում էր ոչ շատ հեռի այն բանաստեղծական արձանագրութիւնից, որ կազմուած էր բանաստեղծութեան տիտղոսից, այս խօսքերը լսելով՝ մի թերահաւատ կերպով ասաց.

—Երբ մենք կգանք այս թոշունի բնակած տեղը, այնտեղ ոչ գտնենք երեսուն ձագ:

Մի ծառայ, որ նախորդի անհասկանալի խօսքերն էր լսել, ասաց.

—Ո՛չ, այն՝ ինչ ող գուք պէքաս էք անուանում կաքաւի նմանող թոշուններ են. դա մի հազուագիւտ անասուն է և ածում է տասներկու հաւկիթ:

Առաջին ծառայն գլուխը թօթուեց.

—Զգիտէք որ այս թոշունները չեն խրտչում՝ մարդու ձայնը լսելիս, թէպէս նրանք բացարձակ միայնութեան մէջ են առըսում:

—Ո՛չ, ոչ:

Եւ մի քար վերցնելով, ձեռքը սեղմեց մի փորձ անելու համար, բայց նա ասաց.

—Երբ մին նշան է առնում, այնուհետ չի տեսնում հեռաւոր առարկայններին: Երկու ծառայնները չհամաձայնուեցին, և թւում էր որ վէճը պիտի չվերջանայ:

Մեծումա Ուճէնստա, ժամանակոյի մտերիմ, ունէր մի երեխայ տաննեչորս առարեկան. նա կոչւում էր Մեծումա Սիմանօ Սուքէ. նրա անբաժան ընկերն էր, նա մերձեցաւ նրանց, երբ իրանց տիրոջ մօտն էին, և նըրանց ասաց.

—Վերջ գրէք այս վիճաբանութեանը. ևս մի նեշ-

տուի ձեզ կը սովորեցնեմ թէ ի՞նչ են նրանք:

Խսկոյն վեր առաւ հագուստի քզանցքը, դուրս հանեց մի նետ, զբաւ աղեղի լարին վերայ, պինդ պինդ քարչեց, և այնքան լաւ նշան առաւ, որ նետը հաղի թունի թիկունքին քսուեց, անհետացաւ ծառերի մէջ:

Թուչունը վախեցաւ և փախաւ. Թամովարա բարկացաւ և դոչեց.

—Դու զեռ երեխայ ես, անում ես այն՝ ինչ որ քեզ չէ հրամայուել, և այսպէս որսը փախցրիր: Կարծում ես որ լաւ բան է արածգ:

Այսպէս խօսեց բարկութեամբ: Սիմանո Սուբէ, նրան այսպէս զայրացած տեսնելով, վայր ձեզ իր աշեղը՝ և ասաց ծառային:

Գնա և նետը բեր ինձ:

Ծառայն, առանց տարակուսելու, ճահիճը զնաց, չառ աշխատեցաւ գտնելու, և այդ՝ նրան յաջողուեց: Սիմանո նրան ընդունելով, յարկալից և երկչուս երեսոյթ առաւ, և տիրոջ մօտ դնալով, նրան ասաց.

—Որովհետեւ այս մարգիկ վիճում էին թէ ի՞նչ թուչուն է դա, և վախ կար՝ որ նրանց վէճը երբէք չկերջանայ, ես միջամտեցի խնդրին վերջ տալու դիտմամբ, համոզուած՝ թէ ճշմարտութիւնը պիտի գտնեմ և վերջ պիտի զնեմ վիճաբանութեանը: Բայց ես չառացի որ թուչունը պիտի սպանէի: Ես բնաւ դիտաւութիւն չանէի վիրաւորելու այս կողմեր ապրող այս կենդանին, որ թէ մեր և թէ բարբարոս երկրների երգերում՝ մնծանօթ է մնացել: Այսպէս, տէր, ես որ ոչ այլ ինչ եմ, բայց մի պատանի, և Տկար-Բազուկ եմ կոչւում, ես հասայ իմ նպատակին: Իմ նետիս ծայրը

գտնում եմ ահա թուշունի մի փետուրը, և այս ցոյց է տալիս՝ թէ նա մեզ մօտ է գտնուում:

Այս յանդուգն խօսքերը աւելի ես բորբոքեցին թամոնթարայի զայրոյթը, որ ասաց.

—Յիմար ես գու: Տիրոջդ այդպէս ես խօսում. նուա ես արձակում իմ ներկայութեանը, հեռանում ես ինձանից. ի՞նչ պիտի տան ուրիշներ. այն՝ թէ ես իրեն ծառայ զործածում եմ անկիրթ և անպիտան արարածներ: Երբ մարդ գառնաս, գու պիտի խանդարես իմ տան կարգը. խնայում եմ քեզ, որովհետեւ դեռ յառաջակողմդ մազեր ես կրում. բայց քեզ կ'ասեմ, որ գուն զրկուեցիր իմ չնորհքներիցս: Հեռացիք:

Այս ասելով նրան ուղղեց մի խիստ ակնարկ:

Սիմանոյ մահացաւ, բայց լուս մնաց և հեռացաւ: Նոյն օր Ուձէնտա, Սիմանոյի հայրը, զրկուեց իր ընկերակցի պաշտօնից: Զգում էր Սիմանոյ որ այնունետեւ զուբկ էր բարեկամութիւնից. գաղտնապէս, ոչինչ ասելով իր հօր, օտար երկիր զաղթեց. նրա բնակութեան տեղը՝ մինչեւ ցարդ անմանօթ է:

Գրեց Ուժեկ թանէֆիքոյ

ՊԱՐԱՀԱՆԴԵՍԸ

ի՞ն.

Ասորական մատենակրութեան մէջ առաջնակարգ
դիբք է զրաւում նիվեմ՝ ծղնաւորը, որ ապրել է Դ.
դարում Քրիստոսից յետոյ:

Միստիք բանաստեղծ, նա զրել է երգեր՝ կրօնա-
կան զգացմունքից ներշնչուած. ներկայացնում ենք
այստեղ նրա մի փոքր գլուխ-գործոցը, որի մէջ նկա-
րագրել է Հերովդէսի տուած մի պարահանդէսը, Յով-
հաննէս Մկրտչի գլխատուիլը, և թագաւորի աղջկայ
մահը:



III.

ՊԱՐԱՀԱՆԴԵՍ

I.

Իր ծննդեան տարեգարձին, Հերովդէս մի շքեղ խնջոյք սարքեց, հրաւիրելով իր թագաւորութեան մեծամեծ նախարարներին և զօրավարներին:...

Երբ նրանք կերան և հարրեցան, թագաւորից խնդրեցին, որ ներս հրաւիրի իր աղջիկն էլ և հրամայի նրան պարել:...

II.

Երբ այդ լսեց Հերովդիադա թագուհին, շատ ուրախացաւ, իր աղջիկը կանչեց իր առաջ, և սկսեց նըրան զարգարել գեղեցիկ գեղեցիկ դոյներով: Նրա վրայ գցեց հագուստներ՝ որ վարդ ու շուշանի էին նմանում, նրան օծեց անուշահոտ իւղերով, նրա աշքերը աւելի ևս սեացրեց մարդասպան ծարիրով, և արուեստով հիւսեց նրա ծամերին:

Լուաց նրա երեսները մաքուր կերպով, այնպէս որ թագաւորի աղջկայ երեսը սկսաւ գեղեցկութեան ձառագայթներ սփռել նրա ոտներին անցուց զարգարուն կօշիկներ պարի համար ողատրաստուած, և նրա զլիի վերայ դրաւ՝ թաճկադին դոհարներից շինուած մի պրակ:

IV.

Այնուհետև մայրը, սկսեց նրան սովորեցնել. «Եղի ջիկս, ուրախացներ քո մօրը քո գեղեցիկ պարովք: Հասաւ ժամանակը մարդարէին» (Մկրտչի) զլուխը կորելու... Ծափ զարկ թագաւորին ձեռներովդ, և ոտներովդ վեր վեր թոփիր, և ապա բոլորաձեւ ման եկուր զարմացնելով թագաւորին և իշխաններին»...

V.

Աղջիկը պատասխան տուեց. «Համբերիր, և ուրախ կաց, ես այսօր պիտի հնձեմ այն հասկը՝ որ անհցաւ անապատում, ես սուր պիտի լինիմ նրա զլիի համար, ես աղեղ պիտի լինիմ և նետերովս նրան սպանեմ. ես ծով պիտի լինիմ՝ նրան խեղդելու համար, նստէ, մայրիկ, համբերիր և ուրախ կաց»:

VI.

Եւ նա ճանապարհ ընկաւ պարահանդէսի գահին
ճը գնալու համար: Խոկոյն դեերը նրան շրջապատեցին
իրանց գնդերով. խոկ սատանան էլ գնում էր ամենից
առաջ, իրբև զօրավար:

Զարդարուած էր՝ ծաղիկներով բանուած ընափր
հագուստներով, և իւղերի անոյշ հոտը բուրում էր նը-
բա չուրչ:

VII.

Այսպէս հագուած սպուած նա մտաւ խնջոյքի
գահին. հանդիսականները նրան նայեցան, և ամէնքն
էլ մնացին ափշած. պարից առաջ նրա գեղեցկութիւնը
գովում էին, և զարմանում նրա զարդարանքների նուրբ
ճաշակին վերայ:

VIII.

Ամենից առաջ, աղջիկը երկրպագութիւն արաւ
թագաւորին: Նա էլ հրաման տուեց պարելու:

Ծափ զարկաւ ձեռքերովը, և սաներովը սկսեց
վեր վեր թռչել. բայց արաւ իր գլուխը, և գերեց թաշ
զաւորի և հանդիսականների սիրաը. նրա դէպի վայր

նայող աչքերը զօրավարների խելքը գլխից թոցրին,
մի անոյշ ժպիտ, նրա շրթունքների շուրջ գծուած,
ծաղրի առարկայ զարձնում էր թագաւորին և իշխան-
ներին:

X.

Այդ ծիծաղը վերջացել է այժմ, բայց նրա դա-
սաստանը պահուած է յաւիտենականութեան ծոցի մէջ:
Նրա գեղեցկութեան և պարի վերայ հեռացաւ
թագաւորը, երգմունքով նա խոսանում էր հանդի-
սականների ներկայութեանը՝ տալ նրան ինչ և խնդրե-
իր գանձերից, ոսկուց և արծաթից, մինչև իր թագա-
ւորութեան կէսը:

X.

Այն ժամանակ իժը խօսեց օձին և տաց. «Թոյլ
առնել գնամ մօրս հարցնելու... մայրը, տաց. Առ ար-
ծաթէ պնակը, գնա արքունիք, և տաց. «ինդրում և՛
այս պնակի մէջ Յովհաննէսի գլուխը...» (Թագաւորի
աղջիկը ստացաւ՝ ինչ որ փափագում էր), ձեռքերի մէջ
տուած գեղեցիկ աղաւնին, որ այնքան անոյշ երգեր էր
մըմնջում անապատում, գնաց իր մօրը և արիւնաշա-
զախ գլուխը՝ նրան ընծայեց:

XI.

Նա ընդունեց ուրախութեամբ... զլուխը հարուտածում էր և ասում. «Անմիտների ծնունդ, կարծում էիր ինձ յաղթել, ևս իմ աղջկայ ձեռքով յաղթեցի քեզ»...

Էւ ապա սատանայների կինը ասաց իր աղջկան. «Վաղն էլ թագաւորը խնջուք պիտի աայ իշխաններին, և քեզ էլ պիտի հրամայի պարել հանդիսականների առաջ. դու նրանից ոսկի, արծաթ, և թանկագին շորեր ինդրիր, ոչ մարդու արիւն»:

XII.

Երկրորդ օր՝ խորշակը փչեց, և ջերմ եղաւ օդը. հանդիսականները նեղում էին պարահանդէսի դաշլիճում. կարող չեղան համբերելու: Ելան արքունիքից և մանելով վայելուչ բուրաստանների մէջ, բաղմեցան այնտեղ՝ որ կոչւում էր Զրերի ժողով:

Ժամը հասաւ, և թագաւորը հրաման տուեց կանչել աղջկան. նա էլ եկաւ, երկրպագութիւն արաւ թագաւորին և իշխաններին: Երբ նրան հրամայեցին խաղալ հանդիսականների առաջ, նա մեծ հապատութեամբ սկսեց հեղիկ, նազելի կերպով շարժել իր պարանոցը, բոլոր մարմնովը ման էր գալիս բոլորաձև, ոտքերով գետին էր դոփում, իր ծովագոյն վիրաւորող աչքերը շուրջը ման ածելով:

XIII.

Թագաւորը ասաց նրան. «Ինդրիր ինձանից ոսկի և արծաթ, և ես իսկոյն քեզ կը տամ. միայն մարդու արիւն մի ինդրիր, պիտի չտամ: Որովհետեւ այս գիշեր տանջուեցի զարհուրելի և այլանդակ երազներով, քեզ մտիկ տուած լինելուս և Յովհաննէսը զլխտած լինելուս պատճառով: Երկնքի հրեշտակները ինձ խփում են հրեղէն գաւազաններով:

XIV.

Իսկ աղջիկը, իր անհամեստ արուեստին վերայ հպարտացած, գուրս ելաւ հանդիսականների միջից, պարելով գնում, հեռանում էր նրանցից՝ մինչև սառուցեալ ջրի ափունքը և կամենում էր կօշիկներովը՝ սառի վերայ պարել: Այն ժամանակ թագաւորն և իշխանները գոչեցին. Ճակի սառին վերայ մի բարձրանար, կօշիկդ քեզ կը սահեցնի. Ջերմութենից սառը թուլացել է, չէ կարող քեզ կրել:

XV.

Նա մտիկ չտուեց նրանց խրատին. արգարի արիւնը վրէժ էր պահանջում. հպարտութեամբ ելաւ

սառած լճին վերայ և սկսեց պարել, կամենալով մի
նոր բան ցոյց տալ թագաւորին՝ և նրա զօրքերին։ Եւ
իսկոյն Աստուծոյ բարկութիւնը հասաւ նորա վերայ։
սառը համբերութիւնը չունեցաւ նրա անհամութիւն-
ները աւելի երկար տեսնելու, և ջրերն էլ նրա լրտւ-
թեան դիմանալու։

XXVI.

Իսկոյն սառը հալուեց նրա սաների ներքոյ, և
ծովը նրա պղծութիւնը ընկղմեց։

Սառը սրի նման նրա գլուխը կտրեց, և նրա
զզուելի մարմինը՝ անհետացաւ լճակում։

Ջրերի սողունները ժողովւեցան և նրա պիզծ
անդամները պաշարեցին. պատառեցին նրա բեհեղներն
և ծիրանիներին։ Բզբառում և լափում էին նրա արիւն-
լուայ մարմինը։ Ալիքների վերայ ծփծփում էր նրա
վարսագեղ գլուխը։

XXVII.

Թագաւորը սարսափից լուռ էր մնում, հրաման
տուեց ասել թագուհուն. երէկուայ պնակը տուր, որ-
պէսզի թագաւորի ընծայն քեզ ուղարկուի։

Նրա վերայ զետեղեցին իր աղջկայ գլուխը, տա-
րին նրան և ասացին։

—Ահա, այս ընծայն է քեզ ուղարկում... երկնա-
ւոր թագաւորը։

Գրեց Եփրեմ ձգնաւոր, Ասորի

ՄԱՅԻՍԻ ԳԻՂԵՐ

Ի՞.

Իշխան Ռաֆայէլ էրիսթով, վրաց ազգացին բառաստեղծ, ծնուել է 1824-ին Թիֆլիսում, նա վարել է Մինգրէլիայի գաւառապետի (1856) և Քութայիսի դատավորի (1869) պաշտօնը: Նա գրել մի բուսաբանական բառարանն վրացերէն-լատիներէն-ռուսական լեզուներով: Նրա թատերգութիւնների մէջ նշանաւոր է «Ամօր հանաքը», քնարերգութիւնների մէջ՝ «Խէվսուրների հայրէնիքը», «Արտ», «Թինայի տիրութիւնը», «Մայսի գիշեր»:



ՄԱՅԻՍԻ ԳԻՇԵՐ

I.

Մայիսի գիշեր թաւխաչուի, անոյշ,
Տըխրած՝ ողջունում է քեզ, արշալոյ,
Փայլփլուն աստղերն երկընքի վերայ,
Մելամաղձ սըրաով հանգում են ահա:

II.

Սիզտակ արուսնակն յանկարծ կ'երիայ,
Լուսինն է նըրան յանձնում իրեն գահ:
Ման դալիս է զով առտըւայ գեփիւռ,
Բերելով ծաղկանց հոար քաղցրաբոյք:

III.

Աքաղաղներն էլ երգում են աշխոյժ.
«Կուկիկնաւ, մըշակ, բացուեց արշալոյ»,
Ճըռվողում են, նա, թըռչնիկն ամէն.
Յուզուած՝ ըլնութեան գեղը գովում են:

IV.

«Անուշիկ բնութիւն, ի՞նչ աղոր ես դուն,
Տեսնում ենք քո մէջ Տիրոջ զօրութիւն.
Նըրա ձեռքը քեզ ըստեղծեց, ով կոյս.
Ո՞ր մըաքում մընում է գեռ տարակոյս»:

Թրեց Երիսրոյ Վլագի

Փ Ւ Ձ Ե Ռ Ը

ԻԵ.



Իրու նմոյշ արաբական գրականութեան, ներկա-
յացնում ենք այս գեղեցիկ քնարերգութիւնը:

Արաբացիների կարաւանը անապատում գնալիս,
ճանապարհի ձանձրոյթը մեղմացնում էր մարդ տալով
մի երաժշտի երգերին և ածած եղանակներին:

«Փիչերն» էլ անապատում է երգուեր, ասողերի
ներքոյ.

Նրա հեղինակը անյայտ է:



Գ Ի Շ Ե Ր

I.

Ո՞վ գիշեր, ո՞ր զգայուն սիրաը չի ողջունում քո
գալուստը և չի սիրում քո փափուկ լոյսը աւելի քան
արեի չլացնող ձառագայթները:

Երբ տեսնում ես մի տառապեալ ընտանիք, գը-
ցում ես նորա վիրայ քո բարերար պատմուճանի քը-
զանցքը. չկայ մի արտասուք՝ որին չցամաքեցնեն քո
անոյշ զեփիւոները:

II.

Ո՞վ գիշեր, զու հաւասար սիրով փայփայում ես
և բուրաստանների փափուկ վարդերին և անտառների
փշոս թվերին:

Քո իշխանութիւնը հաւասար է Աստծու իշխա-
նութեանը, զու նրա հանգիստը, զու նրա բարեկամները.

ևս. քո խաւարը սրատում է հաւասարապէս հիւղն և պալատը, զօրաւորն և անկարողը, հարուստի փառաւոր պալատը, աղքատին խեղճուկ հիւղը:

III.

Ո՞վ գիշեր, ո՞վ պիտի միսիթարէր իր միակ որդին կորցնող մայրը՝ եթէ դու չլինէիր: Յուսահատի արտեանուների վրայ գթութեամբ թափում ես քունը. նա մահուան է նմանում. մեզ անց է կացնում վիշտերի ծովից, միացնում մեր սիրելիների հետ. նըրանք կորան, տւող, թողնելով մեզ միայնակ և աբրաւում այս աշխարհի ափունքների վերայ:

IV.

Ո՞վ գիշեր, այն բողէում երբ բանտեալը դիտում է իր շղթայներին, և յուսահատուած վայր ընկնում, իսկոյն հասնում ես դու, քո քօղը զցում նրա երկարեայ կտապանքների, և կապոյտ սպիների վերայ:

Ե՞ն ժամանակ յոյսերը, քո ստուերի ներքի պարում են բանտեալին շուրջը, և անոյշ երազներով՝ նրա գառնութիւններին մեղմացնում:

V.

Ո՞վ գիշեր, երբ մարդն առաջին անգամ իր երախտագիտութեան աղօթքների խնկերը առ Աստուած

բարձրացրեց, դու թագաւորեցիր երկրի վերայ:

Ոչ մի ամպ չէր մթնեցնում քո ծոցիդ գարդերին, բիւրաւոր աստղերին. քո խոր լուսթիւնը բարձրացնում էր մարդու սիրալը՝ դէպի տիեզերքի թագնուած աղբիւրը:

Սփռում էիր նրա սրտի վերայ, որպէս այժմ ծառ զիկների, սիրոյ և յօյսի ցօղը: Աստուած իր աչքերին երկիր խոնարհեցրեց, միարը սովորեցրեց շրթունքներին՝ մի երախտագիտութեան երգ:

VI.

Ո՞վ գիշեր, օրը թշուաների համար անգութ է, անգութ կերպով ցայց է տալիս նրանց ոտների համարը, և առաջնորդում նրանց ուղղուած նետերին:

Դու թաքնւում ես, որպէս մի երկշուռ ճագար. նրանք քեզ են կանչում, քեզ սպասում անհամբեր. ժանգուած ես դու նրանց թշուառութեան զէնքերին. նրանք այնքան երկիւղ չեն ազդում երբ քո իշխանութեան ժամն է հասնում:

VII.

Ո՞վ գիշեր, նախանձու աստղի հեռանալուց յիշայ դու պարզեւում ես մեզ խաղաղութիւնը,

երբ անհուն Ովկիանոսից բիւրաւոր ձայներ բարձրանում են դէպի վեր, անկարող զայրովթի վերջին ձիգով, ուղարկում է մի կարմիր ճառագալթ իրրի սպանալիք:

Հանդիստ առէք, ու նաւավարներ, զիշերն առաւ
իշխանութեան դրօշակը, թոյլ տուէք չուաններին և
թիշերին, ալիքներն էլ զգում են նրա խաղաղեցնող աղ-
ուցութիւնը:

VIII.

Ո՞վ զիշեր, դու անսահման ես ծովի նման և նրա
պէս վտանգաւոր, ահոելի ես դու, ինչպէս անսալատ-
ների մերկութիւնը:

Զկայ այնտեղ մի հիւրասէր արմաւենի, որ իր
ձզերի հովանին ընծայի այրւող ուղեորին. չկայ մի
աղբիւր՝ որ նրա չորացած շրթունքներին փափկացնի,
չկայ մի ժայռ, որ պանդխատի վահանը լինի, երբ ա-
ւազեայ ամպեր գան նրան ծածկելու:

Բայց ահա երեւում ես դու. քո հովանին մեղմում
է երկնքի ջերմութիւնը, անձրեւում է, զովացնում ծա-
րաւած կոկորդներին, և թեաւորուած աւազը իր ըն-
թացքից գաղարում:

Հէնց՝ այս պատճառով մեր նախահայրերը՝ քեզ
կոչեցին Մայր անօպատի. նրանց աշքերը միշտ փայ-
լում էին ուրախութեամբ, երբ դուն յաղթանակն էիր
տանում արեգակն վերայ:

IX.

Ո՞վ զիշեր, մըքան ճարտարախօս է քո լոյսը. նա
մըմնջում է մեր հոգիներում՝ խաղաղութեան և սիրոյ
խօսքեր:

Հաւատքը վերակենդանում է. իսլամի որդիները
հիանում են և յափշտակւում, երբ քո վեղեցիկ լոյսը
արծաթազօծում է մինարէների կատարներին, և փայ-
լեցնում նրանց վերայ կանգնած լուսինը՝ որ քո կնիքն
է և քո թագուհին:

X.

Ո՞վ զիշեր, երբ իմ գերեղմանը լքուած մնայ և
աւերակ, ինդրելով, մարդկանց կեղծ բարեկամութե-
նից, մի ընդունայն արտասուք, այցելիք նրան զթու-
թեամբ, և այն հոգակոշաբերին, ուր իմ աճիւնը պիտի
հանգչի, զարգարիք նոր խոտերով և նոր ծաղկներով:



Կ Ա Ր Ա Խ Ի Ե Ր Ո Փ

իզ.

ԿՐՈՒԹԻ ԵՐԹ

Գամառ Քաթիպայի, Ալիշանի, Նալբանդեանցի
Էրգերը ծանօթ լիննլով ամէնքին, մեր հաւաքածոյքի
մէջ կամեցանք զետեղել մի ինչ որ ամենանոր բան.
Եզիպտահայ բանաստեղծ Վարուժանի «Կոռի երթ»-ը
(տպուած Շիրակ թերթում): Նախապէս այստեղ զբել
էինք «Մայր Արաքսի»-ն, որ վազուց ծանօթ է եղել
հայ ժողովրդին, և այս պատճառով դուրս ձգուեց:
«Կոռի երթ»-ը չնշում է դիւցազնութիւն և զայրոյթ:



Երթանք, երթանք, Հայուհի,
Դու, ով արծուիկ, Տեղեղատին բոմբիւնով,
Լերան կողին օրօր երգուած ու մեծցած,
Երթանք արգար բախումին:

Անդին, անդին, կը մորթեն,
Կեանքն՝ արտին մէջ, և զազափարը՝ զանկին,
Դեռ արեւն շողը սերմին չը հասած՝
Անդին, անդին կը մորթեն:

Ով սեաչուի, աւելի լորր սիրով քեզ
Պիտի սիրեմ, եթէ մէկտեղ տրոփին
Բու սօս ձայիկդ իմ որձիս:
Կիոցը թնդ, որուն չաչող ոլորտներ
Ներչնչեցին քեզ երգն՝ հանդարա սրտերու.
Ա՛լ թող երդիքն՝ որուն վրայ
Կուռճանայիր գարնան արձակ հովերէն,
Մերթ ոըրտաթունդ վասեակիմ հէզ ձըւոցէն
Զոր ցինն արտին մէջ կտցանար կը խեղդէր.

II.

Յիշէ այն լեռն, ուր քեզ առջի հեղ տեսայ
Նախ վարդի թուփ կարծելով,
Մենք անկէ մութ գիշերով վար պիտ իջնանք,
Նըժոյդ հեծած, քովէ քով,
Խաւարակուռ դաշտին մէջ,
Դաշոյնի ցուրտ փայլին հետ, ով մարտկուհիս.
Շանթերն աչքիդ ցայտած վրէժի երկնքէդ՝
Ռազմի ճամբան պիտ ցոյց տան:
Մազերդ արձակ պիտի նետես ուսերուգ,
Թողլով որ գոտ մրրիկն անոնց մէջ երգէ
Բարբարոս երգը բնութեան:
Եւ երբ ասանկ ընթանանք,
Երբ նժոյգիդ մէն մի խրոխա սստումին
Մկանունքներդ ցունցերէն զօրեղնան,
Երբ այն ծաղիկն՝ որ լանջքիդ բով պիտ բուրէր,
Մմբակի տակ ճմլուի,
Ես այն տեհն գոյուանքի տեղ փափկասուն,
Աւ ասահով պիտ պատրաստուիմ կորովի
Փոթորկատիպ համբոյրիդ:

III.

Ի՞նչ, երբ տեսար զրասեղանիս միշտ առջև
Այս իմ մոռյլ հողիս, ով կոյս, կարծեցիր
Թէ պիտի հեղդգ մընայ միշտ:

Ի՞նչ, կարծեցիր թէ չէմ կրնար ես ընել
Գրիչըս՝ դաշոյն, և կաղամարըս՝ կարմիր
Սիրտը դազան սոսիխին:
Ես լաւ, ոհ լաւ, կրնամ երազը փոխել
Մերկացնելով իր զեփիւոէ ըզգեստէն՝
Աստղեր ցընցող մրրիկն անոր հազըընել:
Երբոր անդին միշտ կուլան
Զի կը մեռնին, և կը մեռնին՝ զի կուլան՝
Ինձմէ հեռու թուղթ և զիրք,—
Տանգէն բոցին ես կը նետեմ,
Գերեզմաննոց կը նետեմ ես
Դուրեհանը՝ զոր այնքան տահն ես սիրեցի:

IV.

Ազւոն աղջիկ, ուրիշներուն արցունքին
Գիտես, որչափ աշխարհս է անտարրեր,
Մենք իր քունով չը նընջենք.
Իր վերմակին տակ տըռփոտ
Աստղիկը թոյլ կը բոզանայ, լլկւած
Թեմիսը հոն նոր Բազոսներ կը ծընի:

V.

Բըզըքտուած, արիւնոտ,
Հոն վարը մեղ կը սպասեն,
Ես կապարձիս մէջ զընելու չը մոոցաւ

Հրաշէկ չանթերը՝ Արէսի երկնքին.
Հիմա սիրոյ նայուածքէ մ' իսկ ուժնդ եմ:
Եւ աննըկուն՝ ճակատագրէն աւելի,
Քանի որ կոյսն է ընկերու,
Սէրն՝ հրաթե ունվիրաս,
Դու, ով վարդ կոյս, հոն լափող բոց պիտ ըլլաս,
Դու ով կաքաւ, կարչնեղ արծիւ պիտ ըլլաս,
Քանի որ այրն է ընկերու,
Ու գաղափարն՝ ունվիրադ:—
Ես թերևս հոն պիտի մեռնիմ (ինչո՞ւ չէ).
Երկար ատեն բաղձացի
Արիւնն ինձի վերմակ ընել, բարձ ընել
Կողը ձիուս՝ ինկած վերքի խրխինջով:
Մեռցնելէ վերջ մեռնել
Երկար ատեն բաղձացի:

VII.

Լուսնին վըկայ նայուածքին տակ քանի մ' հեղ
Լեցուել է վերջ ոստիին արիւնով
Մեծ սաղաւաբալ՝ Հայկի,
Հոգ չէ թէ հոն ես իյնամ.
Տեսնելէ վերջ որրը յագ, յագն՝ ապահով,
Մըշակն անվախ արտին մէջ, արտն՝ անաւեր,
Մերը ազատ, Ազատութիւնն յառաջդէմ,
Հոգ չէ թէ այսպէս իյնամ:
Գիտեմ որ իմ շիրմիս քող

Պիտի երբէք օձ չըսողայ, պիտի միշտ
Կապոյտ մընայ անմողուկոյ՝ ով Հայուհիս,
Եւ յաղթական առիւծ մ' հոն թաթը դրած,
Բորենիի մը կուրծքին
Աստղերն ի վեր, լիաթոք,
Պիտի յաւէտ մըոքնչէ...

Գրեց Գանիել Վարուժան Հայ



ՀՕՐ ՄԵՇՄԱՆԸ

Ի Պ Ա Ր Գ Ա Ւ Հ Ե Տ

ԻԵ.

Պարսկական երեակայութիւնը հռչակուած է իր ճոխութեամբ Եւրոպայում էլ: Նրանց բանաստեղծական գրականութիւնը թարգմանուել է ամէն, լեզուով:

Ֆիրդուսի՝ կոչւում է Նրանց Հոմերոսը, ապրում էր ժԱ, գարում. մի շահի հրամանով՝ հաւաքել է ժողովրդական երգերին և կազմել Պարսիկների ազգային պատմութիւնը, նրան անուանելով Նահնամի (թագաւորների գիրք), որից ներկայացնում ենք զիւցակն Ռոստումի մենամարտը իր Զոհրապ որդու հետ. երկուքն էլ զբահաւորուած լինելով՝ չեն ճանաչում միշտանց, և հայրը սպանում է որդուն:

Թարգմանութիւնն է՝ Սամու ել Գիւլգաւեանցի:

ՀՕՐ ՄԵՆԱՄԱՐՏԸ ԻՐ ՈՐԴՈՒ ՀԵՏ

Երբ Ռոստումը այն ջուր խմած տեղից դաշտը յետ գնաց, Հոգս ու վշտով սիրտը լի և դէմքը գունատ ու դեղնած, Սէկ Սոհրաբը քըշում էր ձին, զալիս որպէս հարբած փիդ, Գալար պարանն կռնից կախած, ձեռում րունած իւր աղեղ, Վարագաբար վասպելով, առիւծի պէս մոմուալով, Աշխարհք չափող իւր ձիովը՝ աշխարհս նա քանդելով: Տեսաւ Ռոստումն նրա կերպը, կըսեց չափեց կոռելու, Որքան նայեց, շուար մնաց նրա հետը մրցելու: Իսկ Սոհրաբը, երբ հեռուից տեսաւ նորէն Ռոստումին, Զահելութիւն փշեց սրտում եռանդնայոյզ իւր քամին, Եւ մօտեցաւ ու մի հայեացք զցեց վըրան նա յուշով, Եւ նկատեց տեսաւ նըրան նոյն փառքովը և ուժով. Նրան ասաց. «Ո՞վ առիւծի ճանկիցը դու ազատուած, Ինչի՞ զարձեալ սիրտ արեցիր եկար առաջս անկասկած, Դու, որ դէպի ճշմարտութիւն չես զարձնում քո երես, Ասա ինձի, ինչի՞ նորէն դու իմ առջի եկել ես:

Երկու անգամ կռուի գործից ես քեզ տուի ժամանակ,
Ծերութեանդ ես բաշխելով, թողեցի իմ յաղթանակ:
ԱՌէ քաջ, ասաց Ռոստամն, այլպէս խօսքեր արի քաջ
մարդիկ
ԶԵՆ խօսիլ, այլ ջահելութիւնն արել է քեզ ուսումիկ:
Դու կը ահանես աչքովդ այժմ քո ասած այս ծեր քա-
յլց
Քեզ ինչ կը դայ, զու որ ուժեղ ես առաւել առեւծից:
Վայ է երրոր չարժեց իրեն բարկութիւնը՝ բախար
չար,
Նրա առջե մոմ կը դասնայ ապաստը որձաքար:
Սյսունեան միւս անգամ ձիերը պինդ կապեցին,
Եւ չարակամ ձախող բախար պտոյտ արեց զլիսերին:
Ակսեցին գոտեմարտել, զլուխ զլիի, ձեռ ձեռին,
Երկուքն էլ իրար կաշեայ գօտիներից բռնեցին:
Բայց այս անգամ սպահապետ և կորովի Սոհրաբին
Կարծես կապեց ըրջուղ բարձր ճախարակը երկնային,
Ելյդ ժամիցը մինչեւ արեն երկար ստուեր արձակեց,
Սա նրա և նա էլ սրա վրայ ոյժը ողջ թափեց.
Էյնքան, որքան որ գրգռեց ձախորդ բախար չարա-
բաստ,
Որ մի կակուղ մոմի ճմուռ դասնայ լեռը պողովատ:
Տիրեց Ռոստամն, բացաւ մեկնեց զցեց ճանկը կորովի,
Բռնեց ընձի նման կուող վիզ ու զլուխ Սոհրաբի,
Եւ ոլորեց կոսարեց մէջը կտրիճ պատանու.
Ճգնաժամի օրհասն հասաւ, ոյժ չտուեց տոկալու.
Եւ առիւծի պէս Ռոստամը զարկեց գեանին Սոհրաբին,
Նստեց վրան, զիտաց որ նա չի մնալու իւր տակին,
Իսկոյն թեթեւ սուր դաշնակը մէջքից հանեց պլոկեց,


Եւ լրջամիտ որդու կողը խրեց, ճղեց, պատառեց,
Երջուեց Սոհրաբն և իւր ճղուած սրտից ցաւով ախ
քաշեց
Զար ու բարի բանից նրա մտածմունքը դադարեց.
Եւ Ռոստամին ասաց. «Իմ վրայ ինձնից հասաւ այս
չարիք,
Ժամանակը յանձնեցի քո ձեռը գըրան բանալիք...
Նշան էր տւել մայրս, որ ես գտնեմ իմ հօրս,
Կեանը զահուեց իսէր նորա, խաւարելով իմ օրս.
Պտրում էի անդադար տեսնեմ աչքով իւր երես.
Այդ փափազիս էլ ես այստեղ հոգիս տւի հէնց այսպէս,
Աւազ, կըրած իմ վէտերին, ափսոս, անցան շուտ ան-
պէտ,
Եւ նրանցում ես չտեսայ իմ հօրս, և արդ թէպէտ
Դու ձուկ դառնաս, մտնիս ջրի տակը լողաս խորքի-
րում,
Կամ պիշերուայ պէս սկութեան մթին խորին խաւա-
րում,
Եւ թէկուզի գնաս զառնաս զու մի աստղ երկնքում,
Գետնից կարես սուրը արեի սէրը, լոյս և ջերմութիւն,
Խնզը պիտի իմ հայրն ես քեզնից իմ քէնն ամէն տեղ,
Երրոր տեսնի որ իմ բարձու հողի կոշտ է այժմ, այս-
տեղ...
Ահա մէկը այն մեծանուն և ոչի ու պերճ մարդկանցից
Կը տանի ևս Ռոստամի մօտ իմ նշանը իմ մօրից,
Կ'ասի Սոհրաբն աստ սպանուեց և ընկած է սկ, թըշ-
ուառ
Որը, որպէս խնդրակ, յուզում պտրում էր միշտ քեզ,
ով հայր.

Հաեց թէ չէ մոստամը այդ, դարձաւ զլուխն մոայլիս,
Աշխարհք աչքիս խաւարեց և մթնեց որպէս ու զիշեր.
Նուազեց և ուժաթափուեց, յուշաթափուեց անըլգաց,
Եւ վայր ընկաւ գետին որպէս չնչասպառ կիսամտհ:
Յետոյ, յետոյ որ նա յուշի եկաւ, մի քիչ սթափուեց,
Լաց ու կածով, վայնասունով նա Սոհրաբին հարցրեց.
«Կարճ ասա ինձ՝ տեսնեմ զու ինչ նշան ունես մոստամից,
Անունս թող վերանայ և կարճուի ամէն մեծերից,
Որովհետեւ ես ինքս եմ մոստամն, անունս չիք դառնայ,
Սամի որդին թող ողբասաց նստացնի զլիխն լայ:
Ասաց գոչեց գառըն ցաւով, փետեց գլխի իւր մազեր,
Եւ բորբոքուեց որտի կրակն, արիւնն եռաց տակն
իվեր...
Երբ այդ լոեց Սոհրաբը և տեսու այդ կերպ մոստամին,
Ոյցը քաղաքեց, ուշը թուաւ և վայր ընկաւ նա գետին.
«Աւազ, միթէ ուրեմն դռն ես, մոստամը, Սոհրաբը
Ասաց, ինձ խուն սպանեցիր քո վատ բարբի դըրգ-
մամբը...
Արդ զրահիս կապը լուծիր, բաց գու նրա տակինը,
Եւ նայիր տես մերկ բացայայտ լուսափայլ իմ մար-
մինը,
Իմ բազուկին կապած կայ քո ինքնանկար մի մրհակ,
Նայիր, տես ինչ տեսաւ հիմտ հօրից աչքովն իւր զա-
ւակ,
Երբ զօրքի զափի ձայնը վեր բարձրացաւ իմ զանից,
Եկաւ մայրս իմ առջևս, երկու այտերն արնալից.
Նրա հոգին իմ այս զալուս յօժար չէր, այլ խոսված.

Նա մի մրհակ կապեց իմ այս աջ բազուկիս և ասաց.
«Ահա, Սոհրաբ, քեզ առ պահիր հօրիցդ այս յիշատակ,
Ա՛յս երբ և ինչ բանի քեզ այդ կը զայ պէտք իւր ժա-
մանակ,
Այժմ բանը պայքար զարձաւ, բանը բանից էլ անցաւ,
Որդին իւր հօր աչքի առաջ, թըշուառացաւ, վերջացաւ»:
Երբ մոստամը բացաւ զրահն և մրհակը նա տեսաւ,
Բոլոր վրի հագուստները ձղեց, կոծեց, լաց եղաւ.
Եւ ողբալով կանչեց, «Ո՛վիմ ձեռովն զու սպանուած,
Կարիճ, սրտոտ Սոհրաբ, ամէն զօրագնդում միշտ գով-
ուած»,
Ասում էր և արիւն արցունք թափում, փետում մազերը,
Գլխուն ցանում հող, արցունքի ջուրն սղողում այտերը:
Էլ աւելի վատ է, ասաց Սոհրաբն, այգպէս կոծել լաւ,
Պէտք չէ երեսն երկու աչքի աղի ջրով լուսնալ.
Քեզ այժմ այգպէս սպանելուց ի՞նչ օգուտ և ուժը չահ.
Այսպէս եղաւ և այս էր ինձ լինելու բանն ապագայ»:

Գրեց Ֆիրդուսի Պարսիկ





316

2013



